ԼԳԲՏ
ԷՄԻԳՐԱՑԻԱՅԻ
ԱԶՈԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎՐԱ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հիմնական հասկացությունների սահմանում 2

Նախաբան 4

Նախագծի նկարագրություն 8

Մաս 1. ԼԳԲՏ մարդկանց էմիգրացիայի նպաստող գործոնները, առանձնահատկությունները, հետևանքները 12

Էմիգրացիայի ընդհանուր խթանիչ գործոնները 13

Հոմոֆոբիա և ԼԳԲՏ էմիգրացիա 17

Էմիգրացիայի ընդհանուր խթանիչ գործոնները ԼԳԲՏ մարդկանց դեպքում 22

ԼԳԲՏ մարդկանց էմիգրացիային առանձնահատուկ խթանիչ գործոնները 24

ԼԳԲՏ մարդկանց էմիգրացիայի այլ խթանիչ գործոններ 36

Կապեր Հայաստանի հետ. տրանսֆերտներ 39

ԼԳԲՏ մարդկանց արտագաղթի հետևանքները 41

Մաս 2. էմիգրացիայի տնտեսական ազդեցությունները 47

Կրթության համար հասարակության կատարած ներդրումների կորստի հաշվարկը 55

ՀՆԱ–ի կորուստն ու բյուջեի՝ չստացված եկամուտների հաշվարկը 64

Եզրակացություններ և առաջարկներ 80

ԼԳԲՏ մարդկանց էմիգրացիայի նվազեցման պայմանները 83

ԼԳԲՏ մարդկանց էմիգրացիայի նվազեցմանը միտված քայլեր 91

Հավելված 93

Հավելված 1. Խտրականության տեսակներն աշխատաշուկայում 94

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Խտրականություն – տարբերակման, բացառման, սահմանափակման կամ նախապատվության դրսևորում է, որը հանգեցնում է որոշակի հատկանիշով օժտված անձի համար նվազ բարենպաստ իրավիճակի ստեղծմանը:

ԼԳԲՏ – հապավում լեսբի (նույնասեռական կին), գեյ (նույնասեռական տղամարդ), բիսեքսուալ (երկսեռական), տրանսգենդեր (գենդերափոխ) անձանց համար:

ԼԳԲՏ համայնք – լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց համայնք, որը միավորված է ընդհանուր հետաքրքրություններով, խնդիրներով և նպատակներով: Այն իր հերթին բաղկացած է տարբեր ենթահամայնքներից, խմբերից և հանրույթներից:

Սեռական կողմնորոշում – վերաբերում է յուրաքանչյուր անձի խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությանը, ինտիմ և սեռական հարաբերություններին՝ այլ կամ նույն գենդերի անձանց նկատմամբ:

Նույնասեռական/ հոմոսեքսուալ (լեսբի կամ գեյ) – վերաբերում է յուրաքանչյուր անձի խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությանը, ինտիմ և սեռական հարաբերություններին՝ նույն գենդերի անձանց նկատմամբ:

Բիսեքսուալ (երկսեռական) – անձ, ով զգացմունքային և/կամ սեռական գրավչություն ունի մեկից ավելի սեռերի նկատմամբ:

Հետերոսեքսուալ (տարասեռական) – վերաբերում է յուրաքանչյուր անձի խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությանը, ինտիմ և սեռական հարաբերություններին՝ այլ գենդերի անձանց նկատմամբ:

Տրանսգենդեր (գենդերափոխ) – վերաբերում է այն տրանս անձնանց, ովքեր մշտապես ապրում են իրենց նախընտրած գենդերին համապատասխան. բժշկական միջամտության ենթարկվելը պարտադիր պայման չէ: Այս հետազոտության մեջ այն օգտագործված է որպես ընդհանրական տերմին՝ նկատի ունենալով այն բոլոր մարդկանց, ում գենդերային ինքնությունը և/կամ գենդերային արտահայտումը տարբերվում է ծնունդի ժամանակ նշված սեռից:

Գենդեր – վերաբերում է մարդկանց առնականության և կանացիության ներքին ընկալմանը և փորձին, նաև հասարակական կառուցվածքին, որտեղ սահմանվում են որոշակի վարքագծեր տղամարդկանց և կանանց դերերի համար՝ կախված պատմությունից, հասարակություններից, մշակույթներից և դասակարգերից: Գենդերը կապված է հասարակության ակնկալիքների հետ և լոկ կենսաբանական հարց չէ:

Գենդերային ինքնություն – վերաբերում է յուրաքանչյուր անձի կողմից իր գենդերի ներքին ընկալմանը և անհատական փորձին, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան ժամանակ տրված սեռին՝ ներառյալ սեփական մարմնի ընկալումը և գենդերային այլ արտահայտումները՝ հագուստը, խոսքը և պահելաձևը:

Սեռականություն – յուրաքանչյուր անձի կենսաբանական, մտավոր, վարքագծային և սոցիալական բնութագրիչների ամբողջությունը, որը սահմանում է մարդու ինքնությունը, վարքագիծը, կերպարն ու դերը որպես անհատ և որպես հասարակության անդամ:

Հոմոֆոբիա – իռացիոնալ վախ, հակակրանք կամ ատելություն նույնասեռականության, նույնասեռական կամ այդպիսին ընկալվող անձանց նկատմամբ: Սույն հետազոտության մեջ հոմոֆոբիա հասկացությունն ավելի լայն է կիրառվում՝ ներառելով ԼԳԲՏ անձանց և ԼԳԲՏ համայնքի նկատմամբ խտրականությունը:

Տնտեսական ցուցանիշ – պետական և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից հրապարակված մակրոտնտեսական տվյալներ, որոնք օգտագործվում են ներդրողների կողմից՝ երկրի ընթացիկ և հետագա ներդրողական հնարավորությունների մեկնաբանման և տնտեսության վիճակի գնահատման համար:

Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ) – մակրոտնտեսական ցուցանիշ, որն արտացոլում է բոլոր վերջնական ապրանքների ու ծառայությունների շուկայական արժեքը՝ արտադրված վերջին մեկ տարում տվյալ երկրի սահմաններում՝ անկախ օգտագործված արտադրական ռեսուրսների ազգային պատկանելությունից:

Գնողունակության համարժեքություն *(Purchasing Power Parity, PPP)* – համեմատվող երկրների արժույթների հարաբերակցությունն է՝ հաշվարկված այդ երկրներում արտադրված ապրանքների և ծառայությունների գների հարաբերակցությամբ:

Տրանսֆերտ *(լատ. transfero-տեղափոխում եմ)* – դրամական միջոցների և այլ տնտեսական օբյեկտների փոխանցումը, տեղափոխումը մի երկրից մյուսը:

Էմիգրացիա (արտագաղթ) – հայրենիքից հարկադիր կամ կամավոր հեռանալը մեկ ուրիշ երկիր՝ մշտական կամ ժամանակավոր բնակության նպատակով՝ քաղաքական, տնտեսական կամ այլ շարժառիթներով:

Ուղեղների արտահոսք – զանգվածային արտագաղթի գործընթաց, որի ժամանակ երկրից հեռանում են մասնագետներ, գիտնականներ և բարձր որակավորում ունեցող աշխատողներ՝ քաղաքական, տնտեսական, կրոնական կամ այլ պատճառներով:

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանից արտագաղթի ծավալներն օրեցօր ավելի լայն շերտեր են ներառում. տարբեր տարիքի, կրթության, սոցիալական դիրքի և այլ բնութագրիչների տեր մարդիկ են լքում երկիրը, ինչը մտահոգիչ է: Դրա հետևանքով նկատելի փոփոխության են ենթարկվում երկրի ոչ միայն ժողովրդագրական ցուցանիշները, այլև ողջ հասարակական կառուցվածքը: Տարբեր փորձագիտական գնահատականների համաձայն՝ միայն 1990-2005թթ. Հայաստանից հեռացել և այլ երկրներում բնակություն են հաստատել 700 հազարից մինչև 1 միլիոն 300 հազար մարդ, որը կազմում է 2008թ. ՀՀ անվանական բնակչության 22-40%-ը: 2007-2008թթ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամը ևս չէր կարող չազդել Հայաստանի թուլացած տնտեսության և, բնականաբար, արտերկրում ավելի լավ վարձատրվող աշխատանք փնտրողների արտագաղթելու միտումների վրա: Այս տնտեսական ճգնաժամից և 2007 թ. ռուսական «Հայրենակիցներ»[1] ծրագրի մեկնարկից հետո Հայաստանից արտագաղթը նոր թափ առավ: Որոշ տվյալներով վերջինիս միջոցով Հայաստանից Ռուսաստան բնակվելու է տեղափոխվել շուրջ 5 հազար քաղաքացի[2]: Դիմողների թիվը գերազանցում է 25 հազարը, իսկ ոչ պաշտոնական տվյալներով նրանց թիվը հասնում է մինչև 60 հազարի[3]: Իսկ 2007-2012թթ. միջինում 70 հազար հայաստանցի մասնակցել է «Գրին քարտի» խաղարկությանը՝ ԱՄՆ-ում բնակություն հաստատելու հնարավորություն ստանալու համար[4]: Վերջին՝ 2013-2014 տարիների խաղարկության մասնակիցներից բազմազանության արտոնագրեր («Գրին քարտ») շահել են 2216 ՀՀ քաղաքացիներ[5]:

---

[1] ՌԴ Դաշնային միգրացիոն ծառայության Հայաստանի ներկայացուցչություն http://fmsarmenia.ru/index.php?cat_id=326

[2] Համացանցում այս ծրագրով Հայաստանից մեկնածների թվի վերաբերյալ թարմ տեղեկատվություն անհնար է գտնել, իսկ մեր հեռախոսազանգերին ու հարցմանը պատասխաններ չենք ստացել:

[3] Ռուսաստանն ավելի է դյուրացնում «Հայրենակիցներ» ծրագրի պայմանները http://www.yerkirmedia.am/?id=10085

[4] Հստակ վիճակագրական տվյալներ չկան, թե «Գրին քարտի» խաղարկության միջոցով քանի մարդ է տարեկան մեկնում ԱՄՆ, բայց հետևյալ թվերը ցույց են տալիս հայաստանցիների արտագաղթի մտադրությունները: http://travel.state.gov/content/dam/visas/DV_Applicant_Entrants_by_Country_2007-2013.pdf

[5] Վերջին երկու տարում Հայաստանի ավելի քան 2000 քաղաքացի «Գրին քարտ» է շահել http://www.azatutyun.am/content/article/26619299.html

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (UNFPA) հայաստանյան գրասենյակի գործադիր ներկայացուցիչ Գարիկ Հայրապետյանի ներկայացմամբ. «*Այս 13 տարիների ընթացքում (նկատի ունի 2000-2013թթ.– հեղ. խումբ.) ընդհանուր ունենք 311 հազ. բացասական սալդո, այսինքն՝ 311 հազ. բնակչություն ենք կորցրել կամ մեր ընդհանուր բնակչության 10%-ից ավելին*»[6]: Միայն 2010-2013թթ. միջազգային ուղևորահոսքերի վիճակագրական տվյալներով բացասական մնացորդն ունի հետևյալ պատկերը[7].

2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.
-46684	-43820	-42811	-31188

Որոշ փորձագետներ նշում են, որ այս վիճակագրական տվյալները չեն արտահայտում իրական դրությունը, դրանք մեղմացված են, իսկ 2013թ. տվյալը՝ նույնիսկ կրկնակի նվազեցված:

Հանրային տրամադրություններն արձանագրող հետազոտության տվյալներից[8] հետևում է, որ 2012թ. դեկտեմբերի դրությամբ Հայաստանի չափահաս բնակչության մոտ կեսն (49,6 %-ը) ունի արտագաղթելու ուժեղ կամ թույլ արտահայտված դիրքորոշում, իսկ տվյալ ուղղությամբ որոշակի քայլեր է ձեռնարկել 35,7%-ը. սրանք պոտենցիալ արտագաղթողներն են: Արտագաղթողների քանակական տվյալները, սակայն, մատնանշում են խնդրի միայն մեկ կողմը: Կարևոր են նաև դրա արդյունքում հասարակությունում տեղի ունեցող որակական փոփոխությունները: Արտագաղթի հետևանքով երկրում նվազում են առավելապես աշխատունակ տարիքի, մասնագիտություն և հմտություններ, սոցիալական ակտիվություն ունեցող քաղաքացիները: Արդյունքում հասարակության քանակական ցուցանիշների հետ մեկտեղ պակասում են մտավոր-սոցիալական կապիտալը, կենսունակ և երկրի զարգացման համար նպաստավոր ռեսուրս պարունակող հանրային շերտերը: Վերջին տասը տարիների ընթացքում Հայաստանից արտագաղթի որակի և պատճառների փոփոխության մասին իր հանրային դասախոսության մեջ նշում է Գարիկ Հայրապետյանը. «*Եթե նախկինում*

---

6 ՍիվիլՆեթի c-ԿԱՃԱՌ հաղորդմանը, տե՛ս http://civilnet.am/2014/07/22/c-academy-unfpa-garik-hayrapetyan-demographics/#.VEC1B_mSyXp

7 Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 138 http://armstat.am/file/article/sv_12_12a_530.pdf և Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 139 http://www.armstat.am/file/article/sv_12_13a_520.pdf

8 Մանուկյան Ս., «Միգրացիայի կառավարման գործոնները Հայաստանում», 2013 http://www.soyuzinfo.am/upload/pdf/2013_Migration_Control_Factors.pdf

գնում էին ցածր որակավորում ունեցող սևագործ բանվորները, հիմա արդեն կրթված, բարձր որակավորում ունեցողներն են գնում, ինչը շատ ավելի վտանգավոր է»[9]:

Հայաստանի ժողովրդագրական ցուցանիշների մասին աշխատանքային քննարկումներից մեկի ժամանակ (որին առիթ ենք ունեցել մասնակցելու) կառավարական մարմինների մի քանի բարձրաստիճան ներկայացուցիչներ մեր դրությունը համեմատում էին արևմտյան զարգացած կամ զարգացող երկրների դրության հետ և համարում օրինաչափ այնպիսի պրոցեսներ, ինչպիսիք են միգրացիան, ծնելիության անկումը, հասարակության ծերացումը և ամուսնության տարիքի բարձրացումը՝ դիտարկելով վերջիններս իբրև գլոբալ համաշխարհային միտումների դրսևորումներ: Այսպիսի անհամարժեք մոտեցումը, կարծես, լայնորեն տարածված է, այնինչ չունի ռացիոնալ հիմնավորում, քանի որ Հայաստանի և արևմտյան երկրների սոցիալ-տնտեսական կառուցվածքների խիստ տարբերությունները չեն կարող համեմատելի դարձնել մեր երկրներում տեղի ունեցող գործընթացները, որոնց պատճառահետևանքային համալիրն ամբողջովին տարբեր է: Իհարկե գլոբալ միտումները, ինչպես օրինակ գլոբալիզացված տնտեսությունը, դեր ունի Հայաստանից միգրացիոն հոսքեր ապահովելու գործում: Սակայն Հայաստանից մեկնող էմիգրանտները ոչ թե ազատ տեղաշարժման հնարավորություն ունեցող աշխատավորներ են, որ կարող են ընտրություն կատարելով իրենց տեղը գտնել ցանցավորված գլոբալ տնտեսության տարբեր անկյուններում, այլ աղքատ և ծայրամասային երկրից արտահանվող էժան աշխատուժ, որը կապիտալի կենտրոններում իրացվելու ավելի մեծ հնարավորություններ ունի: Այս պայմաններում Հայաստանը դառնում է մի երկիր, որն իր ներքին ռեսուրսները[10] սեփական զարգացմանն ուղղորդելու փոխարեն հանդես է գալիս իբրև ռեսուրսներ արտահանող, որն արդեն, ոչ միայն իր զարգացման, այլև առհասարակ սուվերեն գոյության հնարավորություններն է վտանգում: Սա, թերևս, պետք է ոչ միայն կարևոր լիներ, այլև մտահոգեր պետական քաղաքականություն վարողներին: Այնինչ էմիգրացիան դիտարկվում է իբրև երկրին տրանսֆերտներով ապահովող և

---

[9] ՍիվիլՆեթի c-ԳԱՃԱՌ հաղորդմանը, տե՛ս http://civilnet.am/2014/07/22/c-academy-unfpa-garik-hayrapetyan-demographics/

[10] Ասվածը ճիշտ է ոչ միայն մարդկային ռեսուրսների, այլև հումքային ռեսուրսների առումով, սակայն տվյալ դեպքում խոսքը հատկապես մարդկային ռեսուրսների մասին է:

սոցիալական դժգոհության ալիքները մեղմող մեխանիզմ, ինչը լիովին դրական լույսի ներքո է դնում էմիգրացիայի գործընթացը կառավարողների համար: Սա կարճաժամկետ և անհեռանկար մոտեցում է. երկրի տնտեսական, սոցիալական, քաղաքական զարգացման տեսանկյունից միգրացիայի կառավարումը և հակաէմիգրացիոն գործոնների խթանումը Հայաստանի հասարակության համար կենսական անհրաժեշտություն է:

Հաշվի առնելով այն, որ էմիգրացիային նպաստող գործոնները միմիայն և զուտ տնտեսական չեն, այլև կապված են քաղաքական, իրավական, մշակութային (նորմատիվ-արժեքային) գործոնների հետ՝ մեր նպատակն է ոչ միայն տեսանելի դարձնել զանգվածային էմիգրացիայի վնասակար կողմերը, ինչպես, օրինակ, տնտեսական վնասները, այլև մատնանշել դրանք մեղմելու քաղաքական, իրավական, մշակութային հնարավորությունները: Նշվածը հատկապես վերաբերում է որոշակի խոցելի խմբերին, հատկապես ԼԳԲՏ մարդկանց, որոնց էմիգրացիոն վարքը, բացի համընդհանուր միտումի մաս լինելուց, ունի կոնկրետ առանձնահատկություններ: Նրանցից շատերը ստիպված են լքել հայրենիքը՝ հասարակության խտրական վերաբերմունքի պատճառով: Ինչպես կտեսնենք վերլուծության մեջ հետագայում, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությունը լայն տարածված է հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում (ներառյալ ընտանիք, աշխատավայր, կրթական և առողջապահական հաստատություններ և այլն), որի բացակայության պայմաններում ԼԳԲՏ մարդիկ չէին ցանկանա հեռանալ երկրից՝ իրենց հետ տանելով սեփական աշխատուժը, մասնագիտական և այլ հմտություններ, մտավոր պոտենցիալը, ֆինանսական ռեսուրսները և այլն: Հետևաբար, համընդհանուր տնտեսական քաղաքականությունից զատ, արտագաղթը մեղմելու համար պահանջվում են նաև առանձնահատուկ մոտեցումներ օրենսդրական, իրավապաշտպան, տեղեկատվական և այլ քաղաքական գործիքներով:

Հայաստանից արտագաղթի խնդրի շուրջ տագնապները, ինչպես նաև, որպես ԼԳԲՏ մարդկանց շահերի պաշտպանությամբ շահագրգիռ կողմեր՝ այս խմբի առանձնահատուկ խնդիրների մտահոգությունները մեզ առաջնորդեցին ձեռնարկել սույն նախագիծը:

Հեղինակային խումբ

ՆԱԽԱԳԾԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն նախագծի նպատակն է հետազոտել 2011-2013թթ. ընթացքում ԼԳԲՏ համայնքի նկատմամբ առկա խտրականության հետևանքով ԼԳԲՏ անձանց անվերադարձ արտագաղթի ազդեցությունը Հայաստանի տնտեսական ցուցանիշների վրա և արտացոլել այդ փոփոխությունները երկարաժամկետ հեռանկարում:

Նախագիծը բաղկացած է երկու հիմնական մասերից՝

1. ԼԳԲՏ մարդկանց էմիգրացիայի և դրան նպաստող գործոնների առանձնահատկությունների սոցիոլոգիական ուսումնասիրություն:
2. Արտագաղթի տնտեսական ազդեցությունների տնտեսագիտական գնահատական:

Հետազոտության խնդիրներն են պարզել, թե՝

1. որոնք են Հայաստանից էմիգրացիայի հիմնական խթանիչ գործոնները,
2. ինչ դեր ունեն էմիգրացիայի հիմնական խթանիչ գործոնները ԼԳԲՏ մարդկանց արտագաղթելու որոշման և վարքի վրա,
3. ինչպիսի առանձնահատուկ խթանիչ գործոններ են ազդում ԼԳԲՏ մարդկանց արտագաղթելու որոշման և վարքի վրա,
4. ինչպիսի հետևանքներ ունի ԼԳԲՏ մարդկանց արտագաղթը հասարակական կյանքում,
5. ինչ ազդեցություն է ունեցել ԼԳԲՏ համայնքի նկատմամբ առկա խտրականության հետևանքով ԼԳԲՏ անձանց անվերադարձ արտագաղթը Հայաստանի տնտեսական կորուստների վրա,
6. երկարաժամկետ հեռանկարում ինչ ազդեցություն կարող է ունենալ ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականությունը տնտեսության վրա,
7. ինչպես կարելի է նվազեցնել ՀՀ–ից արտագաղթի ծավալները՝ հաղթահարելով ԼԳԲՏ մարդկանց արտագաղթի խթանիչ գործոնները:

Հետազոտության շրջանակներում տեղեկատվության ստացման համար ընտրվել են փաստաթղթերի ավանդական վերլուծության և փորձագիտական հարցման մեթոդները:

Փաստաթղթերի վերլուծության մեթոդի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ այն թույլ է տալիս ուսումնասիրել ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության հետևանքով տնտեսական ցուցանիշների փոփոխություններն ընտրված ժամանակահատվածում և արտացոլել այդ փոփոխությունները երկարաժամկետ հեռանկարում:

ԼԳԲՏ համայնքի մասին ուսումնասիրությունների բացակայության պայմաններում մենք ունենք այնպիսի դրություն, երբ ԼԳԲՏ մարդկանց որոշ սոցիալական վարքի ձևերի մասին տեղեկացված են միայն տարբեր ոլորտի փորձագետներ՝ հոգեբաններ, սեքսոլոգներ, իրավապաշտպաններ/շահերի պաշտպաններ, բժիշկներ և այլն: Այդպիսի խնդիրների շարքում են նաև ՀՀ–ից ԼԳԲՏ մարդկանց արտագաղթելու տրամադրությունները, էմիգրացիային դիմելու դեպքերը և դրանց մոտիվացիաները (օրինակ՝ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության պատճառով): Հետևաբար այս փորձագետներն են դառնում առանցքային տեղեկատուներ, որոնց գնահատականները ԼԳԲՏ համայնքի մասին միակ հիմնավորված տվյալներն են: Մեր հետազոտության սոցիոլոգիական մասը հիմնվել է այսպիսի փորձագետների հետ ֆոկուսավորված հարցազրույցների մեթոդի վրա, ինչը թույլ է տվել պատկերացում կազմել ինքնագիտակից ԼԳԲՏ մարդկանց (իրենց որպես ԼԳԲՏ գիտակցող մարդիկ) արտագաղթի տրամադրությունների, որոշման, դրան նպաստող գործոնների և առանձնահատկությունների մասին: Փորձագետներն ընտրվել են ըստ մասնագիտական ոլորտների, ԼԳԲՏ մարդկանց հետ շփումների շրջանակի մեծության և հաղորդակցման ինտենսիվության չափանիշների: Ընդհանուր առմամբ հարցվել են 15 առանցքային տեղեկատու–փորձագետ:

Որպես լրացուցիչ մեթոդ կիրառվել է արդեն կատարված հետազոտությունների, փորձագիտական գնահատականների երկրորդային վերլուծություն՝ հատկապես Հայաստանից էմիգրացիայի ընդհանուր պատկերին առնչվող հարցերի պատասխանները գտնելու նպատակով:

Ելնելով հետազոտության նպատակից և առաջադրված խնդիրներից՝ նպատակահարմար է իրականացնել տնտեսական-վիճակագրական վերլուծություն (փաստաթղթերի և տնտեսական ցուցանիշների ինդուկցիոն վերլուծություն), քանի որ տվյալ հետազոտությանն անհրաժեշտ

տեղեկատվությունը կարելի է ստանալ միայն հետազոտության համար հետաքրքրական ոլորտների վերաբերյալ արդեն իսկ հրապարակված վիճակագրական և տնտեսական զեկույցների վերլուծության միջոցով, ինչից ելնելով՝ ինդուկցիոն մեթոդի միջոցով, վերլուծության արդյունքում ստացված ցուցանիշները կարելի է արտապատկերել (պրոյեկտել) ամբողջ տնտեսության վրա:

Տնտեսական վերլուծության ժամանակ հաշվարկվել են հետևյալ չորս ցուցանիշները՝ կրթության վրա կատարված ծախսեր, չստացված աշխատավարձ, չգեներացված ՀՆԱ և բյուջեի՝ չստացված եկամուտներ, 2011-2013թթ. մեկ միջին վիճակագրական արտագաղթողի համար՝ երբեմն բերված դոլարի՝ 2014թ. հունվարի 1-ի գնողունակության ու հաշվի առնելով միջազգային համեմատությունների համար համարժեքության ապահովման անհրաժեշտությունը (գնողունակության համարժեքը՝ PPP): Վերջում կանխատեսված են նաև այդ ցուցանիշների արժեքները՝ ընթացիկ միտումների պահպանման դեպքում:

ՀՀ–ում ԼԳԲՏ մարդկանց մասին քանակական տվյալները բացակայում են և Հայաստանի մասշտաբով ԼԳԲՏ մարդկանց համամասնության պատկերն անորոշ է: Մեր նախագծի շրջանակներում տնտեսագիտական հաշվարկների ժամանակ կհիմնվենք միջին՝ 5%–ի հաշվարկի վրա՝ ելնելով 20-րդ դարի սկզբից արված հետազոտությունների և չափումների արևմտյան փորձի վրա, որոնք շարունակվում են մինչ այժմ[11] (ԼԳԲՏ մարդկանց համամասնությունը բացահայտող հետազոտությունների տվյալները տատանվում են երկրից երկիր և տարեց տարի. սովորաբար նշվում են 4-6%, 7-10% մինչև 12-15%):

ԼԳԲՏ հիմնահարցերի ուսումնասիրության սահմանափակումները և խոչընդոտները

ԼԳԲՏ մարդկանց առնչվող հարցերի ուսումնասիրությունը բարդ է ողջ աշխարհում, այդ թվում՝ Հայաստանում, որտեղ սեռականության հարցը չափազանց զգայուն է, իսկ հետերոսեքսուալությունից բացի՝ մյուս սեռական կողմնորոշումները՝ տաբուացված: ԼԳԲՏ մարդկանց ընդհանուր

[11] Հետազոտությունների մանրամասն տվյալներ կարելի է գտնել հետևյալ կայքերում՝ http://www.kinseyinstitute.org/research/ak-data.html#homosexuality; http://www.svoboda.org/content/article/24744323.html

թվաքանակի մասին հետազոտություններ արված չեն Հայաստանում, ավելին, մոտ ապագայում դժվար է պատկերացնել նույնիսկ այսպիսի հետազոտության դեպքում վստահելի արդյունքներ ստանալու հնարավորությունը: Խնդիրն առաջին հերթին կապված է հենց ԼԳԲՏ ինքնագիտակցման հետ, երկրորդը՝ սեփական սեռական կողմնորոշումը թաքցնելու, «աննորմալության» պիտակավորումից խուսափելու, ինչպես նաև խտրականության ու բռնության ենթարկվելու վախի հետ: Հայաստանում արված բոլոր հետազոտական փորձերը վերաբերում են միայն ինքնագիտակից ԼԳԲՏ խմբին, ովքեր այս կամ այն չափով կազմակերպված համայնքի մաս են կազմում և/կամ նրանց, ովքեր ենթարկվել են որևէ տիպի խտրականության, դարձել բռնության զոհ, որից հետո հանդիսացել են իրավապաշտպան կամ ԼԳԲՏ խնդիրներով զբաղվող ՀԿ-ների շահառուներ: Հետևաբար ԼԳԲՏ թեմայով ուսումնասիրություններն առավելապես վերաբերում են ԼԳԲՏ համայնքին և կամ ինքնագիտակից ԼԳԲՏ մարդկանց:

ՄԱՍ 1

ԼԳԲՏ ՄԱՐԴԿԱՆՑ ԷՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ ԴՐԱՆ ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԷՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽԹԱՆԻՉ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Հայաստանից արտագաղթի իրադրությունն ունի բազմաթիվ փոխկապակցված պատճառներ և գործոններ: Մեծ հաշվով համատեքստային բազմաթիվ գործոններից են շուրջ 25 տարվա վաղեմություն ունեցող հիմնախնդիրներ՝ ԽՍՀՄ փլուզումը, 1988թ. երկրաշարժի հետևանքները, պատերազմական և հետպատերազմական իրադրությունը, տնտեսության ապարդյունաբերականացումը, անարդյունավետ կառավարումը, սոցիալական անարդարությունը, խիստ բևեռացումը, մտավոր ռեսուրսների նվազումը, քաղաքացիների սոցիալական և իրավական անպաշտպանվածության զգացումը, բարոյահոգեբանական իրավիճակը: Նշված գործոններն ուղիղ փոխկապված են բոլոր սոցիալական ինստիտուտների, ինչպես օրինակ՝ մեդիայի, կրթական հաստատությունների, ընտանիքի, եկեղեցու, պետական իշխանության ինստիտուտների գործառնության և/կամ դրանց վարած քաղաքականությունների խնդիրների հետ:

Որոշ փորձագետներ, միավորելով Հայաստանի արտաքին և ներքին խնդիրների հետևանքները, առանձնացնում են էմիգրացիոն հոսքերի հիմնապատճառ հանդիսացող հետևյալ կոնկրետ գործոնները.

1. ՀՀ փոքր աշխատաշուկան, մասնագիտական աճի սահմանափակությունը, աշխատաշուկայի լարվածությունը, գործազրկության բարձր աստիճանը, ցածր աշխատավարձերը, ինչը թույլ չի տալիս արժանապատիվ ապրելակերպ և բավարար կենսամակարդակ ունենալ նույնիսկ զբաղվածների համար,
2. ղարաբաղյան հակամարտության լուծման անժամկետ հետաձգվածությունը, երկարաժամկետ ֆիզիկական անվտանգության զգացումի բացակայությունը (հատկապես սահմանամերձ բնակավայրերի բնակչության շրջանում),
3. քաղաքական կառավարման անբավարար մակարդակը, կոռուպցիայի բարձր աստիճանը և իշխանական էլիտայի անպատժ-լիությունը, պետական քաղաքականության տեսլականի բացակայությունը, ընդդիմության ինստիտուտի թուլությունը, երկրի ապագայի նկատմամբ անորոշությունը,
4. մարդու իրավունքների (քաղաքացիական, տնտեսական, քաղաքական և այլն) ոտնահարումները, սոցիալական արդարության

պակասը, իրավական, սոցիալ–հոգեբանական պաշտպանության անբավարարությունը, խոցելի խմբերի հանդեպ խտրականությունը,

5. կյանքի համար սպառնալիք հանդիսացող հիվանդությունների դեպքում առողջապահական ծառայությունների անբավարար որակն ու անմատչելիությունը:

Հանրային կարծիքի բազմաթիվ ուսումնասիրությունները ևս վկայում են հասարակության ներսում ահագնացող չափերի հասնող էմիգրացիոն տրամադրությունների մասին, որոնց պատճառների թվարկումը հաճախ հաստատում և լրացնում են վերը նշված փորձագիտական գնահատականները:

Այսպես, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի (ՀՌԿԿ) կողմից «Կովկասյան բարոմետր» ամենամյա հետազոտության 2013թ. արդյունքներով մշտական արտագաղթի ցանկություն հայտնել են հայաստանցի հարցվողների 31%-ը, իսկ ժամանակավորապես մեկնելու ցանկություն՝ 61%-ը[12]: Նույն հետազոտական խմբի տվյալներով, մշտական արտագաղթելու տրամադրությունները 2009-ին եղել են 21%, 2010-ին՝ 26%, 2011-ին՝ 23%, 2012-ին՝ կրկին 26%: Հատկանշական է, որ Հայաստանի սահմաններից դուրս բնակվող մոտ ընկեր և ընտանիքի անդամ/ազգական ունեցողների համամասնությունները հարցվողների շրջանում 20-ական տոկոսներով ավելացել են 2010-2013թթ. ընթացքում, ինչն արդեն արտագաղթի իրական ցուցանիշների ավելացման մասին է խոսում:

Մշտական էմիգրացիայի տրամադրությունների շատ ավելի բարձր ցուցանիշների մասին են խոսվում Ս. Մանուկյանի «Միգրացիայի կառավարման գործոնները»[13] հոդվածում: Ըստ դրանց. «*2012թ. դեկտեմբերին Հայաստանից ընդմիշտ արտագաղթելու [ուժեղ կամ թույլ] դիրքորոշում ուներ Հայաստանի չափահաս բնակչության մոտ կեսը՝ 49.6%-ը: Ընդ որում, արտագաղթելու ուղղությամբ որոշակի քայլեր էր ձեռնարկում բոլոր հարցվածների մեկ երրորդից ավելին՝ 35.7%-ը*»: Համեմատելով ավելի վաղ՝ 2011թ. դեկտեմբերին Հայաստանի 18-30 տարեկան երիտասարդների շրջանում իրականացված սոցիոլոգիական զանգվածային

[12] Տե՛ս http://www.crrc.am/hosting/file/_static_content/barometer/2013/CB%202013_Public%20Presentation_Armenian.pdf

[13] Հոդվածը մեզ հետաքրքրում է հետազոտական տվյալների առումով, դրանցից բխեցվող քաղաքական առաջարկները, սակայն, մեզ համար վիճելի են:

հետազոտության տվյալների հետ՝ հեղինակը նշում է, որ ընդմիշտ արտագաղթելու հակվածների համամասնությունը երիտասարդների շրջանում 37.5%-ից 2012թ. բարձրացել է արդեն 58%-ի: Այսինքն, 2011թ. դեկտեմբերից մինչև 2012թ. դեկտեմբեր՝ մեկ տարվա ընթացքում, արտագաղթի դիրքորոշումները Հայաստանում կտրուկ աճել են. Հայաստանի երիտասարդության կեսից ավելին պատրաստ էին լքել երկիրը դեռևս այդ ժամանակ:

Դիտարկելով արտագաղթի դիրքորոշումներն ըստ մի շարք այլ սոցիալ-ժողովրդագրական չափորոշիչների՝ մասնավորապես տարբեր տիպի բնակավայրերում, ըստ հարցվողի կրթամակարդակի, ամուսնական վիճակի, ընտանիքում երեխաների քանակի, ընտանիքում սերունդների քանակի՝ Ս. Մանուկյանը նկատում է, որ դրանք միմյանցից էականորեն չէին տարբերվում, ինչը նշանակում է, որ հայաստանյան հասարակությունում արտագաղթի դիրքորոշումը կրում է համակարգային բնույթ: Լինելով համակարգային խնդիր՝ կան մի շարք նրբություններ, որոնք կարելի է տեսնել հատկապես պատճառների մատնանշման մեջ: Այսպես, ունենալով մի քանի պատասխանի հնարավորություն՝ արտագաղթի դիրքորոշում ունեցող հարցվածների 82.4%-ը նշել էր «*Սոցիալ-տնտեսական պատճառները*», 45%-ը՝ «*Սոցիալ-հոգեբանական պատճառները*»: Վերջիններիս շարքում առավել հաճախ հանդիպել են «*Հայաստանում իմ [կամ երեխաներիս] համար ապագա չկա*», «*Ցանկանում եմ քաղաքակիրթ երկրում ապրել*» և այլն: Այսինքն՝ հետազոտությունը «*Սոցիալ-հոգեբանական պատճառներ*» ընդհանրական անվան տակ արձանագրել է նաև վերոնշյալ կետերից գոնե 2-ը, 3-ը, 4-ը:

Համաձայն այս նույն հետազոտության տվյալների՝ անձանց շրջանում, որոնց բավարարվածությունն իրենց տնտեսական վիճակից ամենացածրն է, արտագաղթի դիրքորոշում ունի 60%-ը, իսկ այն անձանց շրջանում, որոնց բավարարվածությունն իրենց ընտանիքի տնտեսական վիճակից ամենաբարձրն է, արտագաղթի դիրքորոշում ունի 42%-ը, այսինքն. «*ընտանիքի տնտեսական վիճակի ընկալումն իրոք արտագաղթը պայմանավորող էական գործոն է*», սակայն, «*եթե նույնիսկ արդյունավետ կերպով իրացվի ընտանիքի տնտեսական վիճակից գոհ լինելու գործոնի՝ արտագաղթը նվազեցնելու ներուժը, ապա արտագաղթի դիրքորոշում ունեցողների քանակը կկազմի 42%, որը նույնպես շատ բարձր է*»: Ուրեմն, բացի տնտեսական գործոնից նշանակալից են նաև վերոնշյալ հետազոտության հարցվողների 45%-ի կողմից հիշատակված

«*Սոցիալ-հոգեբանական պատճառները*»: Հետևաբար, դրանք նաև առանձին լուծման կարիք ունեն՝ անկախ տնտեսական քաղաքակա-նության մեջ ձեռնարկվող գործողություններից: Նկատենք, որ ժամանակի հետ սոցիալ–հոգեբանական պատճառի կշիռն աճելու պոտենցիալ ունի՝ երկրում իրավական, սոցիալ–հոգեբանական, արժեքային դրական փոփոխությունների, մարդու իրավունքների պաշտպանվածության, անխտրական, ինքնահիրացման հնարավորությունների բացակայության դեպքում:

ՀՈՄՈՖՈԲԻԱ ԵՎ ԼԳԲՏ ԷՄԻԳՐԱՑԻԱ

Մարդու իրավունքների պաշտպանվածության, անխտրական ինքնաիրացման հնարավորությունների բացակայության խնդիրը՝ որպես էմիգրացիոն գործոն, հատկապես առնչվում է հասարակության առավել խոցելի խմբերին, այդ թվում ԼԳԲՏ մարդկանց: Հայաստանում կոնկրետ խոցելի խմբերի էմիգրացիոն հարցերի շուրջ խորացված քանակական ուսումնասիրություններ մեզ հայտնի չեն, սակայն առկա են «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ կողմից 2012թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կատարած մոնիտորինգի[14] տվյալները, որոնք որոշակի տեղեկատվություն են տրամադրում ԼԳԲՏ մարդկանց էմիգրացիոն տրամադրությունների մասին[15]: Այսպես, նշված հետազոտության համաձայն, հարցված 111 հոգուց 86-ը մտադիր էր ընդմիշտ հեռանալ Հայաստանից (տե՛ս Գծապատկեր 1): Երկրից հեռանալու նրանց դրդապատճառներից առաջին տեղում է «*Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով նրանց խտրականության ենթարկված լինելը*» (60 հոգի): Երկրորդ տեղում է «*Երկրում ընդունված արժեքների և նորմերի հետ անձնական անհամապատասխանությունը*» (57 հոգի): Երրորդ տեղում է «*Ինքնուրույնության և ազատության սահմանափակումները*» (56 հոգի): Բոլոր նշված հիմնապատճառներն ուղիղ կապ ունեն մարդու իրավունքների պաշտպանության, անհատի ազատությունների և ինքնաիրացման հնարավորությունների անբավարար աստիճանի հետ: «*Երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը*» 111 ԼԳԲՏ հարցվածների համար չորրորդ տեղն է զբաղեցրել (53 հոգի):

Այն, որ ԼԳԲՏ մարդիկ Հայաստանից մեկնում են խտրականության հիմքով և հիմնականում ընդմիշտ արտագաղթելու մտադրությամբ (առաջին հերթին ասվածը վերաբերում է ինքնագիտակից ԼԳԲՏ մարդկանց),

---

[14] Հայաստանում ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարումների վերաբերյալ մոնիտորինգ, 2013թ., http://issuu.com/pinkarmenia/docs/lgbtmonitoringarm

[15] Հայաստանում ԼԳԲՏ մարդիկ դժվար հասանելի են, համայնքի մասին քանակական բնութագրիչները բացակայում են. այդպիսով նրանց հետ ներկայացուցչական ընտրաքային հարցումներ անելն ահնահարին է դառնում: Այդ է պատճառը, որ հետազոտությունը չի բավարարում քանակական հարցումների ներկայացուցչականության պահանջը: Սակայն, քանի որ հարցվողների ներգրավվման պատահականությունն ապահովվել է ձնակույտի մեթոդով, այս հետազոտությունը պարունակում է բավականին հավաստի տեղեկատվություն ընդհանուր միտումների մասին:

հաստատում են նաև մեր կողմից հարցված փորձագետները. «*Գնացողները հիմնականում ցանկանում են էլ հետ չգալ*», «*Ես ուզում եմ հեռանալ, Հայաստանն ապրելու տեղ չի, Հայաստանում ես իմ ապագան չեմ տեսնում» ասողների թիվը շատ մեծ է, չեմ չափազանցնի, եթե ասեմ 60-70%: Անգամ իմ ծանոթների շրջանում այդ թիվը կարող է հասնել 80%-ի*»:

Փորձագետները նշում են նաև, որ կան վերադարձի դեպքեր, հատկապես արևմտյան երկրներ կրթական նպատակով մեկնած ԼԳԲՏ երիտասարդների շրջանում: Սակայն այս խումբն էլ հաճախ երկրից հեռանալու հաջողված քայլեր է կատարում կամ առնվազն ունի այդպիսի ձգտումներ:

Ընդմիշտ արտագաղթելու միտումը կապված է այս սոցիալական խմբի արտագաղթի դրդապատճառ-խթանիչ գործոնների կառուցվածքի հետ: Եթե ընդհանուր առմամբ Հայաստանի հասարակության համար առաջնահերթ պատճառ են հանդիսանում սոցիալ-տնտեսական խնդիրները և միայն հետո անվտանգության և սոցիալ-հոգեբանական խնդիրները, ապա ԼԳԲՏ մարդկանց շրջանում նշված պատճառների բուրգը հակառակ շրջված է: Փորձագետներից մեկի խոսքերով. «*Հետերոսեքսուալները գնում են առաջին հերթին փող աշխատելու, իսկ ԼԳԲՏ անձանց առաջնային պատճառը հանգիստ շնչելն է, հանգիստ ապրելը*»: Հետևաբար, զուտ սոցիալ-տնտեսական պատճառներով մեկնողները կարող են իրենց ապագան կապել Հայաստանի հետ, հուսալով, որ իրենց տնտեսական վիճակի բարելավման դեպքում կվերադառնան: Իսկ սոցիալ-հոգեբանական, ֆիզիկական և իրավական անպաշտպանվածության խնդիրներ, մշակութային ճնշվածություն, արժեքային հակասություններ ունեցող անձինք, ինչպիսիք են նաև ԼԳԲՏ մարդիկ, դա անել չեն կարող: Հայաստան վերադառնալու համար նրանց պետք կլինեին հասարակական արժեքների բարեփոխման հույս ներշնչող որոշակի քաղաքականությունների տեսանելի ներդնում:

Գծապատկեր 1[16]



Մեր փորձագետներից մեկի հաշվարկներով, ում ծանոթների շրջանակը կազմում է շուրջ 1100 ԼԳԲՏ մարդ, վերջին 3 տարում Հայաստանից ընդմիշտ հեռանալու մտադրությամբ մեկնել և առայժմ չեն վերադարձել 80 ԼԳԲՏ անձ: ԼԳԲՏ մարդկանց շահերի պաշտպանությամբ զբաղվող փորձագետներից մեկն էլ նշում է, որ միայն վերջին 1 ամսվա ընթացքում ինքը ճանապարհել է 13 հոգի, իսկ 2014 թ. սկզբից մինչև հուլիս ժամանակահատվածում իր ծանոթ ԼԳԲՏ անձանցից 70 հոգի է արտագաղթել դեպի եվրոպական երկրներ:

Այս դրության հիմքում ընկած է հայաստանյան հասարակության մեջ առկա հոմոֆոբիան, որը տարածված է գրեթե բոլոր հասարակական խմբերի շրջանակներում: Այսպես, օրինակ, «ԼԳԲՏ անձանց հանդեպ

[16] Գծապատկերը մեջբերված է «Հայաստանում ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարումների վերաբերյալ մոնիտորինգ»–ից: Հարցումն իրականացվել է 2012թ. սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին, ՀՏԳԿ ՀԿ կողմից: Տե՛ս http://issuu.com/pinkarmenia/docs/lgbtmonitoringarm

հանրային վերաբերմունքը Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքներում» 2011թ. ուսումնասիրության հարցվողների 70,9%-ը կարծում է, որ ԼԳԲՏ մարդիկ տարօրինակ են, իսկ 97,4%-ը վստահ է, որ այդ երևույթը շեղում է և պետք է դատապարտվի հասարակության կողմից[17]: ՀՌԿԿ կողմից իրականացված «Կովկասյան բարոմետր-2011»-ի տվյալների համաձայն՝ Հայաստանի բնակչության 97%-ը չի արդարացնում նույնասեռականությունը[18], իսկ «Սոցիալական համախմբվածության մասին» հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ բնակչության 95%-ը չէր ցանկանա ունենալ նույնասեռական հարևան[19]: Ժառանգված լինելով խորհրդային ժամանակներից (նույնասեռականությունը քրեականացված էր)՝ ներկայիս մշակութային հոմոֆոբիան պարբերաբար ամրապնդվում է քաղաքական վերնախավերի կողմից դա լեգիտիմացնող հայտարարություններով[20], թեև իրավական առումով նույնասեռականությունը չի հետապնդվում: Փորձագետներից մեկի խոսքերով. «*Մենք գործ ունենք պետական մակարդակով հովանավորվող հոմոֆոբիայի հետ: Երբ պայթեցվեց DIY-ը, որոշ պետական դեմքեր, խոսնակներ ամեն կերպ լեգիտիմացրեցին և արդարացրեցին դա. այդ իշխանությունը, այդ համակարգը հոմոֆոբիայի կրողն է*»: «Ամնեսթի Ինթերնեշնլի» «Հայաստան. տարբերությունների համար տեղ չկա» 2013թ. զեկույցում ներկայացված են Հայաստանում ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ խտրականության և ատելության հողի վրա հանցագործության դեպքերը և իշխանությունների՝ նրանց պաշտպանելու անպատրաստակամությունը, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանների, ակտիվիստների և լրագրողների դեմ իրականացված ոտնձգություններն ու հարձակումները[21]: «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ կողմից ևս տարբեր զեկույցներում արձանագրվում է այս խնդրի մասին, իսկ 2014թ. տպագրված «ԼԳԲՏ անձանց իրավունքների

---

[17] ԼԳԲՏ անձանց հանդեպ հանրային վերաբերմունքը Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքներում, 2011 http://issuu.com/pinkarmenia/docs/lgbtsurvey/

[18] Կովկասյան բարոմետր 2011, Հայատան JUSHOMO (անգլերեն) http://caucasusbarometer.org/en/cb2011am/JUSHOMO/

[19] Սոցիալական համերաշխության հետազոտություն http://www.crrc.am/research-and-surveys/completed-projects/social-cohesion-survey?lang=hy

[20] Այս մասին տե՛ս 2012 թ. DIY բարի պայթեցման դեպքի վերաբեյալ հաշվետվություններում, օրինակ՝ http://issuu.com/pinkarmenia/docs/2013_annual_report_arm/ (էջ 4)

[21] Հայաստան. փոփոխությունների համար տեղ չկա (անգլերեն) http://amnesty.org/en/library/asset/EUR54/002/2013/en/6d6a852f-6494-4ef5-bc13-1373f154e0de/eur540022013en.pdf

իրավիճակը Հայաստանում. 2013թ.» տարեկան զեկույցում նշվում է, թե Հայաստանը հետընթաց է ապրել, քանի որ անհանդուրժող տեսակետներն այժմ առավել հաճախ են հնչում, իսկ պետական պաշտոնյաներն աչք են փակում ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ իրականացված բռնությունների վրա և ներկայացնում դա «ազգային արժեքների պաշտպանության» կոնտեքստում[22]:

Ճիշտ է, որոշ փորձագետներ նշում են նաև խորհրդային ժամանակների համեմատ որոշակի դրական միտումների մասին, ինչպես օրինակ՝ ԼԳԲՏ համայնքի տեսանելիությունը Հայաստանում: Դրա շնորհիվ, ի տարբերություն ավագ սերնդի, երիտասարդները կարողանում են փոխօգնություն ցուցաբերել, մասնագիտացված ՀԿ-ների ծառայություններից օգտվել, ավելի պաշտպանված լինել և ավելի ազատ դրսևորել իրենց սեռականությունը: Սակայն մեծ հաշվով, հոմոֆոբիան դեռևս արմատացած խնդիր է հասարակության մեջ: Հայաստանի օգնող մասնագետների[23] շրջանում կատարված հետազոտությունը ևս ցույց է տալիս, որ նույնիսկ այն մասնագետները, ում պարտականությունն է տրամադրել համապատասխան ծառայություններ հասարակության բոլոր անդամներին հավասարապես, անհանդուրժող են և ունեն խտրական վերաբերմունք ԼԳԲՏ անձանց նկատմամբ[24]: Մեր կողմից հարցված փորձագետներից մեկն ընդգծում էր, որ հոմոֆոբ են նույնիսկ ՀՀ իրավապաշտպաններից շատերը:

---

[22] Տարեկան զեկույց. ԼԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակը, Հայաստան, 2013 http://issuu.com/pinkarmenia/docs/2013_annual_report_arm/

[23] «Օգնող մասնագիտությունները» հավաքական հասկացություն է, որի մեջ մտնում են այն բոլոր մասնագիտությունները, որոնց տեսությունը և պրակտիկան ուղղված են մարդկանց օգնելուն, նրանց վարքը հասկանալուն ու մեկնաբանելուն, նրանց հիմնախնդիրները բացահայտելուն ու հաղթահարման եղանակներ գտնելուն: Դրանց թվին են դասվում սոցիալական աշխատանքը, սոցիալական մանկավարժությունը, հոգեբանությունը, հոգեբուժությունը, բժշկությունը, մանկավարժական գործունեությունը և այլն:

[24] Քարամյան Լ., «Հայաստանի օգնող մասնագետները նույնասեռականության և ԼԳԵՓ համայնքի մասին. իրազեկվածության մակարդակն ու վերաբերմունքը»

ԷՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽԹԱՆԻՉ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԼԳԲՏ ՄԱՐԴԿԱՆՑ ԴԵՊՔՈՒՄ

Հատկանշական է, որ վերը նշված էմիգրացիայի համընդհանուր խթանիչ գործոնները ոչ միայն գործում են ԼԳԲՏ մարդկանց համար, այլև առանձնահատուկ ձևերով են դրսևորվում նրանց հանդեպ հոմոֆոբիայի պայմաններում: Օրինակ, նույն աշխատաշուկայում առկա խնդիրները ԼԳԲՏ մարդկանց վրա էլ ավելի ծանր են անդրադառնում, քանի որ առկա է ոչ միայն բարձր մրցակցության լարվածությունը, այլև նրանց հանդեպ խտրական վերաբերմունքը: Հարցված շատ փորձագետներ նշում են ԼԳԲՏ անձանց հանդեպ խտրականության հիմքով աշխատանքի մերժման կամ էլ աշխատանքից ազատելու բազմաթիվ օրինակներ[25]. «*Կողքի սրահում աշխատում էր գեյ, ինքը թաքցնում էր իր ինքնությունը, և ամեն բան նորմալ էր: Բայց իր կոլեգան պատմեց իր մասին ու իրեն հանեցին գործից*»:

Որոշ փորձագետներ, առկա խնդիրներով հանդերձ, նկատում են նաև, որ կան առանձին ոլորտներ, համայնքներ և կազմակերպություններ, որոնցում հոմոֆոբիան նվազագույն մակարդակի վրա է, և որտեղ ԼԳԲՏ մարդիկ հեշտությամբ կարող են աշխատանք ունենալ կամ ինտեգրվել: Այդ ոլորտներն են արվեստագետների, գրողների համայնքները, դիզայնի, հագուստի մոդելավորման, շոու բիզնեսի, գիտական որոշ շրջանակներ, միջազգային հասարակական կազմակերպությունները և որոշ արտասահմանյան ներդրումներով բացված ռեստորաններ, բարեր. «*Ես նկատել եմ, որ կան ոչ տեղացի տնօրեններով որոշ ռեստորաններ, որոնք հենց կոնկրետ գեյերին են աշխատանք տալիս*»: Այնուամենայնիվ, այսպիսի առանձին վայրերը խիստ սակավաթիվ են մի կողմից, և չեն ապահովում լիարժեք պաշտպանվածություն՝ մյուս կողմից: Այսինքն, եթե նույնիսկ ԼԳԲՏ մարդիկ ստանում են աշխատանք, դա նրանց համապատասխան անվտանգ միջավայր չի երաշխավորում. սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության բացահայտվելու դեպքում միշտ մնում է շանտաժի, ծաղրի, անարգանքի առարկա լինելու վտանգը:

Առողջապահական ծառայությունների որակի և մատչելիության անբավարարությունը ևս, լինելով արտագաղթի համընդհանուր խթանիչ գործոն, էլ

[25] Տե՛ս նաև «Սոցիալական կարգավիճակի կորուստ և կորստի վախ» բաժնի օրինակները:

ավելի նշանակալի է ԼԳԲՏ մարդկանց դեպքում: Հաճախ պիտակավորումից, խարանից և խտրականությունից խուսափելու արդյունքում՝ ԼԳԲՏ մարդիկ խուսափում են Հայաստանում բուժհաստատություններ դիմել, որի արդյունքում բարդանում են տվյալ անձանց հիվանդությունները, նվազում է տեղում դրանց բուժման հնարավորությունները (ինչպես նաև տուժում է հանրային առողջության ընդհանուր մակարդակը): Այս, ինչպես նաև սեռական վարքագծի ռիսկայնությամբ պայմանավորված որոշ հիվանդությունների նկատմամբ առավել խոցելի լինելու պատճառով, ԼԳԲՏ մարդիկ հաճախ ստիպված են արտագաղթել՝ առողջապահական ծառայությունների կարիքներից ելնելով:

«*Գիտեք, որ ԼԳԲՏ մարդիկ առավել խոցելի են տարբեր հիվանդությունների նկատմամբ և պարտադիր չէ, որ դա լինի վեներական կամ այլ այդ կարգի հիվանդություն: Արտասահմանում իրենց առողջական խնդիրներն ավելի հեշտ լուծելու հեռանկարներն արտագաղթի կարևոր պատճառներից մեկն է, որը էլ ավելի է հեշտացնում գործընթացը*»:

ԼԳԲՏ ԷՄԻԳՐԱՑԻԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԽԹԱՆԻՉ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Հետերոնորմատիվ մշակութային համատեքստում ԼԳԲՏ մարդիկ բախվում են ոչ միայն երկրում առկա ընդհանուր խնդիրներին (որոնք կիսում են մյուս քաղաքացիների հետ միասին), այլև բազմաթիվ առանձնահատուկ փոխկապակցված խնդիրների, որոնք ծանրակշիռ և առաջնահերթ խթանիչներ են դառնում արտագաղթի որոշման կայացման համար: Պայմանականորեն առանձնացնելով՝ անդրադառնանք դրանց:

Սպառնալիքներ ֆիզիկական անվտանգությանը և անպաշտպանություն պետությունից

Հարցված փորձագետները նկարագրում են ԼԳԲՏ մարդկանց հանդեպ ֆիզիկական սպառնալիքների (հրկիզման փորձ, տան կամ ունեցվածքի հրկիզում, վտարում հայրական տնից, ծեծ և բռնության այլ տեսակներ) բազմաթիվ օրինակներ: Այս սպառնալիքները ԼԳԲՏ մարդիկ ունենում են ընտանիքում, հասարակական վայրերում, առողջապահական, կրթական հաստատություններում, մասնավոր ոլորտում, իրավապահ մարմիններում, բանակում և այլն: Փաստացիորեն, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ ցանկացած ինստիտուտի հետ հարաբերության մեջ, ԼԳԲՏ մարդկանցից շատերը ենթարկվում են ֆիզիկական վտանգների (նույնիսկ այն ինստիտուտների կողմից, որոնք կոչված էին պաշտպանել իրենց), ինչը դրդում է երկիրը լքելու որոշման և քայլի:

«*Մի տղա կա, նա համալսարանում լուրջ խնդիրներ ուներ, բազմիցս ենթարկվել էր խտրականության: Արտաքնապես շատ վառ չէր երևում, բայց զգացվում էր, որ տարբեր է, և ինքը ևս փորձում էր տարբերվել: Ուսանողներն անընդհատ ասում էին «գեյ ես, էս ես», ծաղրում էին, մի անգամ փողոցում ծեծել էին: Դասախոսներն էլ էին նույնիսկ ինչ-որ բաներ ասում: Ինքը գնաց արտերկիր սովորելու ու որոշեց մնալ այնտեղ ընդմիշտ*»:

«*4 տրանսվեստիտներ վաղուց էին ուզում գնալ. իրենց հեռանալու պատճառն առաջին հերթին ավելի հանդուրժող հասարակության մեջ ապրելու ցանկությունն էր: Իրենց հետևից անընդհատ փողոցում հայհոյում էին, նսեմացնում էին: Դա անընդհատ էր, չնայած իրենք տղամարդու շորերով էին ցերեկը ման գալիս, բայց միևնույն է, զգացվում էր իրենցից ամեն ինչ: Ու հետո իրենք այնպիսի հաճախորդներ էին ունենում (քանի որ վերջին-*

ներս նաև սեռական ծառայություններ էին տրամադրում), որ իրենց կյանքը վտանգված էր»:

«*Բազմաթիվ են նաև բանակի հետ կապված խնդիրները՝ զինվորական պարտադիր ծառայությունից ազատվելը, բռնությունները, ստորացումները, նվաստացումները ծառայության ընթացքում: Ինքս աշխատանքիս ընթացքում ականատես եմ եղել, թե ինչպես էին մի տղայի մեկուսացրել խցում, փակել էին, ոչ ոք չէր գնում նրա մոտ: Այնքան վատ պայմաններ էին՝ ցուրտ, խոնավ, որ այս տղան հիվանդացել էր: Ես գնացել էի զննելու մի ուրիշի ու տեսա նաև այդ տղային: Թե ինչպես էին նրան վերաբերում, աննկարագրելի է, անմարդկային. ոչ մեկ չէր գնում նրա մոտ, ուտելիք չէին տանում նրան, շատ բարձր ջերմություն ուներ, ոչ ոք ոչինչ չէր անում: Եթե ես չգնայի ուրիշ զինվորի զննելու համար, գուցե նա այդպես էլ այնտեղ մահանար*»:

«*Ես բժիշկ գիտեմ, որ ասում է՝ իմ մոտ որ գեյ գա, ես պետք է այնպես անեմ, որ մեռնի*»:

Ֆիզիկական անվտանգության հետ կապված ամենից բարձր հնչեղություն ստացած հանրային միջադեպը 2012 թ. մայիսի 8-ին DIY բարի պայթեցումն էր և բարի մուտքի մոտ սեփականատիրոջ նկատմամբ ֆիզիկական հաշվեհարդարի սպառնալիքներով գրությունները՝ կապված նրա սեռական կողմնորոշման և բարի ԼԳԲՏ-բարեհաճ (LGBT friendly) լինելու հանգամանքի հետ: Հոմոֆոբ հիմքով ագրեսիայի դրսևորման ու ատելության կոչերի արժանացավ նաև նույն ամսի 21-ին Երևանում անցկացված «Բազմազանության երթը», որը մեկնաբանվեց որպես «գեյ–շքերթ»:

Այս միջադեպերը դարձան Հայաստանի հասարակության մեջ առկա հոմոֆոբ տրամադրությունների լակմուսի թուղթը և ներքաղաքական նպատակներով շահարկման առարկա՝ ԱԺ ընտրությունների հաջորդող օրերին և նախագահական ընտրությունների նախաշեմին: Որոշ քաղաքական գործիչներ, այդ թվում գործող իշխանական կուսակցության պաշտոնյաներ, DIY բարի պայթեցումը և պայթեցնողներին աջակցող հայտարարություններով հանդես եկան: Հետագայում դատական գործընթացը ևս ԼԳԲՏ իրավունքների պաշտպանության բավարար շեշտադրումներ չապահովեց[26]:

---

[26] Մանրամասն տե՛ս «Տարեկան զեկույց. ԼԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակը, Հայաստան, 2013», http://issuu.com/pinkarmenia/docs/2013_annual_report_arm/

Այս իրադարձությունների ժամանակ պետական և իրավական ինստիտուտների՝ ԼԳԲՏ քաղաքացիների անհրաժեշտ պաշտպանությանն ուղղված քայլերի բացակայությունը և ընդհակառակը, ԼԳԲՏ անձանց հանդեպ ատելության աջակցությունը, որոշ *փորձագետների* պնդմամբ գործոն հանդիսացան ԼԳԲՏ մարդկանց, հատկապես DIY-ի հետ ուղիղ կապ ունեցողների վախի զգացումի սաստկացման, ինչպես նաև արտագաղթելու տրամադրությունների աճի համար:

«*Երբ պայթեցրին DIY փաբը, ԼԳԲՏ մարդիկ իրենց ավելի անպաշտպան ու խոցելի սկսեցին զգալ, և միանգամայն հասկանալի էր, որ քանի դեռ ջրի երես են դուրս եկել քաղաքական ատելության կոչերն ու պետական պաշտոնյաների արդեն բացահայտված, ուղղորդված ատելության ազդակները, նրանք իրենց ապահով չեն զգա Հայաստանում: Այդ միտումը ժամանակ առ ժամանակ ուժեղանում և թուլանում է՝ կապված երկրի ընդհանուր վիճակի հետ*»:

Ինքը՝ DIY բարի սեփականատերը, իր և մտերիմների անվտանգության նկատառումներից ելնելով՝ միջադեպից հետո արտագաղթեց՝ ապաստան հայցելով Շվեդիայից: Որոշ փորձագետներ հիշատակում են հենց այս իրադարձության հետևանքով արտագաղթած այլ օրինակներ ևս. «*Մի ուրիշ տղա DIY-ից հետո գնաց, որովհետև իր համար հատկապես ծանր էր, ինքն ուղիղ կապ էր ունեցել DIY-ի հետ ու մեծ դժվարություններ ուներ անգամ աշխատանք փնտրելիս, խնդիրներ ուներ ընտանիքում, ազգականների հետ, փողոցում, ինչի արդյունքում նա մեկընդմիշտ հեռացավ*»:

Թեև սովորական՝ «խաղաղ» ժամանակներում, ԼԳԲՏ մարդկանց հանդեպ լուրջ ֆիզիկական վնասներ հասցնելու դեպքերը զանգվածային կամ մեծաքանակ չեն՝ դրա սպառնալիքը մշտապես առկա է և հավանական է ցանկացած ժամանակ: Պետական, իրավական հաստատություններից անպաշտպանության պայմաններում վտանգի սպառնալիքը հաճախ ԼԳԲՏ մարդկանց մղում է արտագաղթի:

«*Այնտեղ, ես գիտեմ, որ եթե անցնում ես, քեզ մեկը բան է ասում, դու կարող ես օրենքին դիմել, քեզ կպաշտպանեն: Իսկ այստեղ դա չկա: Այստեղ անցնում ես, քեզ ասում են «գեյ», գնում ես քաղմաս, ոչինչ չեն անում, փողը կորզում են ասողից, քեզ էլ ասում են. «Դե լավ գեյ ես, գեյ է ասել, ճիշտ է ասել էլի*»:

«*Իրականում Հայաստանը միակը չէ, այդքան էլ չի տարբերվում ուրիշ երկրներից. ԼԳԲՏ լինելով դու ոչ մի տեղ ապահով չես: Հայաստանը միայն*

տարբերվում է այն առումով, որ օրենքը չի պաշտպանում մարդուն: Ֆրանսիայում դու ավելի պաշտպանված կլինես օրենքով. եթե քեզ ծեծեն, դու կկարողանաս ինչ-որ արդյունքի հասնել, դատի տալ, իսկ Հայաստանում այդ ամենը չկա: Չենք կարող ասել, թե ԼԳԲՏ-ները Հայաստանից գնում են, քանի որ նրանց ծեծում են. Ֆրանսիայում էլ են նրանց ծեծում: Ուղղակի Ֆրանսիայում նրանց գործը կարող է առաջ գնալ, այդ մարդիկ արդարության վերականգնմանը կհասնեն, նրանց իրավունքներն այնտեղ ավելի պաշտպանված են, քան Հայաստանում»:

Հետևաբար, ԼԳԲՏ մարդկանց արտագաղթը, բացի հասարակական մի շարք խնդիրների առկայությունից, բացահայտում է նաև այդ խնդիրների լուծման մեջ պետության անգործության փաստը. «*Եվ, բնականաբար, այս արտագաղթի մեծ տեմպերի մեջ ամեն մարդ մեծ գին է և մեծ կորուստ: Իսկ եթե մարդիկ արտագաղթում են արդարադատության պակասի պատճառով, դա առավել մեծ կորուստ է, որովհետև ստացվում է, որ պետության ընտրությունն է պայմանավորում արտագաղթը*»:

Ընտանիքից մերժվածություն կամ մերժված լինելու վախ

Շատ փորձագետների գնահատմամբ՝ հոգեբանական, ինչպես նաև սոցիալական առումներով ամենից ծանր հարվածները ԼԳԲՏ մարդիկ ստանում են սեփական ընտանիքի կողմից մերժվելու դեպքում: Եվ հաճախ ընտանիքի հետ կոնֆլիկտների լուծման միակ ելքն այս կամ այն եղանակով ու պատրվակով արտագաղթելն է:

«*Մի գեյ տղայի տանից վռնդել էին, և նա ստիպված էր որոշ ժամանակ ապրել իր ընկերոջ տանը: Հետո շատ մեծ դժվարություններով գումար հավաքեց, ընդ որում ԼԳԲՏ համայնքն օգնեց նրան գումարով, վիզան ստացավ, գնաց Գերմանիա և այլևս հետ չեկավ*»:

«*Մեկին հենց իր մայրն է ուղարկել երկրից՝ իր ծանոթի մոտ՝ իմանալով, որ իրեն այնտեղ կընդունեն. «այստեղ դու անելիք չունես, գնա, ես չունեմ էլ երեխա, իմ վերջին մայրական ինչ-որ քայլը, որ քեզ ուղարկեմ այնտեղ»*»:

«*...Պատճառն այն էր, որ իր փեսան՝ քրոջ ամուսինը, իմացել էր նրա նույնասեռական կողմնորոշման մասին ու կնոջը հետ էր ուղարկել, ասել էր. «Քո եղբայրը գեյ է»: Ու դրանից հետո կռիվներ էին սկսվել իրենց տանը. «Դու մեր ընտանիքը քանդում ես, հերիք չի, քրոջդ ընտանիքն էլ ես քանդում»: Դրա համար իր միակ փրկությունն այստեղից փախնելն էր, կորելը, որ իր մասին մոռանան*»:

Ընտանիքում ծագած խնդիրները կրկնակի խոցելի են դարձնում ԼԳԲՏ մարդկանց: Մի կողմից բարոյահոգեբանական մեծ աջակցության կարիք ունեցող ԼԳԲՏ անձը, զրկվելով ընտանեկան աջակցությունից, միանգամից հայտնվում է խիստ անբարենպաստ և ճնշված դրության մեջ: Մյուս կողմից ընտանիքի հետ կոնֆլիկտների առաջացմամբ, առաջնային սոցիալական կապերի խզումով, ԼԳԲՏ անձը զրկվում է նաև սոցիալ-տնտեսական կապերից ու կապիտալից, ինչը նրան էլ ավելի խոցելի է դարձնում՝ նվազեցնելով կրթության և սոցիալական կարգավիճակների ձեռքբերման հնարավորությունները:

«Ընտանիքը, նրա կողմնորոշումն իմանալուց հետո, վռնդել էր նրան տանից: Նա չէր ուզում Հայաստանում մնալ, որովհետև ընտանիքի հետ կոնֆլիկտ ուներ: Ընտանիքը համաձայն էր ֆինանսավորել, որպեսզի նա հեռանա երկրից: Համարում էին, որ դա ամոթ է իրենց բարեկամության, հարազատության համար... Տղան 19 տ. էր, նույնիսկ համալսարան չէր գնացել, որովհետև կապը ընտանիքի հետ այնքան շուտ կտրվեց, որ կրթություն ստանալու համար նրան ֆինանսավորող էլ չկար»:

«*Տ-ն այստեղ սովորում էր բժշկական համալսարանում, շատ լավ էր սովորում... Երբ նրա մասին իմացան ծնողները, իր վիճակը կտրուկ վատացավ. չնայած այն հանգամանքին, որ նա արդեն 21 տարեկան էր, ծնողներն իրեն տանում էին համալսարան, բերում էին տուն: Հետո՝ որոշ ժամանակ անց, մի քիչ փափկեցին, ինքը կարողացավ աշխատել, վատ բաներ էլ արեց, բանկերից փող վերցրեց անվերադարձ ու գնաց... Ինքը լավ մաշկաբան–վեներոլոգ կարող էր լինել, բայց կրթությունը կիսատ մնաց, ամեն ինչ իր մեջ կոտրվեց հենց դրա պատճառով»*:

«*Մեկը վերջերս ասում էր. «Ծնողներս իմացան իմ մասին, սկսեցին զզվել ինձանից: Էլ չեն ուզում ինձ տեսնեն, չեն ուզում ինձ հետ հաց ուտեն, ոնց որ վարակիչ հիվանդ լինեմ»*»:

Մինչև ընտանիքի հետ կոնֆլիկտների առաջանալը կրթություն ձեռք բերած ԼԳԲՏ մարդիկ առավելություն են ունենում նաև հետագայում խուսափել ընտանիքի ճնշումներից՝ օգտվելով արևմուտքում կրթությունը շարունակելու պատրվակով Հայաստանից մեկնելու հնարավորությունից: Ընտանիքից եկող գլխավոր ճնշումներից մեկն էլ ամուսնանալու պահանջն է: Անկախ այն հանգամանքից՝ ԼԳԲՏ անձը թաքցրել է ընտանիքից իր կողմնորոշումն ու ինքնությունը, թե բացահայտել է այն, սա այնպիսի մի խնդիր է, որ գրեթե ցանկացած ԼԳԲՏ անձ բախվում է իր կյանքի որոշակի փուլում:

«*Երբ չես կարողանում ընտանիքից դուրս գալ, քեզ ասում են, որ պետք է ամուսնանաս: Այս պարագայում Հայաստանից դուրս տվորելու մեթոդն ավելի շատ է տարածված. այն օգնում է ընտանիքից հեռու լինել ու նաև այդ ընթացքում երկխոսություն ծավալել: Շատ դժվար է ընտանիքի հարցը, շատ մարդիկ կան, որ ասենք, իրենց ընկերները, շրջապատում գիտեն, բայց ընտանիքը չգիտի, վախենում են այդ նեղ շրջապատից դուրս գա*»:

Ազատ ինքնադրսևորման և ինքնության ճանաչման սահմանափակումներ, մեկուսացում, հոգեբանական ճնշումներ

Դրսևորվող տարբերությունների նկատմամբ առօրյա հոմոֆոբ, անհան-դուրժողական դիսկուրսը և ծաղրի ենթարկումն ամենուր հետապնդում է ԼԳԲՏ մարդկանց: Սա հոգեբանական ճնշվածություն է առաջացնում, որից ազատվելու ձգտումը ևս բերում է արտագաղթելու տրամադրությունների և որոշման:

«*Արտագաղթելու պատճառ է չընդունված լինելը. «լավագույն» դեպքում հիվանդ են համարվում ու ամենածայրահեղը, որ շեղված, փչացած, այլանդակ մարդիկ են համարվում*»:

«*Իրենց չեն ընդունում, իզոլացնում են: Օրինակ, իմ տղայի դասարանում մի աղջիկ կա, ով տղայի շորեր է հագնում, տղայի նման է իրեն դրսևորում: Եվ խնդիր կա հենց դասղեկի կողմից. իրեն առանձին է նստացնում ու մյուս ծնողներին կարող է ասել. «Դե ինչ արած, պապա չունի, ինչ պետք է լիներ»,– այսինքն՝ արդեն այդ աղջկա շուրջ կառուցում են այն, ինչ ուզում են*»:

«*Մի անգամ վերելակում մի տղա կար, ով մի քիչ կանացի էր և երկու ուրիշ տղամարդիկ, ու ես ճնշում զգացի նրանց կողմից այդ տղայի հանդեպ. ինչ-որ անկապ բաներ էին ասում, ծաղրում: Ու ես համոզված եմ, որ այդ տղան ամեն օր հանդիպում է նման վերաբերմունքի*»:

«*Գուցե քեզ անձամբ չեն ճնշում, բայց դու ամեն օր ինչ-որ չափով առնչվում ես դրան, զգում ես, որ այդ ճնշումը կա՝ թեկուզ հեռուստատեսությամբ, թեկուզ փողոցում քայլելիս, երբ տեսնում ես «Մեկ Ազգ»-ի պաստառները՝ դատապարտել «համասեռամոլներին», դա ևս ճնշում է: Այո՛, փախչել այդ բռնի, բռնարար հասարակությունից, դա կարող է լինել, կարող ես ուզենալ գնալ*»:

Հատկանշական է, որ չնայած վերջին տարիներին Երևանում նկատվող որոշակի դրական միտումներին՝ տարբերվող արտաքին նշանների (օրինակ՝ տատու կամ պիրսինգ) և վարքային ձևերի նկատմամբ, մշակութային անհանդուրժողությունը, այնուամենայնիվ, շարունակում է խնդիր մնալ, և այն ուղղված չէ միայն ԼԳԲՏ անձանց նկատմամբ, այլ համընդհանուր է՝ անկախ սեռական կողմնորոշումից և գենդերային ինքնությունից:

«*Այստեղ, եթե դու ընդհանուրից մի քիչ տարբերվում ես, դառնում ես «սպիտակ ագռավ» ու քեզ դժվար է լինում, չես կարողանում շփվել: Մարդը սոցիալական էակ է, չէ՞, ինքը մարդկանց կարիք է զգում, ընկերության կարիք է զգում: Այստեղ, երբ մարդ չունի այդ հնարավորությունը, ուզում է արտագաղթել: Այդպես չէ՞: Մեզ մոտ պետք է այդ ընդհանուր ձևաչափի մեջ մտնես, մի քիչ շեղվեցիր, մենակ ես մնում: Իսկ մենակությունն էլ կյանքի խնդիրներից մեկն է: Կապ չունի ԼԳԲՏ ես, թե ոչ: Եթե տարբերվում ես, պետք է գին վճարես*»:

Գրեթե բոլոր ԼԳԲՏ մարդիկ ստիպված են թաքցնել իրենց սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը՝ չարժանանալու հասարակական պարսավանքին և նվաստացմանը:

«*Ես մարդիկ գիտեմ, որ աշխատանք, փող ունեին, բայց գնացել են: Իմ կարծիքով բոլորը գնում են ազատության համար, ազատություն գտնեն այնտեղ, այստեղ ազատություն չկա: Այստեղ եթե ուզենաս ազատ լինել՝ կողքից հալածվելու ես՝ ռեպլիկներով, գործողություններով*»:

«*Ասիական հասարակությունների պատկերացումն այսպիսին է. եթե մարդ ունի իշխանություն, ապա իրավունք ունի անել սեքս, կապ չունի նույնասեռ հարաբերություն է, թե՝ ոչ: Հետևաբար, եթե դու ունես իշխանություն, դու չունես խնդիր: Իսկ մյուս ԼԳԲՏ անձինք, եթե իշխանություն չունեն՝ չեն կարող ինքնադրսևորվել*»:

Որոշ ծայրահեղ դեպքերում ԼԳԲՏ անձինք դիմում են առհասարակ սեռական կյանքից հրաժարվելուն, ինչը հետագայում հանգեցնում է ֆիզիկական և հոգեբանական խնդիրների: Այս խնդրի լուծումը շատերը կրկին գտնում են արտագաղթի միջոցով:

«*Ա-ն էլ գնաց գեյ լինելու պատճառով, թեև ոչ ոք չէր կասկածում: Ինքն այստեղ իրեն թույլ չէր տալիս նույնիսկ թաքուն սեռական հարաբերություն ունենալ ո՛չ տղաների, ո՛չ էլ աղջիկների հետ: Ու դա ծածկում էր կրոնական մոտիվներով, իբր. «Ես ամբողջովին կրոնականի մեջ եմ, ես ոչ*

ընկերուհի եմ ուզում, ոչ էլ»: Արդեն 26 տարեկան էր, մոտը հոգեկան շեղումներ էին առաջանում: Պատճառը հենց այդ էր, որ ինքը չէր ուզում, որ իր կողմնորոշման մասին իմանային, ոչ մի բան չէր փորձում՝ նույնիսկ թաքուն: Մտածում էր. «Ես անձնական կյանք կունենամ միայն այստեղից դուրս»: Ու հենց դրա պատճառով թողեց իր աշխատանքը. ռեստորանային մենեջեր էր, մասնագիտությամբ էր աշխատում, լավ շրջապատ ուներ: Նա խոստումնալից ապագա ուներ այստեղ, բայց թողեց ամեն ինչ: Միայն այն հանգամանքից ելնելով, որ ինքն այստեղ անձնական ոչինչ չէր կարող ունենալ, հեռացավ երկրից, իսկ հիմա այնտեղ արդեն ընկեր ունի»:

«*Գիտեմ ամուսնացած գեյ, որ կնոջ հետ է արտագաղթել, ու էլի շարունակել են իրար հետ ապրել, բայց ինքն ավելի հարմարավետ է զգացել Հայաստանից դուրս ապրելով: Գուցե կինը գիտի ամուսնու մասին կամ գուցե ինչ-որ ձևով ներքին համաձայնության եկել են: Բայց ամեն դեպքում իրենց ավելի հանգիստ են զգում Հայաստանից դուրս, քան Հայաստանում: ԼԳԲՏ մարդիկ ուզում են գնալ, որ մի քիչ օդ շնչեն*»:

Սոցիալական կարգավիճակի կորուստ և կորստի վախ

Ազատ ինքնադրսևորման անհնարինության հետ անմիջականորեն կապված է ԼԳԲՏ մարդկանց ձեռք բերված սոցիալական կարգավիճակի, աշխատանքի, հարգանքի, ընկերների կորստի բարձր հավանականությունը և վախը դրանից:

«*Իսկ ինչ վերաբերում է հասարակության մեջ դիրքին, ապա դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե դու թաքցնում ես քո սեռական կողմնորոշումը: Այլապես կկորցնես դիրքդ: Հասարակությունն է այդպես տրամադրված: Մի տղա կար, որ գեյ էր, խոհարար էր աշխատում, մի օր մենեջերն իմացավ իր գեյ լինելը, աշխատանքից հանեցին և այնպես ծեծեցին, որ հիվանդանոց էր ընկել: Իրեն ուղղակի փախցրել ենք երկրից, հիմա ինքը Բրյուսելում է ապրում*»:

«*Բ-ն շատ լավ մասնագետ էր և դրսում էլ շատ լավ աշխատանք ունի, ապահովված է: Գնալու պատճառն այն էր, որ ուզում էր ազատ կյանքով ապրել, իսկ այստեղ չէր կարող: Մտածում էր, որ իր ինքնության բացահայտումը կարող է բերել նրան, որ նա իր աշխատանքը կկորցնի, գիտական շրջանակներում հեղինակություն այլևս չի վայելի: Տղան թաքցրել էր մինչև վերջ և արդեն լուրջ հաջողությունների էր հասել, արտասահմանում էլ կարող էր հեշտ հարմարվել*»:

«*Ես ունեմ ծանոթ, որն աշխատում է մաքսային մարմիններում, ինքը 1մլն. դր. աշխատավարձ է ստանում: Ու ինքը գեյ է, բայց իր մասին չգիտեն, եթե իմանան, միանգամից դուրս կթռնի այնտեղից: Այդպիսի դիրք ունեցող և աշխատավարձ ստացողներ կան իրավական, բժշկության, քաղաքականության ոլորտներում, բանկային համակարգում. ես առնվազն 4 հոգի գիտեմ: Բայց նրանք բոլորը թաքցնողներ են*»:

Դրամական շանտաժ և այլ ճնշումներ

Ինչպես նախորդ կետերում տեսանք, ԼԳԲՏ մարդկանց անբացահայտ, թաքնված լինելը, հանդիսանալով հասարակական ճնշումի պարտադրանք՝ միևնույն է, չի պաշտպանում նրանց տարբեր տեսակի այլ խնդիրներից: Քանի որ շատ ԼԳԲՏ մարդիկ իրենց առաջնային միջավայրում՝ ընտանիք, հարազատներ, բակ, հարևաններ, աշխատավայր, թաքցնում են իրենց սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը, բացահայտման վախը դառնում է խաղաթուղթ շատերի, այդ թվում իրավապահների ձեռքում՝ շանտաժի միջոցով դրամական միջոցներ կորզելու կամ խոսքի ազատությունը սահմանափակելու, քաղաքացիական ակտիվությունը զսպելու համար:

«*Մի երկու տարի առաջ ոստիկանությունը շատ էր ընկած գեյերի հետևից, գալիս ասում էին, որ գիտեն, որ գեյ է, փող էին ուզում, որ չասեն ընտանիքին, թաղին ու հարևաններին*»:

«*Ես, որ ավելի տեսանելի ակտիվիստներից եմ, իմ տանն էլ շատ խնդիրներ ունեմ՝ չնայած բացի պապայից ընտանիքիս մյուս անդամները բոլորը գիտեն: Բայց նրանք միշտ էլ վախվորած են, որ կարող է, ինչ-որ մեկը զանգի, կարող է ես ինչ-որ բան ասեմ ինչ-որ տեղ, իրենք դրանից էլ են վախենում, որ շատ չխոսեմ, շատ բան չասեմ*»:

Հայաստանի արտաքին քաղաքական ինտեգրացիոն գործընթացներ, սաստկացող ճնշումների վտանգ, հոմոֆոբ դիսկուրսի ակտիվացում

Հարցված փորձագետների մեծ մասը ԼԳԲՏ անձնաց շրջանակներում արտագաղթի տեմպերի, ինչպես նաև տրամադրությունների վերջին շրջանի աճը մեծապես պայմանավորում է Եվրաինտեգրման գործընթացի ձախողմամբ և փոխարենը Մաքսային միությանը (հետագայում նաև Եվրասիական տնտեսական միությանը) միանալու ՀՀ իշխանությունների որոշումով:

«*Ավելի շատ Մաքսային միություն մուտքը կարող է խթան լինել. մեծ քաղաքական պրոյեկտները կարող են մեծ արտագաղթի ալիք ստեղծել*»:

«*Թեև հիմա արևմտյան երկրներն այդքան էլ հեշտ չեն տալիս ապաստան, և այնտեղ պայմաններն այնքան էլ բարենպաստ չեն, միևնույն է, ԼԳԲՏ մարդկանց շրջանում արտագաղթի բավականին մեծ հոսք է նկատվում: Եվ ես դա պայմանավորում եմ Հայաստանի՝ Մաքսային միությանն անդամակցելու հայտարարության հետ, որովհետև այն երկրները, որոնք այդ միության անդամ են, ունեն հստակ բացասական վերաբերմունք ԼԳԲՏ անձանց և այդ թեմաների նկատմամբ: Վերջերս լսեցի մի հայտարարություն, որ ՄՄ անդամակցելը ոչ միայն տնտեսական ինտեգրացիա է ենթադրում, այլ նաև մշակութային արժեքների, հետևաբար անդամակցումից հետո ԼԳԲՏ համայնքի վիճակը Հայաստանում կվատանա*»:

Եվրաինտեգրումից հրաժարվելու և ռուսական քաղաքական նախագծերին ինտեգրվելու որոշումների լեգիտիմությունն ապահովելու նպատակով՝ ամբողջ թափով շահարկվում են Հայաստանի հետերոնորմատիվ մշակութային արժեքները, բորբոքվում ու զարգացվում է հոմոֆոբ դիսկուրսը: Ինչպես օրինակ դա տեղի ունեցավ ՀՀ Ազգային ժողովի «Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հնարավորությունների մասին» օրենքի նախագծի քննարկումների ժամանակ: Հոմոֆոբ հայտարարությունները և դիսկուրսի ակտիվացումը սպասարկվում են պրոռուսական քաղաքական ջատագովների, Հայաստանում պահպանողական խմբերի և Հայ առաքելական եկեղեցու սպասավորների կողմից. ընդ որում, վերջիններս հաճախ պարզապես համընկնում են:

Այս քաղաքական օրակարգի պայմաններում ԼԳԲՏ մարդկանց և նրանց շահերի պաշտպաններին մտահոգում է Ռուսաստանի օրինակով նույնասեռականության «քարոզի» քրեականացման հնարավոր սպառնալիքը, հատկապես, որ այդպիսի փորձ ՀՀ Ոստիկանության կողմից արդեն կատարվել է[27] 2013 թ. օգոստոսին՝ դեռևս մինչև Մաքսային միությանն անդամակցելու որոշման հայտարարությունը: Առաջիկայում Մաքսային միության անդամակցությունը և արդեն պրակտիկ գործադրված հետապնդումները կամ ԼԳԲՏ անձանց հանդեպ օրենսդրական խստացումները, ըստ փորձագետների կանխատեսման, էլ ավելի են հանգեցնելու արտագաղթին և ոչ միայն ԼԳԲՏ անձանց շրջանում: Հաճախ ԼԳԲՏ անձանց

[27] Մանրամասն տե՛ս «Տարեկան զեկույց. ԼԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակը, Հայաստան, 2013», http://issuu.com/pinkarmenia/docs/2013_annual_report_arm/

հանդեպ քաղաքական, պետական ճնշումները հիմնավորման առիթ և հնարավորություն են դառնում նաև ոչ ԼԳԲՏ մարդկանց դեպի արևմուտք հեշտացված արտագաղթի համար:

«*Երբ DIY-ը պայթեցրեցին, կամ երբ ոստիկանությունը ինչ-որ «հակագեյական» օրենք առաջարկեց, ու մեր տեղական կրեմլյան ծաղրածուները նույն բաներն էին փորձում անել, ինչ Պուտինը՝ Ռուսաստանում, մեզ մոտ ավելի խորացավ արտագաղթի խնդիրը ոչ միայն ԼԳԲՏ մարդկանց համար, այլև ընդհանուր հասարակության համար*»:

«*Եթե այս խտրականությունը օրենսդրական բնույթ կրի, ԼԳԲՏ մարդկանց հանդեպ հանդեպ ճնշումներն ավելի կշատանան, արդյունքում միգրացիան ևս կմեծանա: Օրինակ՝ Եվրոպայում հեշտացրին Ռուսաստանի ԼԳԲՏ անձանց ապաստան տրամադրելու գործընթացը: Ինձ թվում է նման մի բան էլ Հայաստանի համար կանեն, եթե մենք էլ Ռուսաստանի նման խտրական օրենքներ ունենանք: Ես հիշում եմ, որ նույնիսկ 90-ականներին, երբ հոմոսեքսուալությունը քրեորեն հետապնդվում էր, Հայաստանից հեռանալն այդ պատրվակով շատ հեշտ էր: Շատերը (հենց իմ հարևաններն էլ), չլինելով նույնիսկ ԼԳԲՏ, ԼԳԲՏ լինելու պատրվակով մեկնեցին Հայաստանից: Նույնն էլ հիմա կլինի: Եթե հետապնդումն ուժեղանա, արտագաղթն էլ ավելի կհեշտանա: Ու այս դեպքում արդեն ոչ միայն ԼԳԲՏ-ները կօգտվեն առիթից, այլ բոլորը կգնան: Խտրականությունը վնասում է ոչ միայն ԼԳԲՏ մարդկանց, այլ նաև մյուսներին, և արտագաղթի տեսանկյունից էլ դա խնդրահարույց է: Ու վերջում երկրում կմնան օլիգարխներ, մի խումբ պայքարողներ և ստրուկներ*»:

***

Ընդհանրացնելով վերը նշված գործոններն ու օրինակները, կարող ենք ասել, որ Հայաստանի մշակույթում առկա հոմոֆոբիան և բոլոր առաջնային սոցիալական ինստիտուտների հետ (ընտանիք, կրթություն, բանակ, աշխատանք, իրավունք, եկեղեցի, պետություն) կապված խնդիրները ԼԳԲՏ մարդկանց հաճախ մղում են միակ՝ «փախուստի» ճանապարհ մնացած արտագաղթին: Փորձագետներից մեկը մեջ է բերում ԼԳԲՏ անձի հետևյալ խոսքերը. «*Խնդիրները դրսում նույնն են, ինչ այստեղ: Բայց միայն այն փաստը, որ դու հանգիստ կարող ես փողոցում քայլել ընկերոջդ հետ ձեռքը բռնած ու ոչ մեկ քեզ չի սպանի դրա համար, այն, որ դու կարող ես ապրել ընկերոջդ հետ, և երբ հարևաններն իմանան դրա մասին, ոչ մեկ չի վառի քո տունը, այն, որ կարող ես հանգիստ գնալ գեյ*

ակումբ, առանց վախենալու մտնել ու դուրս գալ, այդքանը բավական է, որ գնաս այնտեղ ու հաղթահարես այնտեղի խնդիրները»:

ԼԳԲՏ ԷՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԱՅԼ ԽԹԱՆԻՉ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Բացի հայաստանյան հետերոնորմատիվ մշակույթից և հոմոֆոբիայից բխող խթանիչ գործոններից՝ ԼԳԲՏ մարդկանց էմիգրացիայի համար առկա են նաև այլ առանձնահատուկ գործոններ, որոնք, ի տարբերություն վերոնշյալ բացասական՝ Հայաստանից արտամղող գործոնների, կարելի է համարել ընդունող երկրների «կանչող» գործոններ:

<u>Երջանիկ կյանքի փնտրտուք, ապահով ծերություն</u>

Փորձագետները նշում են, որ երիտասարդ տարիքում արտագաղթող ԼԳԲՏ-ների մոտիվացիաներից է կյանքի հաճույքներին հասու լինելը, այն դեպքում, երբ առավել հասուն տարիքում արտագաղթողները երջանկություն են որոնում՝ կայուն կյանք կառուցելու, մշտական զուգընկերկին/ամուսին, «նորմալ» աշխատանք գտնելու ճանապարհով:

«*Երիտասարդներն էլ գնում են կյանքը վայելելու, որովհետև այստեղ չկա այն կյանքը, ինչը-որ պետք է ԼԳԲՏ անձանց: Հաճույքներն այստեղ ԼԳԲՏ անձանց համար քիչ են, հիմնականում երիտասարդների մակարդակով, որ նայում ես, իրենք այստեղ, ոնց որ զբաղվելու բան չունենան, իսկ երիտասարդին ի՞նչ է պետք: Այստեղ չունեն դա, դրա համար գնում են*»:

«*Համայնքը Հայաստանում համեմատաբար փոքր է, նույնիսկ մի քանի հոգուց լսել եմ՝ զուգընկերոջ ընտրության հնարավորությունն այդքան էլ մեծ չէ: Մի գեյ տղա կար, ասում էր. «Չեմ կարողանում գտնել իմ ճաշակի զուգընկեր»: Հետևաբար, լինելով արտասահմանում, ընտրության շրջանակը լայնանում է*»:

«*Կան պատճառներ, որոնք անձնական կյանքի հետ են կապված, երկարատև, ավելի ազատ հարաբերություններ են ուզում, որովհետև ինչ-որ բան կա, բայց մինչև վերջ ազատություն չկա: Իրենք աղքատ չեն, վատ չեն ապրում, բայց ուզում են ավելի լավ ապրեն, ավելի լավ հագնվեն, ավելի լավ տեղեր գնան, ավելի ազատ զգան իրենց, ասենք, աշխատանքից հետո, հանգստանալու և այլնի առումով և ավելի ապահով ապագա ունենան, այն իմաստով, որ վստահ կլինեն, եթե հիվանդանան, կօգտվեն նորմալ առողջապահական ծառայություններից, ապահովագրությունից, կամ եթե ծերանան և մնան մենակ, իրենց տիրություն անող կլինի. Նրանք սկսել են նաև այդ մասին մտածել*»:

«Մտածում են մեծանան ի՞նչ են անելու, ինչպե՞ս են ապրելու, գոնե այնտեղ ինչ-որ մեկի հետ կամուսնանան… Այդ է՝ հիմնականում ամուսնության խնդիրն է, որ իրենք այստեղ ընդունված չեն»:

«Գեյերը մեծամասամբ գնում են աշխատանք գտնելու համար, այստեղ կարծում են «մեր մասին կիմանան, մենք չենք կարող աշխատել», այնտեղ այդ կոմպլեքսը չունեն: Իսկ տրանսների դեպքում հիմնականում ապագայի կառուցելու խնդիր է: Նրանց մեծ մասը, եթե այստեղ երիտասարդ ժամանակ կարող է սեքս-աշխատանք անել, մի քանի տարի հետո, երբ արդեն 40-50 տարեկան դառնան, ոչ մի անելու բան չեն ունենա: Այստեղ դու կորցնում ես ընտանիքդ, հարազատներիդ, քո մասին բոլորն իմանում են, դա մի մեծ պիտակ է: Տրանսգենդերները հիմնականում գնում են՝ մտածելով ապագայի մասին, գոնե այնտեղ կունենան կացարան»:

Սեռափոխություն

Սեռափոխության վիրահատությունը բարդ գործընթաց է և բարձր որակավորում է պահանջում: Այսպիսի վիրաբուժական միջամտության նպատակով Հայաստանից մեկնելու դեպքեր են նշվել երկու փորձագետի կողմից. «*Գիտեմ մարդիկ, որոնք Հայաստանը լքել են սեռափոխության համար վիրահատության նպատակով*»: Բացի այդ, Հայաստանում այս առումով կան նաև իրավական բացեր. սեռափոխությունից հետո փաստաթղթերի փոփոխման ոչ մի արգելող կամ թույլատրող օրենք չկա:

Ներհամայնքային «միտում»

Առանձին խթանիչ գործոն է նաև արդեն արտագաղթածների՝ որպես սոցիալական ռեսուրսի առկայությունը, որի օգնությամբ շատ ավելի հեշտ է դառնում նորերի արտագաղթը: Այս հարցում համայնքում ներքին փոխօգնությունը և փոխադարձ խրախուսումը նպաստում են հոսքի մեծացմանը:

«*Այստեղ մի ուրիշ հոգեբանական բան էլ կա, որ ծանոթներիցդ այնքան շատ մարդ է գնում, հետո զանգում, խոսում ես հետները, ասում են, որ այնտեղ շատ լավ է, վիճակներն ընտիր է, չեն ասում, թե իրականում ինչպես է, որ լեզվի խնդիր կա, որ ապագան մշուշոտ է, ասում են, որ լավ գեյ շքերթներ կան, կարող են մասնակցել: Այստեղի գեյը մտածում է. «Ես ի՞նչ ունեմ կորցնելու»: Դրա համար հոսքը մեծացավ*»:

«*Գնալու հնարավորությունները շատացել են, իսկ դրան խթանում են օտար լեզուների իմացությունը, ինչը նախկինում կարող էր խոչընդոտ*

հանդիսանալ, ուրիշ երկրներում համայնքից ծանոթների առկայությունը, քանի որ երբ մեկը, երկուսը գնում են, հետո մյուսներին էլ են կանչում: Դա էլ, իհարկե, նպաստում է արտագաղթի որոշման կայացմանը»:

***

Հատկանշական է, որ մի քանի փորձագետ նշել են նաև ԼԳԲՏ մարդկանց ներգաղթի օրինակներ Սփյուռքից: Սակայն դրանք եզակի դեպքեր են, և նրանցից շատ քչերն են հաստատվում Հայաստանում, հիմնականում 1-2 տարի բնակվելուց հետո նրանք ևս հեռանում են: Այս մարդկանց ներկայությունը կարևորվում է նրանով (խոսքն արևմտյան երկրներից ներգաղթողների մասին է), որ նրանք առավել անկաշկանդ են իրենց սեռական ինքնությունը բացահայտելու առումով, ինչը որոշակի ճանապարհ է հարթում տեղացիների համար:

«*Դրա հետ մեկտեղ՝ ես ԼԳԲՏ անձանց ներգաղթ եմ տեսնում: Կան շատ մարդիկ, որ ծնվել, մեծացել են այլ երկրում, բայց Հայաստան են գալիս, այստեղ իրենց ավելի լավ են զգում, միանգամից մերվում են այստեղի համայնքի հետ, փորձում են կապեր ստեղծել: Դա էլ է շատ հետաքրքիր տենդենց: Դա երևի խոսում է այն մասին, որ դրսում էլ հայ ընտանիքները չեն ընդունում այդ փաստը*»:

«*Բայց ինչ-որ հետաքրքիր միտում կա, որ դրսից անընդհատ մարդիկ են գալիս, ովքեր Հայաստանում չեն ապրել մեծացել, բայց գալիս են, փորձում են ինչ-որ ակտիվություն այստեղ ցուցաբերել, ինչ-որ տարբեր ձևերով այդ հարցերին փորձում են օժանդակել, բաց խոսել իրենց մասին*»:

ԿԱՊԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ. ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ

ԼԳԲՏ մարդիկ, ինչպես վերևում տեսանք, մեծամասամբ հակված են ընդմիշտ հեռանալ երկրից, ինչը հատկապես կապված է իրենց արտագաղթի պատճառների բնույթից: Հաճախ էմիգրացիան, անկախ իր պատրվակից, դառնում է միակ փախուստի միջոցը ճնշող կամ դատապարտող ընտանիքից, բռնացող հասարակությունից, իրենց անպաշտպան թողած պետությունից: Դա իր հերթին ենթադրում է Հայաստանում մնացած իրենց հարազատների հետ կապեր պահպանելու որոշակի առանձնահատկություններ: Հարցված փորձագետները նշում են, որ արտագաղթելու պատճառների, խզված ընտանեկան կապերի պատճառով, ընդունող երկրներում ԼԳԲՏ մարդկանց փախստական կարգավիճակից բխող ցածր ֆինանսական հնարավորությունների և այլ պատճառներով ԼԳԲՏ մարդկանց տնտեսական կապն իրենց ընտանիքների հետ միջինում ավելի թույլ է, քան ոչ ԼԳԲՏ մարդկանց պարագայում: Հետևաբար ԼԳԲՏ անձինք, եթե նույնիսկ շարունակում են պահպանել որոշակի կապեր և որոշ առիթների նվերներ և գումար ուղարկել, միևնույն է, նրանց շրջանում առանձին դեպքեր են պարբերաբար տրանսֆերտներ ուղարկելու օրինակները:

«*Կան մարդիկ, ովքեր գնալուց առաջ արդեն իսկ խզել էին ընտանիքի հետ իրենց կապերը, իսկ գնալուց հետո մի քիչ դժվար է տարածության վրա այդ կապերը վերականգնելը*»:

«*Եթե համեմատենք, միգրացիայի շատ այլ տեսակների հետ, օրինակ երբ գնում են արտերկիր աշխատելու, այդ դեպքում պատճառը, մոտիվացիան հիմնականում այն է լինում, որ գումար ուղարկեն հարազատներին: Իսկ ԼԳԲՏ անձանց պարագայում նման անմիջական կապ ես չեմ տեսնում*»:

«*Քանի որ երկիրը լքելու առաջնային պատճառը ոչ թե ֆինանսական խնդիրն է, այլ կան ուրիշ պատճառներ, հետևաբար կարելի է ենթադրել, որ ոչ բոլոր դեպքերում է կամ ոչ մեծ մասի դեպքում է, որ կապը պահվում է ու իրենց հարազատներին ինչ-որ գումար են ուղարկում*»:

«*ԼԳԲՏ մարդիկ շատ խոցելի իրավիճակում են դրսում, որովհետև հեշտ չէ դրսում ապրել փախստականի կարգավիճակով: Իմ իմացած մարդիկ դրսում լինելով չեն հարստանում: Իրենց դրսում լինելը միայն իրենց*

հանգիստ ապրելուն է օգնում: Բայց իրենք ի վիճակի չեն այստեղ օգնել ինչ-որ մեկին»:

«*Ֆինանսական աջակցությունը կախված է նրանից, թե ինչքան են վաստակում: Որքան ես գիտեմ, մեծ մասն այդքան գումար չունեն, որ մի հատ էլ այստեղ ընտանիքին ուղարկեն: Ինձ թվում է՝ քչերն են, որ ստաբիլ ինչ-որ գումար կուղարկեն*»:

Այն դեպքերում, երբ ընտանիքի հետ սոցիալական կապերն ամուր են կամ հաջողվում է հեռավորության վրա ընտանիքի անդամների հետ վերականգնել կապերը, ԼԳԲՏ մարդիկ հաճախ ձգտում են ընտանիքի անդամներին ևս տեղափոխել ընդունող երկիր՝ ելնելով ընդմիշտ այնտեղ հաստատվելու իրենց նպատակից: Հետևաբար, չնայած որ ԼԳԲՏ մարդկանց շրջանում արտագաղթի համամասնությունն առավել բարձր է, միևնույն է, տրանսֆերտներ ուղարկողների մեջ խիստ ցածր համամասնություն ունեն, այն էլ հիմնականում ժամանակավոր բնույթի:

«*Ովքեր մշտական են գնում, հետո անպայման մի ձևով ընտանիքին հետները տանում են: Ամեն տարի գալով, կարճ ժամանակով, մի անգամ մորն են պատմում իրենց մասին, մյուս անգամ քրոջը կամ եղբորը, հետո հորն ու այդպես տանում են իրենց մոտ*»:

Փորձագետները նշում են, որ Հայաստանում ԼԳԲՏ համայնքի հետ կապերում ներգրավված արտագաղթողները շարունակում են ինտերնետով հաղորդակցվել համայնքի մնացած անդամների հետ: Հատկապես առաջին 3-4 տարիներին: Երբեմն նվերներ, հագուստի ծանրոցներ և գումար են ուղարկում, առավել հաճախ աջակցում են իրենց ընկերներին ևս արտագաղթել:

ԼԳԲՏ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հայաստանում բնակվող ԼԳԲՏ մարդիկ հասարակության տարբեր շերտերից են, ունեն կրթության տարբեր մակարդակներ և ներգրավված են գործունեության տարբեր ոլորտներում: Փորձագետները նշում են, որ առավել տեսանելի մասը ներգրավված է առևտրի և սպասարկման ոլորտում՝ մատուցողներ, վարսավիրներ, երբեմն սեռական ծառայություններ տրամադրողներ և այլն: ԼԳԲՏ մարդիկ ներգրավված են նաև նորաձևության բնագավառում, մոդելային բիզնեսում, փոփ երգարվեստում: Կան երաժիշտներ, դիզայներներ, ճարտարապետներ, արվեստագետներ, գրողներ, բանկային համակարգի աշխատակիցներ, մասնագետներ ՏՏ ոլորտից, հաղորդավարներ, լրագրողներ, լեզվաբաններ, բժիշկներ, հոգեբաններ, շատերն աշխատում են որպես դասախոս, կան գիտնականներ (ֆիզիկոսներ, քիմիկոսներ, մաթեմատիկոսներ), հասարակական սեկտորում ակտիվ մարդիկ:

Անկախ իրենց գրաված սոցիալական դիրքից կամ գործունեության ոլորտից, գրեթե բոլոր փորձագետների կարծիքով, ԼԳԲՏ մարդկանց միավորում է հաջողության հասնելու և ավելի լավ կյանքով ապրելու մղումը. «*Նրանք պետք է ուժեղ լինեն, որ կարողանան իրենք իրենց պաշտպանեն, դրա համար իրենց ուժերը փորձում են կարիերայի մեջ, ավելի շատ ջանքեր են դնում, լավ մասնագետ են դառնում: Իրենց առանձնահատկությունը, տարբերությունն ինչ-որ խթան է տալիս, որ իրենք պետք է ավելի լավը լինեն, ավելի խելացի լինեն, ավելի հաջողված լինեն*»:

Ըստ փորձագետների՝ ԼԳԲՏ մարդկանց սոցիալական, ընտանեկան, հոգեբանական խնդիրների, հասարակական ճնշումների պատճառներով է, որ իրենք ստիպված են ինքնուրույն լուծել իրենց առջև ծառացած խնդիրները, հետևաբար առավել շատ են ձգտում բարձրագույն կրթություն կամ մասնագիտություն ձեռք բերել, տնտեսական անկախության, ինքնուրուության հասնել, նաև առավել մեծ նպատակներ են դնում իրենց առջև:

«*Երբ գործի են անցնում, քիչ թե շատ կայունանում են, արդեն իրենց նկատմամբ ճնշումը մեղմանում է: Հետևաբար, իրենց համար փող վաստակելն ավելի կարևոր է դառնում: Շատերի մոտ կա առանձին*

ապրելու ձգտումը: Դրանով կարողանում են ընտանիքին ապացուցել, որ ինքնուրույն են և կարող են»:

«*Ավելի են ձգտում աշխատանքի, թեկուզ փոքր տարիքից և ցանկացած ոլորտում՝ լինի սպասարկում, թե՝ այլ: Եթե համեմատենք ընդհանուր ազգաբնակչության հետ, ԼԳԲՏ-ի մեջ գործազուրկների տոկոսն ավելի քիչ է, որովհետև ձգտում են աշխատել, որ հասնեն ինքնուրույնության, կայունության: Ես մարդկանց գիտեմ, որ քարի հանքերում են աշխատել ու աշխատում, անում են գործեր, որ ոչ ԼԳԲՏ-ները կարող է խուսափեն. շատերի համար ծանր է, կեղտոտ է, մտածում են, որ պատվաբեր չի…*»:

«*Իրենք միշտ ուզում են ավելի շատ աշխատել, ավելի բարձր աշխատավարձ ստանալ: Չգիտեմ, դա ինչի պատճառով է, միգուցե ինքնուրույն լինելու կամ անկախ լինելու, քանի որ իրենցից շատերն ընտանիքից հեռանում են կամ փորձում են ինքնուրույն ապրել: Ես շփվում եմ կրթված երիտասարդների հետ, և իրենք աշխատում են, որ հա՛մ տան վարձ տան, հա՛մ սովորեն, հա՛մ լավ հագնվեն*»:

Հետևաբար, փորձագետների գնահատմամբ ԼԳԲՏ մարդկանց շրջանում սոցիալ–տնտեսապես ակտիվ անձինք տոկոսային համամասնությամբ ավելի շատ են, քան հետերոսեքսուալների մեջ ակտիվները: Նույնը վերաբերում է նաև հասարակական–քաղաքացիական ակտիվությանը, քանի որ հանուն արդարության պայքարը դառնում է միջոց իրենց նկատմամբ անարդարության փոխհատուցման՝ մի կողմից, իսկ մյուս կողմից հույս է ներշնչում արդար, ժողովրդավար, իրավահավասար հասարակության կառուցման, որտեղ ԼԳԲՏ-ները ևս պաշտպանված կլինեն: Լինելով նույն հասարակության անդամ և միաժամանակ տարբերվելով մեծամասնությունից՝ ԼԳԲՏ մարդիկ կրում են ուրիշի հայացքը ներսից, ինչը ցանկացած հասարակության ինքնաքննա-դատության և զարգացման հնարավորությունն է: Փորձագետներից մեկի խոսքերով. «*Նրանք սուր զգում են այդ արդարության պակասը, արդարության պահանջը, որովհետև իրենք ուրիշ ձևով են նայում աշխարհին: Այսինքն՝ հասարակության մեջ մարգինալ ես դառնում, լինելով մեջը, լինում ես նաև դուրսը*»:

Նշված հանգամանքները հաշվի առնելով՝ ԼԳԲՏ մարդկանց արտա-գաղթը, համարվում է տնտեսական, սոցիալական, քաղաքացիական, մշակութային բարձր ակտիվությամբ նշանակալի սոցիալական շերտի կորուստ հասարակության համար:

Եթե ընդհանրացնենք փորձագետների կարծիքները, ապա ԼԳԲՏ արտագաղթի պատճառով հասարակության կորուստներն ունեն ինչպես ընդհանուր բնույթ, որոնք ի հայտ են գալիս արտագաղթի պարագայում, այնպես էլ՝ առանձնահատուկ բնույթ, որ հատկապես ԼԳԲՏ մարդկանց արտագաղթի հետևանք է: Դրանք ներկայացնենք ստորև:

Մարդկային ռեսուրսի՝ որպես զարգացման պոտենցիալի կորուստ

«Մարդկային ռեսուրսը գնում է, և դա մեծագույն, ամենամեծ կորուստն է ՀՀ համար: ...Ամեն գնացողի հետ երկիրը կորցնում է իր ապագայի մի մասը, ընդհանրապես ապագա ունենալու կամ հեռանկարի մի մասը: Այս առումով անդառնալի, հսկայական կորուստներ է կրում երկիրը՝ սոցիալական առումով էլ, տնտեսական առումով էլ, բոլոր առումներով էլ»:

«Եթե նրանք չհեռանան, օգուտն այն կլինի, որ երկրում կմնան պոտենցիալ դա Վինչին, Չայկովսկին, Միշել Ֆուկոն կամ Պատռոկլոսը, ով հայտնի լավ գինվոր էր Հին Հունաստանում: Այսինքն՝ պոտենցիալ գիտնականներ, արվեստագետներ, երաժիշտներ, անգամ ռազմական ոլորտում լավ գինվորներ կամ գեներալներ, ամեն հնարավոր ասպարեզի լավ մասնագետներ ուղղակի կմնան Հայաստանում ու շատ մեծ ներդրում կարող են ունենալ երկրի ապագայի մեջ: ...Եթե նրանցից ամեն մեկը Հայաստանում մնա ու կարողանա ինքնադրսևորվել՝ կրթվի, զարգանա, արտահայտվի ու նկարի իր Մոնա Լիզան, դա նույնքան օգուտ կարող է տալ Հայաստանին, որքան Փարաջանովի տուն-թանգարանը»:

Տնտեսություն. սպառողների, աշխատուժի, պոտենցիալ գործարար–գործատուների կորուստ[28]

«Ամենահասարակ հետևանքը՝ սպառողներն են քչանում: Օրինակ, ես իմ աշխատանքի վրա եմ լուրջ փոփոխություններ նկատում՝ մարդ չկա: Իսկ դրանից բխում են շատ ուրիշ խնդիրներ: Մարդիկ քիչ են՝ տաքսիներից են քիչ օգտվում, բժիշկի մոտ քիչ են գնում, տաքսիստն է վատ ապրում, բժիշկն է վատ ապրում, սուպերմարկետի աշխատողն է վատ ապրում, այլ «ածականով մարդիկ» էլ կարող են վատ ապրել, թեկուզ մի քիչ»:

«Եթե հաշվի առնենք այդ հանգամանքը, որ արտագաղթելու հիմնական պատճառը ոչ թե ֆինանսականն է, այլ ընդհանուր սոցիալական

[28] ԼԳԲՏ մարդկանց արտագաղթի պատճառով տնտեսական կորուստների քանակական ցուցանիշները մանրամասն տե՛ս Մաս 2, էջ 47

վերաբերմունքը, ապահով միջավայրի բացակայությունը, հետևաբար ստացվում է, որ մարդիկ, ովքեր մասնագիտորեն ունակ են աշխատելու և հմուտ են, իրենք են լքում այս երկիրը: Հետևաբար, ունենում ենք և՛ կադրերի, և՛ ինչ-որ չափով նաև աշխատավոր ուժի կորուստ, ովքեր իրոք ի վիճակի են աշխատել»:

«Լավ կադրեր ենք կորցնում, մարդիկ իրենց պոտենցիալը ռեալիզացնում են ուրիշ տեղերում: Ինձ թվում է դա այնքան մեծ, ծանր խնդիր է, որ իր մեջ ամեն ինչ է ներառում: Դու քո, ասենք՝ լույսի, գազի հարկերն այստեղ չես մուծում, տեղի կազմակերպություններից առևտուր չես անում, չես օգնում տեղի բնակչությանը ու դրա համար Հայաստանը կորցնում է այս ամենը յուրաքանչյուր արտագաղթողի հետ»:

«Դե պատկերացրեք, ինչքան աշխատող է հեռանում: Ես ունեմ ծանոթներ, որոնք ավարտելով Ռուսաստանում համապատասխան ինստիտուտներ, կարող էին այստեղ տեքստիլ գործարաններ բացել, բայց իրենք դա չարեցին: Հիմա իրենք Եվրոպայում են այդ նույն գործն անում: Ունեմ ծանոթ աղջիկ, ով հիմա Պրահայում սպասարկում է բոլոր պորտապարուհիներին, նրանց համար զգեստներ է կարում, որոնցից յուրաքանչյուրն արժե 5000-7000 եվրո: Պարզ հաշվարկ է, հաշվե՛ք»:

Ստեղծագործողների և ուղեղների արտահոսք (արվեստագետներ, բարձր որակավորում ունեցողներ, արևմտյան երկրներում կրթություն ստացած մասնագետներ)

«*Բարձրագույն կրթություն ունեցող, ավելի շատ լեզուներ իմացող, հատկապես անգլերենին, ֆրանսերենին, գերմաներենին տիրապետող մարդկանց մի մասը հակված է դեպի Արևմուտք արտագաղթել: Նույնիսկ Ավստրալիա գնացել են սովորելու ու մնացել են այնտեղ*»:

«*Խելացի մարդկանց ենք կորցնում, արվեստագետներ ենք կորցնում, արվեստագետների մեջ շատ կան ԼԳԲՏ-ներ: ...Հոգեբանական գործոն կա. մարդը, ով ճնշվում է ապրել, իր մոտ ստեղծարար ջիղն ուրիշ ձև է զարգանում, շատ յուրահատուկ է լինում*»:

Սպասարկման ոլորտի ծառայողների, արհեստավորների (վարսահարդարներ, կարողներ և այլն) կորուստ

«*Շատ քիչ, բայց արտագաղթ կա նաև դեպի Ռուսաստան: Օրինակ՝ վարսահարդարները, կարողները, արհեստավորները գնում են ավելի*

շատ Ռուսաստան, քանի որ լեզվի խնդիր չկա, քիչ թե շատ գիտեն, աշխատանք կարողանում են գտնել»:

Քաղաքացիական-քաղաքական ակտիվիստների կորուստ

«*ԼԳԲՏ համայնքից ինչ-որ մաս նաև ներգրավված է սոցիալական շարժումների, ինչ-որ քաղաքացիական ակտիվիզմի մեջ, հետևաբար, եթե այդ անհատներն էլ հեռանան երկրից, նաև այդ սոցիալական շարժումները, դրանց մասնակիցները, պայքարող մարդիկ էլ կքչանան, ու արդյունքում հասարակությունը կարող է կամաց-կամաց հետ գնալ*»:

«*ԼԳԲՏ համայնքից ինձ ծանոթ բոլոր մարդիկ ներգրավված են որևէ սոցիալ-քաղաքական ակտիվիզմի կամ քաղաքական կուսակցության մեջ, որոնք փորձում են ինչ-որ մի բան փոխել: Շատ ակտիվ են: Բնակչության մյուս հատվածի համեմատ՝ ԼԳԲՏ-ներն ավելի շատ են ներգրավված ակտիվիզմի մեջ, քան բնակչության ոչ ԼԳԲՏ հատվածը, որ այդքան էլ ներգրավված չէ փոփոխության պրոցեսների մեջ, ապատիկ վիճակում է*»:

Բազմազանության և բազմակարծության կորուստ, ժողովրդավարության անկում

«*Մենք էլի նույնն ենք մնում՝ միատիպ, միաչափ հասարակության մեջ, որտեղ բոլորը կարծես հրաման կատարեն՝ ստանդարտ ձևով հագնված, ստանդարտ մտածում են, գործում են, որոնք ոչ մի ալտերնատիվ բան չեն առաջարկում: Մենք առանց այն էլ մոնոէթնիկ հասարակություն ենք, շատ ունենք ուրիշի, տարբերի պակասը, և դա ենք կորցնում: Հենց այդ ուրիշը, տարբերը պետք է հասարակության տաբուները կոտրի ու տանի դեպի ազատագրում: Տաբուացված հասարակությունը չի կարող զարգացած լինել, զարգացման միտում չունի: Մարդիկ ավելի են փակվելու իրենց մեջ, չեն գործելու, այսինքն՝ հասարակության պոտենցիալը չի իրացվելու*»:

«*Երկիրը կորցնում է իր բազմազանությունը, ինչը ոչ պակաս կարևոր բան է. հասարակությունը գնալով դառնում է ավելի միատարր, միատեսակ մտածող: Ուրիշ կերպ մտածող, ուրիշ հայացքներ ունեցող, ուրիշ ձև հագնվող մարդը նույնիսկ, երբ գնում է երկրից, երկիրը հայտնվում է միատարրության մեջ, որտեղ բոլորը միանման են, իսկ դա ավելի կառավարելի հասարակություն է: Երկիրը կորցնում է իր բազմազանությունը և սա նույնպես անդառնալի կորուստ է, իմ կարծիքով*»:

«*ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչները, իրենք իրենց ներկայությամբ հիշեցնում են այն մասին, որ բազմազանությունը որպես փիլիսոփայական*

գաղափար, որն ընկած է նաև ժողովրդավարության, մարդու իրավունքների և այլնի հիմքում, շատ կարևոր է: Ինչու՞, որովհետև նման մարդիկ հասարակությունում մեզ հիշեցնում են, որ կարող են մարդիկ տարբեր լինել, տարբեր դիրքորոշումներ ունենալ՝ քաղաքական և այլն, այդ տարբերի մասին են անընդհատ մեզ հիշեցնում: ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչները չեն թողնում, որ տոտալիտար համակարգ կառուցվի. տարբերությունը, բազմազանությունը չի կարող թույլ տալ, որ տոտալիտար հասարակակարգ ստեղծվի: Եթե իրենք ոչ թե արտագաղթեն, այլ մնան և պայքարեն, ավելի լավ կլինի և կկանխեն տոտալիտարին անցումը»:

ՄԱՍ 2

ԷՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխատաշուկայում խտրականության առկայությունը շատ թանկ կարող է արժենալ կազմակերպության և, առավել ևս, տնտեսության համար: Այն մեծապես խոչընդոտում է «խտրական պետության» (պետություն, որտեղ կիրառվում է խտրականություն այս կամ այն խմբի անձանց նկատմամբ՝ հիմնված նրանց այս կամ այն հատկանիշի վրա) տնտեսական աճին:

Տնտեսության մեջ և աշխատաշուկայում խտրականություն նշանակում է աշխատողների, գործընկերների, մատակարարների տարանջատում «յուրայինների» և «օտարների», ինչն էլ նշանակում է երկրների, կազմակերպությունների կամ անհատների մակարդակով տարբերվող վերաբերմունք հավասար հնարավորություններ ունեցող տնտեսական սուբյեկտների նկատմամբ:

Աշխարհի խոշորագույն կազմակերպությունների 85 տոկոսը, որոնք ներառված են «Ֆորտուն 500» (Fortune 500)[29] ցանկի մեջ, գիտակցելով ԼԳԲՏ համայնքի նկատմամբ խտրականության բացասական ազդեցությունը տնտեսական ցուցանիշների վրա, պատվիրում են տարբեր հետազոտություններ, որոնք սահմանում են աշխատաշուկայում ԼԳԲՏ անձանց նկատմամբ առկա խտրականության տնտեսական արժեքը, ինչի առանցքի շուրջ էլ կառուցում են իրենց ռազմավարությունը: «Ամերիկյան առաջադիմության կենտրոն» 2012թ. մարտին հրապարակել է իր «Խըտրականության գինը բիզնեսում» (“The Costly Business of Discrimination”) զեկույցը, որտեղ ասվում է, որ ամերիկյան կազմակերպությունները ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության պատճառով կորցրել են 64 միլիոն դոլար:[30]

2011 թվականին «Տաղանդի նորարացման կենտրոնը» (Center for Talent Innovation, CTI[31]) իրականացրեց իր առաջին հետազոտությունը ԼԳԲՏ աշխատողների վերաբերյալ, ովքեր աշխատավայրում ստիպված էին թաքցնել իրենց սեռականությունը, մատնանշելով, որ նրանց 40 տոկոսը քիչ հավանական է, որ կվստահի իր գործատուին:

Համաշխարհային նավթագազային հսկա Բրիթիշ Փեթրոլիում ընկերությունը (British Petroleum, BP[32]), կլինի CTI-ի նոր՝ «ԼԳԲՏ Գլոբալ» (“LGBT Global”) լայնածավալ հետազոտության գլխավոր կորպորատիվ

---

[29] Ֆորտուն 500 (անգլերեն) http://fortune.com/fortune500/wal-mart-stores-inc-1/

[30] Խտրականության գինը բիզնեսում (անգլերեն) http://cdn.americanprogress.org/wp-content/uploads/issues/2012/03/pdf/lgbt_biz_discrimination.pdf

[31] Տաղանդի նորարացման կենտրոն (անգլերեն) http://www.talentinnovation.org

[32] Բրիթիշ Փեթրոլիում (անգլերեն) http://www.bp.com/en/global/corporate/about-bp.html

հովանավորներից մեկը, որի արդյունքները կհրապարակվեն 2015 թվականին:[33]

Արտագաղթի սոցիալ-տնտեսական հետևանքների վերաբերյալ հետազոտություններ շատ կան՝ ինչպես ընդունող, այնպես էլ ուղարկող երկրների համար: Բայց ուղարկող երկրների դեպքում այդ հետազոտությունները գերազանցապես կենտրոնացած են մասնավոր տրանսֆերտների վրա և մատնանշում են դրանց տնտեսական օգտակարությունը: Ընդ որում՝ հիմնական մոտեցումն այն է, որ ուղարկող երկրներն արտագաղթի հետևանքով տնտեսապես ավելի շատ շահում են, քան թե տուժում: Օգուտները կապվում են գերազանցապես տրանսֆերտների, ինչպես նաև գործազրկության հաղթահարման և սփյուռքի ցանցերի հետ [34]:

Հայաստանն աշխարհի այն երկրներից է, որի տնտեսությունը չափազանց շատ է կախված արտասահմանյան մասնավոր տրանսֆերտներից: Համաշխարհային բանկի վերջին հետազոտություններից մեկի համաձայն՝ Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) նկատմամբ արտասահմանյան մասնավոր տրանսֆերտների ծավալով Հայաստանն աշխարհում 6-րդ պետությունն է՝ Տաջիկստանից, Ղրղզստանից, Նեպալից, Լեսոտոյից և Մոլդովայից հետո[35]: Հարց է առաջանում, թե Հայաստան տրանսֆերտներ ուղարկողներն ավելի շատ արտագաղթա՞ծ, թե՞ պարզապես կարճաժամկետ (առավելագույնը մինչև 1 տարով) սեզոնային աշխատանքի մեկնած մեր հայրենակիցներն են: Կոնկրետ հետազոտություններ այս ուղղությամբ արված չեն: Սակայն դատելով ներքոնշյալ մի քանի թվերից, կարելի է պնդել, որ, ըստ էության, կան *արդեն արտագաղթած (օրինակ՝ մեկ տարուց ավելի երկրից բացակայող) հայաստանցիներ, որոնք շարունակում են գումարներ փոխանցել, ընդ որում՝ հիմնականում Հայաստանում մնացած իրենց ընտանիքի անդամներին, իսկ որոշ դեպքերում նաև ընտանիքի անդամ չհանդիսացող հարազատներին կամ ընկերներին:*

---

[33] ԲՓ-ն սատարում է գլոբալ խտրականության հետազոտությանը (անգլերեն) http://www.ft.com/intl/cms/s/0/6c0d3d2a-924d-11e3-9e43-00144feab7de.html

[34] Միգրացիայի ազդեցությունը ուղարկող երկրների վրա. ի՞նչ մենք գիտենք: Լուկա Տ. Կացելի, Ռոբերտ Է. Բ. Լուկաս և Թեոդորա Քսենոջիանի, Հունիս 2006, էջ 5 (անգլերեն)
http://www.un.org/esa/population/migration/turin/Symposium_Turin_files/P11_Katseli.pdf

[35] Միգրացիան և դրամական փոխանցումների հոսքերը. վերջին միտումները եւ հեռանկարը, էջ 5 (անգլերեն)
http://siteresources.worldbank.org/INTPROSPECTS/Resources/334934-1288990760745/MigrationandDevelopmentBrief21.pdf

Այսպես, Հայաստանի Կենտրոնական բանկի հարցումների համաձայն՝ արտասահմանից տրանսֆերտներ ստանում են Հայաստանի տնային տնտեսությունների 14-15%-ը[36]: Տնային տնտեսությունների՝ մոտավորապես այդքան տոկոսն էլ (12%) արտասահմանում միգրանտ ընտանիքի անդամ ունի[37]: Այս երկու թվերի՝ միմյանց մոտ լինելուց կարելի է ենթադրել, որ, առաջին՝ արտասահմանյան տրանսֆերտներ ստանում են հիմնականում այն ընտանիքները, որոնք արտասահմանում գտնվող ընտանիքի անդամ(ներ) ունեն, և երկրորդ՝ նրանք, ովքեր արտասահմանում գտնվող ընտանիքի անդամ(ներ) ունեն՝ հիմնականում տրանսֆերտներ ստանում են: Քանի որ, ըստ Ազգային վիճակագրական ծառայության հետազոտության, 2009թ. մեկնած և 2012թ. դրությամբ չվերադարձած անդամ ունեցող տնային տնտեսությունների՝ այդ չվերադարձած անդամների 33.8%-ի բացակայելու տևողությունը կազմել է մեկ տարի և ավելի[38], կարելի է պնդել, որ դեպի Հայաստան իրենց ընտանիքի անդամներին դրամական փոխանցումներ կատարողների մի մասը, ըստ էության, արդեն արտագաղթածներ են (այն արտագաղթածները, ովքեր դեռ ամբողջ ընտանիքով չէ, որ հեռացել են)[39]:

---

[36] Սպառողների վստահության ցուցանիշը 2014թ. առաջին եռամսյակում, էջ 6 https://www.cba.am/AM/Consumer%20Confidence%20Index/CCI%20%202014.1.pdf

[37] Համաշխարհային բանկ. «Հայաստանի Հանրապետություն. Կուտակում, մրցակցություն և միակցելիություն», էջ 33 (անգլերեն) http://www-wds.worldbank.org/external/default/WDSContentServer/WDSP/IB/2013/10/03/000333037_20131003152734/Rendered/PDF/811370revision0Box0379837B00PUBLIC0.pdf

[38] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2013թ., էջ 25 http://www.armstat.am/file/article/poverty_2013a_2.pdf

[39] Համաշխարհային բանկի՝ վերևում հիշատակված հետազոտությունում նշված է նաև, որ միգրանտներ ունեցող ընտանիքների թիվը վերջին տարիներին Հայաստանում էականորեն նվազել է: Սակայն արտասահմանյան մասնավոր տրանսֆերտների ծավալը շարունակում է աճել (http://smsmta.am/?menu_id=52): Սա նշանակում է, որ ամենայն հավանականությամբ՝ տրանսֆերտներ Հայաստան ուղարկում են նաև մարդիկ, ովքեր Հայաստանում գտնվող ընտանիքի անդամ այլևս չունեն: Այդպիսի արտագաղթածների թիվը, դատելով տրանսֆերտներ ստացող ընտանիքների կշռի (14-15%) և արտասահմանում ընտանքի անդամ ունեցող ընտանիքների թվի (12%) փոքր տարբերությունից, կարելի է ենթադրել, որ մեծ չէ, բայց նաև աննշան չէ: Հակառակ դեպքում (եթե տրանսֆերտներ ուղարկում են միայն Հայաստանում ընտանիքի անդամ ունեցողները), երբ էականորեն նվազեց միգրանտ ընտանիքի անդամ ունեցող տնային տնտեսությունների թիվը, դա պետք է էականորեն դրսևորվեր նաև տրանսֆերտների ծավալում: Մինչդեռ տրանսֆերտները, թեև 2010-2013թթ ավելի դանդաղ սկսեցին աճել մինչճգնաժամային 2009-ի համեմատ, սակայն, այնուամենայնիվ, շարունակեցին աճել: Այս ամենից հետևում է, որ որոշ արտագաղթած-

Ինչպես ցույց տվեցին հարցումներն ու փորձագետների գնահատականները, ***արտագաղթող ԼԳԲՏ անձինք սովորաբար տրանսֆերտներ չեն ուղարկում Հայաստան*** և հաճախ կտրում են կապը Հայաստանում մնացած հարազատների հետ: Պատճառն այն է, որ ԼԳԲՏ անձինք արտագաղթում են խտրականության դրսևորումների հետևանքով, այդ թվում՝ ընտանիքի ու հարազատների կողմից վատ վերաբերմունքի կամ վատ վերաբերմունքի մտավախության պատճառով[40]: Հիմք ընդունելով այն ենթադրությունը, որ արտագաղթող ԼԳԲՏ անձանց դեպքում տրանսֆերտներ ուղարկելու հավանականությունը շատ փոքր է[41], մեկ ԼԳԲՏ անձի արտագաղթի տնտեսական հետևանքները (Հայաստանի համար) հաշվարկող մեր մոդելում մենք կանտեսենք տրանսֆերտների հանգամանքը: Այսինքն սովորական միգրացիայի դեպքում ուղարկող հասարակության համար դրական հետևանքները (տրանսֆերտներ, ցանցերի ստեղծում, գործազրկության հաղթահարում և այլն) առկա են և նույնիսկ կարող են գերազանցել բացասական հետևանքներին (արտագաղթողի մանկության տարիներին ու կրթության համար հասարակության կատարած ներդրումներ, աշխատուժի, ուղեղների արտահոսք և այլն): Սակայն ԼԳԲՏ համայնքի պարագայում ուղարկող հասարակության համար վերը նշված դրական գործոնները շատ ավելի քիչ նշանակություն ունեն կամ բացակայում են, և առկա են միայն բացասական սոցիալ-տնտեսական հետևանքներ: Վնասները, որ ուղարկող հասարակությունը կրում է մեկ մարդու արտագաղթից, կապված են արտագաղթողի մանկության տարիներին և կրթության համար հասարակության կատարած ներդրումների կորստի հետ (ուղեղների արտահոսք), այն կապիտալի կորստի հետ, որն

ներ դեպի Հայաստան տրանսֆերտներ ուղարկում են ոչ միայն իրենց ընտանիքի անդամներին, այլև, ամենայն հավանականությամբ, երբեմն իրենց հարազատներին կամ ընկերներին:

[40] ԼԳԲՏ անձանց արտագաղթելու միտումների մասին կարող եք մանրամասն կարդալ Մաս 1. Հոմոֆոբիա և ԼԳԲՏ էմիգրացիա բաժնից սկսած, էջ 17

[41] Որ բազմաթիվ արտագաղթած հայաստանցիներ (որոնց թվում նաև, ենթադրաբար, ԼԳԲՏ ներկայացուցիչներ) տրանսֆերտներ չեն ուղարկում, երևում է հետևյալ թվերի համեմատությունից: 2011թ. Համաշխարհային բանկի «Միգրացիա և մասնավոր դրամական փոխանցումներ» զեկույցում նշված է, որ Հայաստանի բնակչության շուրջ 28 տոկոսը, որը կազմում է գրեթե 870 000 մարդ, ներկայումս այլ երկրներում է գտնվում: Սակայն, ինչպես արդեն նշվեց, միգրանտ ընտանիքի անդամ ունեն Հայաստանում մնացած ընտանիքների միայն 12 տոկոսը, իսկ արտասահմանից տրանսֆերտ ստանում են միայն 14-15 տոկոսը: Սա նշանակում է, որ շատ հայաստանցիներ ընդհանարպես գումարներ չեն ուղարկում:

արտագաղթողները վերցնում են իրենց հետ երկիրը լքելիս, ամբողջական պահանջարկի նվազման հետ և հոգեբանական ազդեցության հետ[42]: Այս հիմնական գործոններից երկուսի (հասարակության ներդրումների և ամբողջական պահանջարկի նվազման) ֆինանսական արժեքը հնարավոր է չափել, ինչի փորձն էլ արված է այս հետազոտությունում: Իմանալով մեկ անձի արտագաղթից Հայաստանի տնտեսական վնասները (միայն վնասները՝ առանց հաշվարկելու օգուտները), մենք կենթադրենք, որ դա միջինում մոտավորապես նույնն է, ինչ մեկ ԼԳԲՏ անձի արտագաղթից տնտեսական վնասներն են: Ու քանի որ հետազոտության նպատակը ԼԳԲՏ անձանց արտագաղթի տնտեսական հետևանքները բացահայտելն է, ուստի մեր մոդելում կարիք չկա հաշվարկելու արտագաղթից որևէ տնտեսական օգուտ (քանի որ ինչպես նշված է վերևում՝ ԼԳԲՏ անձինք աննշան չափով են տրանսֆերտներ ուղարկում կամ ընդհանրապես չեն ուղարկում):

Մեկ արտագաղթողից հասարակության կրած տնտեսական վնասները կապված են հիմնականում արտագաղթողի կրթության համար կատարված ծախսերի հետ, ինչպես նաև այն եկամուտների հետ (օրինակ՝ աշխատավարձի տեսքով), որոնք կարող էին ստացվել, եթե անհատը մնար և աշխատեր Հայաստանում: Արտագաղթի հոգեբանական էֆեկտը դրամական արտահայտությամբ չափելը գրեթե անհնար է, իսկ կապիտալի ծավալը, որն արտագաղթողները վերցնում են իրենց հետ՝ երկիրը լքելիս, դժվար է գնահատելը, քանի որ համապատասխան հարցումներ կամ հետազոտություններ Հայաստանից արտագաղթողների համար չկան: Դժվար է գնահատել նաև արտագաղթողի մանկության տարիներին նրա վրա կատարված ծախսերը, քանի որ դրանք կապված են այն ժամանակի հետ, որ ծնողները (մայրը) հատկացրել են երեխային՝ կտրվելով աշխատանքից, ինչպես նաև երեխայի նպաստի տեսքով ստացվող գումարների հետ[43]:

---

[42] Էմիգրացիան և դրա ազդեցությունը ուղարկող երկրների վրա, խմբագրված Բեթ Ջ. Աշի կողմից, էջ 9, էջ 124 (անգլերեն)
http://www.rand.org/content/dam/rand/pubs/monograph_reports/2006/MR244.pdf

[43] Մայրության ու մանկության նպաստների մասին վիճակագրական տվյալները շատ աղքատիկ են և ներառում են միայն 1996-ից հետո եղած տվյալներ: Ընդ որում՝ այդ նպաստները երբեմն տրվել են 2, երբեմն՝ մինչև 6 տարեկան երեխաների համար: Այնուամենայնիվ, դրանք փոքր գումարներ են, ուստի կարելի է նաև անտեսել՝ միաժամանակ նկատի ունենալով, որ հասարակությունն իրականում

Ինչ վերաբերում է արտագաղթողի կրթության վրա հասարակության կատարած ծախսերին, ապա դրանք, ինչպես ընդունված է մասնագիտական գրականությունում[44], հաշվարկվում են կրթության ոլորտի վրա պետության կատարած դրամական ծախսերն աշակերտների թվի հետ հարաբերելով: Այնուհետև հաշվարկվել է, թե այսպես կոչված միջին վիճակագրական արտագաղթողը, եթե մնար Հայաստանում ու աշխատեր (կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվեր), որքան եկամուտներ կապահովեր իր (հետևաբար նաև՝ հասարակության) համար: Միջին վիճակագրական արտագաղթողի տարիքը հաշվարկվել է այն ենթադրության հիման վրա, որ արտագաղթողները գերազանցապես 15-44 տարեկաններն են և որ արտագաղթողների տարիքային կազմն էականորեն չի տարբերվում 15-44 տարեկան հայաստանցիների տարիքային կազմից:

Չստացված եկամուտների կորուստը հաշվարկվել է Հայաստանի 2011-2013թթ. միջին ամսական անվանական աշխատավարձի հիման վրա, ենթադրելով, որ չարտագաղթելու դեպքում անհատը կարող էր մինչև թոշակի անցնելը լրացուցիչ եկամուտներ ապահովել: Ունենալով չստացված աշխատավարձի մասով կորուստները մեկ միջին արտագաղթողի համար՝ հեշտությամբ կարելի է հաշվարկել չստացված համախառն եկամուտը՝ չստացված ՀՆԱ-ն (քանի որ աշխատավարձը Հայաստանում կազմում է ՀՆԱ-ի 43-50%-ը): Իսկ քանի որ Հայաստանի ՀՆԱ-ի 22-24%-ը բյուջեի եկամուտներն են, չստացված ՀՆԱ-ի ցուցանիշն ունենալուց հետո կարելի է նաև հաշվել, թե մեկ արտագաղթողից (և նաև ԼԳԲՏ բոլոր անձանց արտագաղթից) պետական բյուջեն ինչ չափով եկամուտներ չի ստանում:

Այս չորս ցուցանիշները (կրթության վրա ծախսեր, չստացված աշխատավարձ, չգեներացված ՀՆԱ և բյուջեի՝ չստացված եկամուտներ) հաշվարկված են 2011-2013թթ. մեկ միջին վիճակագրական արտագաղթողի համար՝ երբեմն բերված դոլարի՝ 2014թ. հունվարի 1-ի գնողունակության ու հաշվի առնելով միջազգային համեմատությունների համար համարժեքության ապահովման անհրաժեշտությունը (Հայաստանի գնողունա-

---

ավելի շատ է ծախսում անհատի վրա, քան թե զուտ կրթության համար կատարված բյուջետային հատկացումներն են:

[44]Էմիգրացիան և դրա ազդեցությունը ուղարկող երկրների վրա, խմբագրված Բեթ Ջ. Աշի կողմից, էջ 33 , էջ 175-178 (անգլերեն)
http://www.rand.org/content/dam/rand/pubs/monograph_reports/2006/MR244.pdf

կության համարժեքը՝ Purchasing Power Parity-ն՝ PPP): Վերջում կանխատեսված են նաև այդ ցուցանիշների արժեքները՝ ընթացիկ միտումների պահպանման դեպքում:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿՈՐՍՏԻ ՀԱՇՎԱՐԿԸ

Արտագաղթողի կրթության վրա հասարակության կատարած ներդրումներն ու արտագաղթի պատճառով ամբողջական պահանջարկի չստացված չափը հաշվարկելու համար մեզ անհրաժեշտ է իմանալ, թե ինչ տարիքային խմբի ու ինչ որակավորման մարդիկ են արտագաղթել 2011-2013թթ: Սակայն հայտնի չէ ինչպես արտագաղթողների տարիքային կազմը, այնպես էլ նրանց որակավորումը: Ուստի մենք կարող ենք ընդունել, որ արտագաղթողները մոտավորապես նույն տարիքային կազմն ունեն, ինչ Հայաստանի ամբողջ բնակչությունը: Ավելին, կարելի է պնդել, որ արտագաղթողները գերազանցապես 15-44 տարեկաններն են[45]: Միջին արտագաղթողի տարիքը հաշվելուց հետո անհրաժեշտ է հաշվել, թե որքան գումար է հասարակությունը ծախսել նրա կրթության և որակավորման վրա ու որքան եկամուտներ նա կարող էր միջինում ապահովել իր (և միաժամանակ՝ հասարակության) համար՝ մնալով հայրենիքում:

17 տարեկանի կրթության ու որակավորման համար, որպես կանոն, միջինում հասարակությունն ավելի քիչ ծախսեր է կատարում, քան թե 25

[45] Արտագաղթել տեսականորեն կարող են բոլորը: Սակայն ընդունված է համարել, որ արտագաղթում են հիմնականում 18-59 տարեկանները, ընտանիքներով արտագաղթելու դեպքում՝ ավելանում են նաև 0-ից 17 տարեկան երեխաները: Քանի որ մեր մոդելում մենք հաշվարկելու ենք միջին վիճակագրական արտագաղթողի տարիք, այն կարելի էր հաշվել 0-ից 59 տարեկանների տարիքային կազմի հիման վրա: Բայց, քանի որ, հետազոտությունների համաձայն՝ արտագաղթելու ցանկությունը շատ ավելի մեծ է 18-45 տարեկանների շրջանում («Միգրացիայի կառավարման գործոնները Հայաստանում», էջ 11, Երևան, 2011), իսկ փաստացի արտագաղթողների մեջ 0-ից 14 և 46-ից 59 տարիքի մարդկանց թիվը կարելի է համարել մոտավորապես նույնը, հետևաբար արտագաղթողի միջին վիճակագրական տարիք հաշվարկելու համար առավել նպատակահարմար է վերցնել 18-ից 45 տարեկանների թվային կազմը: Քանի որ պաշտոնական վիճակագրությունը տարիքային կազմի տվյալները տալիս է ոչ թե ըստ ամեն տարիքային խմբի, այլ 5 տարի ընդգրկող տարիքային խմբերի կտրվածքով (օրինակ՝ 15-19 տարեկաններ)՝ մենք կվերցնենք 15-44 տարեկանների խումբը: Արդյունքում՝ մեր ստացած միջին վիճակագրական արտագաղթողի տարիքը հավանաբար ավելի փոքր կլինի, քան կա իրականում, սակայն արտագաղթի վնասները հաշվարկելիս մի քանի, նույնիսկ՝ 5-7 տարվա տարբերությունն իրականում էական նշանակություն չունի առնվազն այն պատճառով, որ մեծ տարիքի դեպքում փոքր տարիքի համեմատ պակաս է ստացվում ապագա եկամուտը (ՀՆԱ-ն), սակայն շատ է ստացվում հասարակության կատարած ներդրումը:

տարեկանի համար, քանի որ 17 տարեկանը միայն միջնակարգ, իսկ 30 տարեկանը՝ նաև բարձրագույն կրթություն կարող է ունենալ, ինչպես նաև լինել մագիստրոս կամ գիտությունների թեկնածու: Ավելին, 30 տարեկանն ավելի բարձր որակավորում ունի՝ շնորհիվ նաև կյանքի ու աշխատանքային փորձի: Բայց երբ մենք հաշվարկում ենք միջինացված տարիքը ((17+30)/2=23.5), ապա ստացվում է, որ երկու 23.5 տարեկանների կրթության ու որակավորման վրա հասարակությունը մոտավարապես նույն չափի ներդրումներ է արել, ինչ մեկ 17 և մեկ 30 տարեկանների կրթության ու որակավորման համար: Նմանապես՝ եթե 25 տարեկանը մինչև թոշակի անցնելը (65 տարեկանը[46]) ունի 40 տարի, ապա 45 տարեկանն ունի 20 տարի: Երկուսի աշխատանքային տարիների գումարը 60 է, որը նույնն է, ինչ երկու 35 տարեկանների ((25+45)/2) աշխատանքային տարիների գումարը: Ուստի արտագաղթողի միջին տարիք որոշելով նրա կրթության և ապագա եկամուտների հաշվարկ կատարելը ճշգրտության թույլատրելի շեղում է տալիս, փոխարենը՝ պարզեցնում է հաշվարկները:

Որպեսզի որոշենք միջին արտագաղթողի տարիքը 2011-2013թթ, մեզ անհրաժեշտ է ունենալ 2011-2013թթ. արտագաղթածների թիվը և թե այդ տարիներին 15-44 տարեկանները որքան են եղել (և յուրաքանչյուր տարիքային խումբ 15-44 տարեկան բոլոր հայաստանցիների քանի տոկոսն է կազմում): 2011-ին ՀՀ սահմանային անցակետերում մեկնումների և ժամանումների տարբերությունը կազմել է 43820[47], 2012-ին՝ 42811, իսկ

[46] Անձին կենսաթոշակ է նշանակվում 63 տարեկանում, եթե այդ պահին նա ունի առնվազն 10 տարվա աշխատանքային ստաժ (ՀՀ օրենքը պետական կենսաթոշակների մասին, Հոդված 9 (http://www.arlis.am/documentview.aspx?docID=64540): Բայց եթե այդ պահին նա ունի 10 տարուց պակաս աշխատանքային ստաժ՝ կենսաթոշակ (ծերության նպաստ) է նշանակվում 65 տարեկանում, (ՀՀ օրենքը պետական նպաստների մասին, Հոդված 29 http://epension.am/am/law_article?content.cid=17): Մեր հաշվարկներում մենք վերցրել ենք 65 տարեկանը ոչ թե այն պատճառով, որ ենթադրել ենք՝ բոլոր արտագաղթողները 10 տարուց պակաս ստաժ են ունենալու, այլ քանի որ կյանքի միջին տևողությունը և՛ աշխարհում, և՛ Հայաստանում շարունակում է մեծանալ, որի պատճառով ավելացվում է նաև աշխատանքային կենսաթոշակի անցնելու տարիքը: Օրինակ՝ 20 տարի առաջ Հայաստանում կանանց աշխատանքային թոշակ նշանակում էին 55 տարեկանում: Քանի որ, ինչպես կերևա հետագա հաշվարկներում, մեր մոդելում միջին արտագաղթողը թոշակի անցնելու է ավելի քան 30 տարի հետո, հաստատապես նպատակահարմար է վերցնել 65-ը, որը համընկնում է 10 տարուց պակաս ստաժ ունեցողների թոշակի անցնելու տարիքի հետ:

[47] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 138 http://armstat.am/file/article/sv_12_12a_530.pdf

2013-ին՝ 31188[48], 2011-2013թթ. միասին՝ 117819 մեկնում: Իմանալու համար, թե արտագաղթած այս 117 հազար, 819 քաղքացիներն ինչ տարիքային խմբերի են պատկանում (վերջում որոշելու ենք միջին տարիքային խումբը), պետք է ունենանք 15-44 տարեկան բնակչության թվի ցուցանիշները: Այդ ցուցանիշները բերված են Աղյուսակ 1-ում: Քանի որ որոշելու ենք նաև արտագաղթողի միջին տարիք, իսկ մինչև 15 և 44-ից 65 տարիքային խմբերի թվերը վիճակագրական հաշվարկներում հիմնականում չեզոքացնում են միմյանց, պայմանականորեն բոլոր արտագաղթողներին կհամարենք 15-44 տարեկան, հետևաբար աղյուսակում 15-44 տարեկաններին կհամապատասխանի 100 տոկոս ցուցանիշը:

Աղյուսակ 1. ՀՀ բնակչության 15-44 տարեկանների թիվը 2011-2013թթ.[49]

Տարիքային խումբ	Թիվը 2011-ին (հազար մարդ)	Թիվը 2012-ին (հազար մարդ)	Թիվը 2013-ին (հազար մարդ)	Միջինը 2011-2013թթ.	Հարաբերակցություն ընդամենի նկատմամբ, 2011-2013-ի միջինի համար (տոկոս)
15-19	272.3	228.7	214.4	238.5	16.6
20-24	317.5	291.8	285.6	298.3	20.7
25-29	300.1	273.1	278	283.7	19.8
30-34	250.3	225.3	234	236.5	16.5
35-39	206.2	188.6	191.9	195.6	13.6
40-44	198.1	176.5	176.9	183.8	12.8
Ընդամենը	1544.5	1384	1380.8	1436.4	100.0

Այժմ 2011-2013թթ. արտագաղթի 117 հազար, 819 թիվը բաշխենք ըստ 15-44 տարեկանների տարիքային խմբերի: Միաժամանակ, քանի որ վիճակագրությունը տալիս է 5 տարվա կտրվածքով տվյալներ (օրինակ՝ 20-24

[48] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 139 http://www.armstat.am/file/article/sv_12_13a_520.pdf
[49] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2013, էջ 29 http://www.armstat.am/file/doc/99477293.pdf

տարեկաններ), դա միջինացնենք մեկ տարիքի համար (22): Ինչպես երևում է Աղյուսակ 2-ից, 2011-2013թթ. արտագաղթածների միջին տարիքը կազմել է 28.4: Ընդ որում՝ 28.4 տարեկան միջին ցուցանիշն առանձին-առանձին վերցնելու ենք 2011թ., 2012թ. և 2013թ. համար:

Աղյուսակ 2. Արտագաղթածների միջին տարիքի հաշվարկը

Տարիքային խումբ (1)	Հարաբերակցությունն ընդամենի նկատմամբ, 2011-2013-ի միջինի համար (տոկոս) (2)	Արտագաղթածների տարիքային կազմը (մարդ) (3)	Միջին տարիքի հաշվարկը (4=1x3)
17	16.6	19557.954	332485.2 (17*19557.95)
22	20.7	24388.533	536547.7
27	19.8	23328.162	629860.4
32	16.5	19440.135	622084.3
37	13.6	16023.384	592865.2
42	12.8	15080.832	633394.9
Ընդամենը	100	117819	3347237.8
Միջին տարիքի հաշվարկը	-	-	3347237.8/117819= 28.4

2011-ին 28.4 տարիք ունեցողը ծնվել է 1983-ին, 2012-ին 28.4 տարեկանը՝ 1984-ին, իսկ 2013-ին 28.4 տարեկանը՝ 1985-ին:

1983-ին ծնված երիտասարդը դպրոց գնացել է 1990-ի սեպտեմբերից 2000-ի հունիսը: Ընդունենք, որ նրա կրթությունը ֆինանսավորվել է 1991-ի հունվարից մինչև 2000-ի վերջ, որպեսզի վերցնենք 1991-2000թթ. կրթության վրա բյուջեից կատարվող հատկացումների գումարը և բաժանենք ընդհանուր աշակերտների թվի վրա: Մեզ պետք է ստանալ, թե այդ 10 տարիներին որքան ֆինանսավորում է ընկել մեկ երիտասարդին, որը

2011-ին 28.4 տարեկան է եղել: Դրա համար պետք է ունենալ 1991-2000թթ. կրթությանը հատկացված ֆինանսավորումը և յուրաքանչյուր տարի աշակերտների թվաքանակը:

Կրթության վրա պետության կատարած ծախսերը 1991թ–ին ու 1992-ին պաշտոնական աղբյուրներում չկան (ռուբլին դոլարի համարժեքին բերելու հետ կապված դժվարությունների պատճառով): Կան միայն 1993-ից սկսած ծախսերը: Սակայն 1991-ի ու 1992-ի թվերը կարելի է ստանալ՝ ընդունելով, որ դրանք հետագա տարիներին փոխվել են ՀՆԱ-ի փոփոխության չափով: 1992-ին 1991-ի համեմատ ՀՆԱ-ն նվազել է 41.8%-ով, իսկ 1993-ին 1992-ի համեմատ նվազել է 8.8%-ով[50]: Հետևաբար 1993թ. կրթության հատկացումների գումարը (38 միլիոն, 705 հազար դոլար[51]) հիմք ընդունելով՝ 1992-ի համար ստանում ենք 42 միլիոն, 440 հազար դոլար, իսկ 1991-ի համար՝ 72 միլիոն, 921 հազար դոլար: Թվերը բերված են Աղյուսակ 4-ում: Մինչ այդ Աղյուսակ 3—ում հաշվարկված է 1991-2000թթ. ծախսված դոլարի համարժեքը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ, ինչպես նաև գնողունակության համարժեքի գործակիցը:

Աղյուսակ 3. Գնաճի ու գնողունակության պարիտետի (PPP) ճշգրտող գործակիցը

Թվականը (1)	Գնաճը ԱՄՆ-ում, տարեկան, %,[52] (2)	2014թ. հունվարի 1-ի գնողունակու-թյան բերման գործակից (3)	Գնողունակության պարիտետի գործակիցը Հայաստանում[53] (4)	Ճշգրտող գործակից (5=3x4)
1991	4.2	1.784	3.34	5.957
1992	3.0	1.712	3.34	5.717

[50] ՀՆԱ-ի աճը (տարեկան %) (անգլերեն) http://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?page=4

[51] Ճշգրտված խնայողությունները. կրթության ծախսերը (ընթացիկ ԱՄՆ դոլար) (անգլերեն) http://data.worldbank.org/indicator/NY.ADJ.AEDU.CD?page=4

[52] Գնաճ, սպառողական գներ (տարեկան %) (անգլերեն) http://data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.ZG?page=4

[53] Գործակիցն հաշվարկված է Համաշխարհային բանկի տվյալների հիման վրա՝ http://data.worldbank.org/indicator/PA.NUS.PPPC.RF

1993	3.0	1.662	3.34	5.551
1994	2.6	1.613	3.34	5.389
1995	2.8	1.573	3.34	5.253
1996	2.9	1.530	3.34	5.109
1997	2.3	1.487	3.34	4.965
1998	1.6	1.453	3.34	4.854
1999	2.2	1.430	3.34	4.777
2000	3.4	1.400	3.34	4.675
2001	2.8	1.354	3.34	4.521
2002	1.6	1.317	3.34	4.398
2003	2.3	1.296	3.34	4.328
2004	2.7	1.267	3.34	4.231
2005	3.4	1.233	3.34	4.120
2006	3.2	1.193	2.5	2.982
2007	2.9	1.156	2	2.312
2008	3.8	1.123	1.67	1.876
2009	-0.4	1.082	2	2.164
2010	1.6	1.087	2	2.173
2011	3.2	1.069	2	2.139
2012	2.1	1.036	2	2.073
2013	1.5	1.015	2	2.030

Քանի որ հաշվարկվելու են նաև 1984 և 1985 թվականներին ծնվածների կրթության վրա հասարակության կատարած ծախսերը, հաջորդ աղյուսակներում հաշվարկված են նաև 2001-2002թթ. ցուցանիշները:

Աղյուսակ 4. Կրթության ծախսերը՝ բերված 2014թ. հունվարի 1-ի գնողունակության

Թվականը (1)	Կրթության ֆինանսավորումը (հազար դոլար)[54] (2)	Ճշգրտող գործակիցը (3)	Կրթության ծախսերը՝ ճշգրտված PPP-ով ու բերված 2014-ի հունվարի 1-ի գնողունակության (հազար դոլար) (4=2x3)
1991	72921	5.957	434390.4
1992	42440	5.717	242629.5
1993	38705	5.551	214851.5
1994	35157	5.389	189461.1
1995	39218	5.253	206012.2
1996	27555	5.109	140778.5
1997	31955	4.965	158656.6
1998	43376	4.854	210547.1
1999	42184	4.777	201513
2000	43605	4.675	203853.4
2001	48454	4.521	219060.5
2002	54705	4.398	240592.6

[54] Ճշգրտված խնայողությունները. կրթության ծախսերը, 1994-1998թթ տվյալները՝ (անգլերեն) http://data.worldbank.org/indicator/NY.ADJ.AEDU.CD?page=3, իսկ 1999-2002թթ. տվյալները՝ http://data.worldbank.org/indicator/NY.ADJ.AEDU.CD?page=2

Աղյուսակ 5. 1983-1985թթ. ծնված մեկ աշակերտի միջնակարգ կրթության վրա կատարված ծախսերի հաշվարկը 1991-2000 թվականներին

Տարեթիվը (1)	Աշակերտների թիվը, հազար մարդ[55] (2)	Կրթության ծախսերը՝ ճշգրտված PPP-ով ու բերված 2014-ի հունվարի 1-ի գնողունակության (հազար դրամ) (3)	1 աշակերտի ծախսը՝ ճշգրտված PPP-ով ու բերված 2014-ի հունվարի 1-ի գնողունակության (4=3/2)
1991	591.9	434390.4	733.9
1992	600.8	242629.5	403.9
1993	604.2	214851.5	355.6
1994	593.4	189461.1	319.3
1995	572	206012.2	360.2
1996	584.7	140778.5	240.8
1997	591.8	158656.6	268.1
1998	596.6	210547.1	352.9
1999	583.5	201513	345.4
2000	564.6	203853.4	361.1
2001	533.2	219060.5	410.8
2002	520.6	240592.6	462.2
Ընդամենը 1991-2000թթ. (1983թ. ծնվածի համար)			**3741.0**
Ընդամենը 1992-2001թթ. (1984թ. ծնվածի համար)			**3417.9**
Ընդամենը 1993-2002թթ. (1985թ. ծնվածի համար)			**3476.2**

[55] 1991-1994թթ տվյալները՝ Տնտեսական բարեփոխումների առանձնահատկություններն ու փուլերը Հայաստանում 1991-1998թթ., էջ 41 http://armstat.am/file/article/tntbar_91_98a_13.pdf; 1995-1998թթ թվյալները՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2001, էջ 91 http://armstat.am/file/doc/99452283.pdf, 1999-2001թթ տվյալները՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2002, էջ 123 http://armstat.am/file/doc/653.pdf, իսկ 2002-ինը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2003, էջ 104 http://armstat.am/file/doc/632.pdf

Այսպիսով՝ 1983թ. ծնված և 2011-ին արտագաղթած մեկ քաղաքացու կրթության համար հասարակության կատարած ներդրումները, 2014-ի հունվարի 1-ի դոլարի գնողունակությամբ հաշվարկած, կազմում են 3741 դոլար: 1984 և 1985 թվականներին ծնվածների դեպքում ստանում ենք 3417.9 և 3476.2 դոլար ցուցանիշները: **2011-2013թթ. մեկ արտագաղթածի միջինացված ցուցանիշը կլինի 3545 դոլար՝ 2014թ. հունվարի մեկի գնողունակությամբ հաշվարկված և հաշվի առած PPP-ն:**

ՀՆԱ-Ի ԿՈՐՈՒՍՏՆ ՈՒ ԲՅՈՒՋԵԻ՝ ՉՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

Սովորաբար, երբ որևէ քաղաքացի արտագաղթում է, ուղարկող երկրի ՀՆԱ-ն ավելի պակաս է լինում, քան թե եթե նա մնար այդ երկրում և աշխատեր կամ գործարարությամբ զբաղվեր (իհարկե եթե արտագաղթելով՝ տրանսֆերտներ չի ուղարկում): Եթե օրինակ, 2011-ին արտագաղթում է 43 հազար մարդ, ապա նրանց բոլորին չպետք է դիտարկել որպես վարձու աշխատող: Այդ 43 հազարի առնվազն մի քանի տոկոսը կարող էին գործարարությամբ զբաղվել՝ վարձելով աշխատողներ, արժեք ստեղծելով ու ավելացնելով ՀՆԱ-ն: Այսպիսով՝ *երբ արտագաղթողների թիվը հազարներով է չափվում, դա նշանակում՝ ոչ միայն աշխատուժի առաջարկի նվազում աշխատաշուկայում, այլև՝ աշխատուժի պահանջարկի նվազում, ինչն ավելի ցածր ՀՆԱ է գեներացնում, քան թե եթե այդ մարդիկ չարտագաղթեին:*

Հաշվելու համար, թե որքան ՀՆԱ է կորցնում երկիրը մեկ տարում՝ արտագաղթի հետևանքով, անհրաժեշտ է ունենալ միջին աշխատավարձը, ՀՆԱ-ի մեջ աշխատավարձի տեսակարար կշիռը, արտագաղթածների տարիքային կազմը և գործազրկության մակարդակը: Արտագաղթածների տարիքային կազմի ցուցանիշները պաշտոնական վիճակագրությունը չի տալիս, սակայն նախորդ բաժնում հաշվել էինք 2011-2013թթ. արտագաղթածի միջին տարիքը՝ ստանալով 28.4 ցուցա-նիշը: Ինչ վերաբերում է աշխատավարձի ու ՀՆԱ-ի հարաբերակցությանը, ապա այն ևս կարելի է ստանալ՝ հիմվելով պաշտոնական վիճակագրության վրա:

Աշխատավարձի գործոնը: Աղյուսակ 6-ում հաշվարկված է միջին աշխատավարձը՝ ըստ դոլարի՝ հիմնված PPP-ի վրա ու բերված 2014-ի հունվարի 1-ի դոլարի գնողունակության համարժեքին:

Աղյուսակ 6-ի չորրորդ սյունակի թվերը, փաստորեն, չգեներացված ՀՆԱ-ից աշխատավարձի մասն է միայն՝ մեկ աշխատող- արտագաղթողի դեպքում (մեկ ամսում): Սակայն ՀՆԱ-ն միայն աշխատավարձով չէ, որ գեներացվում է: Աշխատավարձը ՀՆԱ-ի միայն մի մասն է: Իմանալով, թե աշխատավարձը ՀՆԱ-ի կոնկրետ որ մասն է՝ կարելի է հաշվարկել, թե որքան ՀՆԱ չի ստացվել մեկ արտագաղթողի արտագաղթի պատճառով:

Աղյուսակ 6. 2011-2013թթ. միջին աշխատավարձը՝ ճշգրտված PPP-ով ու բերված 2014թ. հունվարի մեկի գնողունակության

Տարեթիվը	Միջին անվանական աշխատավարձը, դրամ	Դոլարի միջին փոխարժեքը	Միջին անվանական աշխատավարձը՝ ճշգրտված PPP-ով ու բերված 2014թ. հունվարի մեկի գնողունակությամբ[56], դոլար
2011	115265[57]	372.5[58]	661.9
2012	121374[59]	401.76[60]	626.3
2013	151076[61]	409.63[62]	748.7

Հատեղծված ՀՆԱ-ի հաշվարկը: Աղյուսակ 7-ում հաշվարկված է, թե ՀՆԱ-ի որ մասն է անվանական աշխատավարձը:

[56] Այս սյան տվյալները ստացված են միջին աշխատավարձը դոլարի փոխարժեքի բերելով, այնուհետև համապատասխան ճշգրտող գործակցով բազմապատկելով (ճշգրտող գործակիցները տրված են 3-րդ աղյուսակի 5-րդ սյունակում): Այդ գործակիցներն են՝2011-ի համար՝ 2.139, 2012-ի համար՝ 2.073 և 2013-ի համար՝ 2.030:

[57] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 7, http://armstat.am/file/article/sv_12_11a_03.pdf

[58] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 127, http://armstat.am/file/article/sv_12_11a_430.pdf

[59] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 7, http://armstat.am/file/article/sv_12_12a_03.pdf

[60] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 125, http://armstat.am/file/article/sv_12_12a_430.pdf

[61] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 7, http://armstat.am/file/article/sv_12_13a_03.pdf

[62] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 130, http://armstat.am/file/article/sv_12_13a_430.pdf

Աղյուսակ 7. ՀՆԱ-ն և ընդհանուր անվանական աշխատավարձը 2011-2013թթ.

Տարե-թիվը (1)	Անվանական ՀՆԱ-ն, մլն դրամ[63] (2)	1 աշխատողի միջին տարեկանանվանական աշխատա-վարձը, դրամ[64] (3)	Զբաղ-վածների թիվը, մարդ[65] (4)	Ընդհանուր անվանական աշխատավարձ, տարեկան, մլն դրամ (5=3x4)	Աշխատա-վարձի բաժինը ՀՆԱ-ում, % (6=[5/2]x100)
2011	3777945	1383180	1175100	1625374.8	43.0
2012	4000722	1456488	1172800	1708169.1	42.7
2013	4272895	1812912	1164300	2110773.4	49.4

Ինչպես երևում է Աղյուսակ 7-ի վերջին սյունակից, 2011-ին Հայաստանի անվանական ՀՆԱ-ի միայն 43%-ն է եղել աշխատավարձը, 2012-ին՝ 42.7%-ը իսկ 2013-ին՝ 49.4%-ը: Այժմ, Աղյուսակ 6-ի վերջին սյունակի տվյալները հաշվի առնելով, հաշվարկենք, թե մեկ աշխատող-արտագաղ-թողի գեներացրած ՀՆԱ-ն 2011-2013թթ. որքան է եղել (PPP-ով՝բերված 2014թ. հունվարի 1-ի դոլարի գնողունակության):

[63] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թվականի հունվար-մարտին 2011-ի ցուցանիշը՝ http://armstat.am/file/article/sv_03_13a_112.pdf , էջ 11, իսկ 2012 և 2013-ի ցուցանիշները՝Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թվականի հունվար-մարտին, էջ 11 http://armstat.am/file/article/sv_03_14a_112.pdf

[64] Միջին տարեկան անվանական աշխատավարձը ստանում ենք միջին ամսական աշխատավարձի ցուցանիշները (բերված Աղյուսակն 6-ի առաջին սյունակում) բազմապատկելով 12-ով:

[65] 2011-ի և 2012-ի ցուցանիշները՝ Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2013, էջ 47 http://armstat.am/file/article/trud_13_6.pdf

Աղյուսակ 8. Մեկ աշխատող- արտագաղթողի ստեղծած ՀՆԱ-ն, դոլար, PPP-ով՝ բերված 2014-ի հունվարի 1-ի դոլարի գնողունակության, ամսական

Տարեթիվը (1)	Միջին աշխատավարձը՝ ճշգրտված PPP-ով ու բերված 2014թ. հունվարի մեկի գնողունակության, դոլար, (2)	Աշխատավարձի բաժինը ՀՆԱ-ում, %, (3)	Մեկ աշխատող-արտագաղթողի ստեղծած ՀՆԱ-ն, PPP, 2014-ի հունվարի 1-ի գնողունակությամբ, դոլար, (2x100%/3)
2011	661.9	43.0	1539.3
2012	626.3	42.7	1466.7
2013	748.7	49.4	1515.6

Բայց մեկ աշխատող-արտագաղթողի փոխարեն մենք պետք է ստանանք մեկ արտագաղթողի (ներառյալ՝ պոտենցիալ գործազուրկ արտագաղթողի) գեներացրած ՀՆԱ-ն (տնտեսագիտորեն ևս նման հաշվարկն իմաստ ունի, քանի որ գործազուրկը ևս, ըստ էության մասնակցում է ՀՆԱ-ի ձևավորմանը՝ ստեղծելով մրցակցություն աշխատանքի շուկայում, նվազեցնելով աշխատավարձն ու հետևաբար՝ ՀՆԱ-ի կշռում զբաղվածի աշխատավարձի տեսակարար կշիռը): Դա ստանալու համար մեզ անհրաժեշտ է որոշել՝ արտագաղթողների որ մասը, ենթադրաբար, Հայաստանում կլիներ աշխատող, և որ մասը՝ գործազուրկ: Ընդունենք, որ այդ հարաբերակցությունը նույնն է, ինչ ամբողջ երկրի պարագայում: 2011-ին զբաղվածության ցուցանիշը (տնտեսապես ակտիվ բնակչության մեջ) եղել է 82%[66]: Քանի որ արտագաղթողների հիմնական մասը տնտեսապես ակտիվ է, իսկ մեր մոդելում էլ միջին վիճակագրական մեկ արտագաղթողի միջին տարիքը 28.4 է, առնվազն միջնակարգ կրթությամբ հայաստանցի է, մենք, սխալի որոշ աստիճանով հանդերձ, կհամարենք, որ բոլոր արտագաղթողները կա՛մ զբաղվածներ են, կա՛մ գործազուրկներ

[66] Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2012, էջ 16, http://armstat.am/file/article/trud_12_3.pdf

(չկան սովորողներ, կենսաթոշակառուներ, տնային տնտեսություն վարողներ)[67]:

Աղյուսակ 9-ում հաշվարկված է, թե մեկ արտագաղթողը (և ոչ թե մեկ աշխատող-արտագաղթողը) որքան ՀՆԱ կստեղծեր, եթե մնար Հայաստանում:

Աղյուսակ 9. Մեկ արտագաղթողի չստեղծած ՀՆԱ-ն արտագաղթին հաջորդող մեկ տարում

Տարեթիվ (1)	Մեկ աշխատող-արտագաղթողի չստեղծած ՀՆԱ-ն, PPP, 2014-ի հունվարի 1-ի գնողունակությամբ, դոլար (2)	Զբաղվածության մակարդակ, % (3)	Մեկ արտագաղթողի չստեղծած ՀՆԱ-ն, PPP, 2014-ի հունվարի 1-ի գնողունակությամբ, դոլար, ամսական (4=2x3)	Մեկ արտագաղթողի չստեղծած ՀՆԱ-ն, PPP, 2014-ի հունվարի 1-ի գնողունակությամբ, դոլար, տարեկան (5=4x12)
2011	1539.3	82	1262.2	15146.4
2012	1466.7	83[68]	1217.4	14608.8
2013	1515.6	84[69]	1273.1	15277.2

Աղյուսակ 9-ի հինգերորդ սյան տվյալները ցույց են տալիս, թե 2011-2013թթ. արտագաղթած մեկ հայաստանցին որքան ՀՆԱ կստեղծեր իր ար-տագաղթելուց հետո մեկ տարվա ընթացքում, եթե մնար Հայաստա-

[67] Կարելի է նաև համարել, որ արտագաղթողները՝ որպես աշխատանքային ռեսուրս, տնտեսապես ակտիվ բնակչության և տնտեսապես ոչ ակտիվ բնակչության միջև բաշված են այնպես, ինչպես ամբողջ առկա բնակչությունը: Այդ դեպքում արտագաղթողների 37%-ը 2011-ի համար կհամարվի տնտեսապես ոչ ակտիվ, և մնացած 63%-ից նոր կհաշվարկվի զբաղվածների թիվը՝ հիմք ընդունելով զբաղվածության 82% մակարդակը:

[68] Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2013, էջ 17, http://armstat.am/file/article/trud_13_3.pdf

[69] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թվականի հունվար-մարտին, էջ 98, http://armstat.am/file/article/sv_03_14a_141.pdf

նում: Ընդ որում այդ տվյալները հաշվարկված են այնպիսի մոդելով, որտեղ ենթադրվում է, թե արտագաղթողներն արտագաղթել են հենց տարվա սկզբին: Իրականում մարդիկ արտագաղթում են ողջ տարվա ընթացքում և 2011-ի դեկտեմբերին արտագաղթողին ավելի հարմար կլիներ 2012-ի համար հաշվարկված մեր ցուցանիշը: Սակայն տարբերությունները մեծ չեն և կարելի է պահպանել մեր մոդելի շրջանակում կատարված հաշվարկները:

Այսինքն՝ 2011-2013թթ. արտագաղթած մեկ Հայաստանցին, եթե այլևս չի վերադառնում Հայաստան, միջինում մոտ 15 հազար, 11 դոլարի ՀՆԱ չի ստեղծում իր արտագաղթին հաջորդող մեկ տարում Հայաստանի համար:

Սակայն ՀՆԱ չի ստեղծվում նաև արտագաղթին հաջորդող երկրորդ, երրորդ տարում և այսպես շարունակ, մինչև այդ մարդը կենսաթոշակի կանցներ:

Եթե իրական ՀՆԱ-ն երկրում չաճի, ապա այլ հավասար պայմաններում 2011-ին արտագաղթած յուրաքանչյուր հայաստանցու պատճառով ճիշտ նույն չափով՝ 15011 դոլարի պակաս ՀՆԱ կստեղծվի Հայաստանում: Բայց իրական ՀՆԱ-ն աճում է՝ վերջին երեք տարիներին միջինում 5%-ով[70]: Դա նշանակում է, որ 2011-ին արտագաղթած 1 հայաստանցուց 2012-ին Հայաստանում 15761 դոլարով (15011*1.05=15761) պակաս ՀՆԱ կստեղծվի:

Մեզ անհրաժեշտ է այժմ վերադառնալ մեկ միջին արտագաղթողի տարիքին (28.4)՝ գտնելու համար, թե նա 2011-ին, 2012-ին կամ 2013-ին

[70] Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում (Աղյուսակ 2) 2014-2025 թվականների համար կանխատեսված է ՀՆԱ իրական 55.62% աճ: Սակայն այս թվերը, կարծում ենք, իրատեսական չեն: Նախ՝ 2014թ Հայաստանի տնտեսական աճն այս ծրագրում կանխատեսված է 5.5%-ի չափով, սակայն տնտեսական ակտիվության ցուցանիշը (որի հիման վրա հաշվարկվում է ՀՆԱ-ն) 2014-ի առաջին կեսին՝ հունվար-հունիսին կազմել է 3.4% http://armstat.am/file/article/sv_06_14a_03.pdf, իսկ Արժույթի միջազգային հիմնադրամը դեռևս 2014-ի ապրիլին իջեցրել էր 2014-ի կանխատեսումը մինչև 4.3%, իսկ 2015-ինը՝ 4.5% (Համաշխարհային տնտեսության հեռանկարներ, ապրիլ 2014, էջ 65, (անգլերեն) http://www.imf.org/external/pubs/ft/weo/2014/01/pdf/text.pdf): Այնուամենայնիվ, մենք առաջիկա տարիների համար նկատի կունենանք հենց ՀՆԱ իրական աճի 5% ցուցանիշը, որը համընկնում է Համաշխարհային բանկի՝ 2014-2017թթ կանխատեսման հետ (Global economic prospects, June 2014, p.100 http://www.worldbank.org/content/dam/Worldbank/GEP/GEP2014b/GEP2014b.pdf)՝ առնվազն 2014-2015թվականների համար լինելով փոքր-ինչ լավատեսական:

արտագաղթելով՝ միջինում քանի տարի դեռ կաշխատեր (մինչև թոշակի անցնելը), եթե մնար Հայաստանում:

Ե՛վ կանանց, և՛ տղամարդկանց դեպքում Հայաստանում թոշակի անցնելու տարիքը 65 է և այն փոքր է կյանքի միջին տևողությունից: Այսինքն՝ և՛ 2011-ին, և՛ 2012-ին և՛ 2013-ին արտագաղթած մեկ միջին հայաստանցին մինչև թոշակի անցնելն ունի (Հայաստանում մնալու դեպքում) 36.7 տարի:

Հաշվարկների արդյունքում, բոլոր 36.7 տարիների համար կստանանք մոտ 1 միլիոն, 222 հազար, 744 դոլար (PPP-ով, 2014-ի հունվարի մեկի գնողունակությամբ):

Այսպիսով՝ 2011-2013թթ. Հայաստանից արտագաղթած մեկ հայաստանցու դեպքում (եթե այդ հայաստանցին կապն ընդհանրապես կտրում է Հայաստանի հետ և տրանսֆերտներ չի ուղարկում) Հայաստանը, այսօրվա գներով հաշված, միջինում կորցնում է մոտ 1 միլիոն, 223 հազար դոլարի (PPP-ով) եկամուտ (ՀՆԱ) առաջիկա 37 տարիներին:

Վերադառնալով 2011-2013թթ. արտագաղթողների թվին, և համարելով, որ նրանց 5%-ը ԼԳԲՏ համանքի ներկայացուցիչ է, կստացվի, որ խտրականության պատճառով ԼԳԲՏ անձանց արտագաղթի հետևանքով Հայաստանը 2011-ին չի ստացել 33 միլիոն, 185 հազար դոլար (PPP, 2014-ի հունվարի 1-ի գնողունակությամբ), 2012-ին՝ 31 միլիոն, 277 հազար դոլար, 2013-ին՝ 23 միլիոն, 817 հազար դոլար (Աղյուսակ 10):

Աղյուսակ 10. ԼԳԲՏ անձանց արտագաղթի տնտեսական հետևանքները

Տա-րե-թիվը (1)	Արտա-գաղ-թողների թիվը (2)	Արտագաղ-թողներից ԼԳԲՏ անձինք (5%-ը) (3=2/100x5)	Մեկ արտագաղթողի չստեղծած ՀՆԱ-ն, PPP, 2014-ի հունվարի 1-ի գնողունակությամբ, դոլար, տարեկան (4)	Արտագաղթող ԼԳԲՏ անձանց չստեղծած ՀՆԱ-ն, PPP, 2014-ի հունվարի 1-ի գնողունակությամբ, դոլար, տարեկան (5=3x4)
2011	43820	2191	15146.4	33185762
2012	42811	2141	14608.8	31277441
2013	31188	1559	15277.2	23817155

Որպեսզի այս թվերը բերվեն ընթացիկ գների՝ համապատասխան տարիների գնողունակության և անտեսվի PPP-ն (ՀՆԱ-ի հետ համեմատելու համար), պետք է ճշգրտենք այն գործակցով, որով ժամանակին բազմապատկել էինք: Այդ գործակիցներն էին՝2011-ի համար 2.139, 2012-ի համար՝ 2.073 և 2013-ի համար՝ 2.030 (այս գործակիցները ներկայացրել էինք Աղյուսակ 3-ի հինգերորդ սյան մեջ): Հաշվարկի արդյունքները Աղյուսակ 11-ի երրորդ սյան մեջ են:

Աղյուսակ 11. ԼԳԲՏ անձանց արտագաղթի տնտեսական հետևանքները, ընթացիկ գներով

Տարեթիվը (1)	Արտագաղթող ԼԳԲՏ անձանց չստեղծած ՀՆԱ-ն, PPP, 2014-ի հունվարի 1-ի գնողունակությամբ, դոլար, տարեկան, (2)	Արտագաղթող ԼԳԲՏ անձանց չստեղծած ՀՆԱ-ն, դոլար, տարեկան, ընթացիկ գներով (3= 2/Աղյուսակ 3-ի 5-րդ սյան համապատասխան գործակիցներին)	ՀՆԱ, ընթացիկ գներով, դոլար[71] (4)	Արտագաղթող ԼԳԲՏ անձանց չստեղծած ՀՆԱ-ն՝ համապատասխան տարվա ՀՆԱ-ի նկատմամբ, % (5=3x100/4)
2011	33185762	15514615	10142342770	0.153
2012	31277441	15080808	9958217880	0.151
2013	23817155	11732589	10432169571	0.114

Այսպիսով՝ ինչպես երևում է Աղյուսակ 11-ից, 2011-ի Հայաստանի ՀՆԱ-ն կարող էր 0.153 տոկոսով ավելի մեծ լինել, եթե խտրականության հետևանքով արտագաղթ չլիներ, 2012-ին՝ 0.151 տոկոսով մեծ, իսկ 2013-ին՝ 0.114 տոկոսով մեծ:

Այս՝ չստեղծված ՀՆԱ-ի պատճառով չեն ստացվում նաև բյուջեի եկամուտներ: Հայաստանում 1 միավոր ՀՆԱ-ն 2011-ին ստեղծել է մոտ 0.205 միավոր բյուջեի եկամուտներ, 2012-ին՝ 0.219 միավոր, 2013-ին՝ 0.219 միավոր բյուջեի եկամուտներ (Աղյուսակ 12):

[71] ՀՆԱ (ընթացիկ ԱՄՆ դոլար) (անգլերեն)
GDP (current US$) http://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD

Աղյուսակ 12. Բյուջեի չստացված եկամուտները ԼԳԲՏ անձանց արտագաղթի պատճառով, ընթացիկ գներով

Տարեթիվը (1)	Արտագաղթող ԼԳԲՏ անձանց չստեղծած ՀԱԱ-ն, դոլար, տարեկան, ընթացիկ գներով (2)	Պետական բյուջեի հարկային եկամուտներ և պետական տուրքեր, % ՀԱԱ[72] (3)	Պետական բյուջեի՝ չստացված հարկեր՝ ԼԳԲՏ անձանց արտագաղթի պատճառով, դոլար, ընթացիկ գներ (4=2/100%x3)	Պետական բյուջեի՝ չստացված հարկեր՝ ԼԳԲՏ անձանց արտագաղթի պատճառով, դոլար, 2014-ի հունվարի մեկի գնողունակությամբ[73] (5)
2011	15514615	20.51	3182048	3403127
2012	15080808	21.89	3301189	3421071
2013	11732589	21.89	2568264	2606788

Աղյուսակ 12-ի չորրորդ սյան տվյալները ցույց են տալիս, թե բոլոր ԼԳԲՏ արտագաղթողների հեռանալուց միայն մեկ տարի հետո ընկած ժամանակահատվածում պետական բյուջեն որքան եկամուտ պակաս է ստանում՝ ընթացիկ գներով հաշվարկված: 2014-ի հունվարի մեկի գնողունակությամբ նույն ցուցանիշը 5-րդ սյունում է գրված: Այսինքն՝ 2011-ի սկզբին բոլոր ԼԳԲՏ արտագաղթածների պատճառով բյուջեն չի ստանում մոտ 3.4 միլիոն դոլար (2014-ի գնողունակությամբ)՝ հենց 2011-ին: 2011-ին արտագաղթողներից, սակայն, բյուջեն եկամուտներ չի ստանում նաև 2012-ին և 2013-ին: Հետևաբար, 2011-ի ցուցանիշը պետք է բազմա-պատկել 3-ով, ստանալու համար, թե 2011-ին արտագաղթողներից բյուջեն որքան եկամուտներ չի ստացել նաև 2012-ին 2013-ին (2014-ի հունվարի մեկի գնողունակությամբ): Նմանապես՝ 2012-ի ցուցանիշը պետք է բազմապատկել 2-ով: Առաջին դեպքում կստացվի մոտ 10 միլիոն, 209 հազար դոլար, երկրորդ դեպքում՝ 6 միլիոն, 842 հազար դոլար:

[72] 2011-ի տվյալները վերցված են Կառավարության 2013թ բյուջետային ուղերձից՝ էջ 100-101, Աղյուսակ 2.4, իսկ 2012 և 2013թթ տվյալները՝ Կառավարության 2014թ. բյուջետային ուղերձից՝ էջ 111-112, Աղյուսակ 2.4

[73] Հաշվարկված է երրորդ աղյուսակի առաջին սյան մեջ բերված տվյալների հիման վրա

Այսինքն՝ 2011-ին բոլոր ԼԳԲՏ արտագաղթածներից պետական բյուջեն 2011-2013թթ. չի ստացել մոտ 10 միլիոն դոլար, իսկ 2012-ին արտագաղթածներից պետական բյուջեն 2012-ին և 2013-ին չի ստացել մոտ 7 միլիոն դոլար: 2011-2013թթ. բոլոր ԼԳԲՏ արտագաղթողներից 2011-2013թթ. պետական բյուջեի կորուստներն ամբողջությամբ կկազմեն մոտ 19 միլիոն 657 հազար դոլար (2014-ի հունվարի 1-ի դոլարի գնողունակությամբ):

Կարելի է նաև հաշվել, թե 2011-2013թթ. արտագաղթողները մեկնելուն հաջորդող մոտ 36 տարիներին (մինչև թոշակի անցնելը) որքան գումար կարող էին վճարել բյուջե, եթե մնային Հայաստանում: Այս դեպքում ևս նպատակահարմար է դոլարը ներկայացնել 2014թ. հունվարի 1-ի գնողունակությամբ և առանց PPP-ի գործակցի:

Մենք հաշվել էինք, որ 2011-2013թթ. Հայաստանից արտագաղթած մեկ հայաստանցու դեպքում (եթե այդ հայաստանցին կապն ընդհանրապես կտրում է Հայաստանի հետ և տրանսֆերտներ չի ուղարկում) Հայաստանը, 2014թ. հունվարի 1-ի գներով հաշված, միջինում կորցնում է մոտ 1 միլիոն, 223 հազար դոլարի ՀՆԱ (PPP-ով հաշված): Ինչպես երևում է Աղյուսակ 12-ի երրորդ սյան մեջ, պետական բյուջեի հարկային եկամուտներն ու տուրքերը 2011-ին կազմել են ՀՆԱ-ի 20.51%-ը, իսկ 2012-ին և 2013-ին՝ 21.89%-ը (միջինում՝ 21.43%): Եթե համարենք, որ այս ցուցանիշը կպահպանվի առաջիկա 36 տարիներին, կստանանք, որ մեկ Հայաստանցու արտագաղթի պատճառով 2014-ի հունվարի մեկի գնողունակությամբ պետական բյուջե չմտած հարկային եկամուտները կկազմեն 131 հազար, 44 դոլար (մեկ արտագաղթողի կողմից 1 միլիոն, 223 հազար դոլար չստացված ՀՆԱ-ի 21.43%-ը՝ հանած PPP-ի գործակցով՝ 2-ով նախկինում ավելացված գումարը): Եթե մեկ արտագաղթողի կողմից այդքան եկամուտներ չեն ստացվել, ապա

2011-2013թթ. 5891 ԼԳԲՏ արտագաղթողների[74] համար պետական բյուջե չստացված եկամուտներն առաջիկա ավելի քան 36 տարիների համար կլինի մոտ 1 միլիարդ 841 միլիոն, 145 հազար դոլար (2014-ի հունվարի 1-ի գնողունակությամբ):

[74] Սա դարձյալ 2011-2013 թթ. ընդհանուր արտագաղթողների թվի 5%-ն է (նախապես ընդունել էինք, որ բնակչության 5%-ն է ԼԳԲՏ): 10-րդ աղյուսակի 3-րդ սյան 3 տարիների տվյալների հանրագումարն է:

Շեշտենք դարձյալ, որ այս թիվն առաջիկա ավելի քան 36 տարիներին է վերաբերում:

Մենք կարող ենք նաև հաշվել, թե արտագաղթի՝ վերջին տարիների տեմպի պահպանման պարագայում որքան կկորցնի հասարակությունը՝ ՀՆԱ-ի, բյուջեի եկամուտների և արտագաղթողի կրթության համար կատարված ներդրումների տեսքով:

Սկսենք կրթության ծախսերից: 2011-2013թթ. մեկ արտագաղթածի կրթության համար հասարակությունը կատարել էր միջինում մոտ 3545 դոլար ծախս (2014թ. հունվարի մեկի գնողունակությամբ հաշվարկված և հաշվի առած PPP-ն): Այդ արտագաղթածները 1983-1985թթ. ծնվածներն էին: Նրանց կրթության համար ծախսերը հաշվարկված են 1991-2002թթ. կրթության բնագավառի ընդհանուր ծախսերի հիման վրա: Մինչև 2025թ. արտագաղթողների համար էլ պետք է ունենալ նաև 2003-2014թթ. կրթության ծախսերը, եթե միջին վիճակագրական արտագաղթողի տարիք ենք ընդունում դարձյալ 28.4-ը: Այդ տվյալները կան Համաշխարհային բանկի կայքում[75] (բացառությամբ 2013-2014 թվականների, որոնց համար կվերցնենք 2012-2013թթ. միջինը): Ունենալով նաև 2003-2014թթ. աշակերտների թվի տվյալները[76]՝ կարող ենք հաշվել 1 աշակերտի գծով ծախսերը ճիշտ այնպես, ինչպես առաջին բաժնում է արված: Հաշվարկների արդյունքում ստացվում է, որ 2014-2025թթ. արտագաղթող մեկ միջին վիճակագրական, 28.4 տարեկան հայաստանցու կրթության համար, 2014թ. հունվարի մեկի գնողունակությամբ և PPP-ով ճշգրտված, միջինում ծախսվել է 7582 դոլար:

---

[75] Ճշգրտված խնայողությունները. կրթության ծախսերը (ընթացիկ ԱՄՆ դոլար) (անգլերեն) http://data.worldbank.org/indicator/NY.ADJ.AEDU.CD?page=2, http://data.worldbank.org/indicator/NY.ADJ.AEDU.CD?page=1, http://data.worldbank.org/indicator/NY.ADJ.AEDU.CD,

[76] Ազգային վիճակագրական 2006, 2010 և 2013թթ տարեգրքերի «Կրթություն և մշակույթ» բաժնից

Աղյուսակ 13. Կրթության գծով ծախսերը 28.4 տարեկան միջին վիճակագրական արտագաղթողի համար (2014-2025թթ.)

Համապատասխան տարեթվին ծնվածների համար	Կրթության գծով ծախսերը 28.4 տարեկան միջին վիճակագրական արտագաղթողի համար, դոլար, 2014-ի հունվարի մեկի գնողունակությամբ, PPP-ով ճշգրտված
1986թ. (դպրոցում սովորել է 1994-2003թթ.)	3679.8
1987թ. (սովորել է 1995-2004թթ.)	4079.5
1988թ.	4695.9
1989թ.	5393.8
1990թ.	6254.3
1991թ.	7119.5
1992թ.	7851.7
1993թ.	8739.0
1994թ.	9643.0
1995թ.	10502.1
1996թ.	11230.5
1997թ.	11799.1
Միջինը	7582.3

Ինչ վերաբերում է ՀՆԱ-ին, ապա մենք արդեն հաշվել էինք, որ 2011-2013թթ. արտագաղթած մեկ հայաստանցին, եթե այլևս չի վերադառնում Հայաստան, միջինում մոտ 15 հազար, 11 դոլարի ՀՆԱ (2014թ. հունվարի մեկի դոլարի գնողունակությամբ, PPP-ով ճշգրտված) չի ստեղծում իր արտագաղթին հաջորդող մեկ տարում: Եթե ընդունենք, որ առաջիկա տարիներին Հայաստանից արտագաղթի տեմպը կպահպանվի 2011-2013թթ. միջին տարեկանի չափով (39273 մարդ), ՀՆԱ աճը լինի մոտ 5 տոկոս[77], իսկ PPP-ի գործակիցը՝ կպահպանվի, ապա կստացվի, որ 2014-2025թթ. արտագաղթող 1 միջին հայաստանցու դեպքում հասարակությու-

[77] Տես 37-րդ տողատակը

նը կկորցնի միջինում 20 հազար, 907 դոլար: Եթե ընդունենք նաև, որ միջին տարեկան արտագաղթողներից 5%-ը ԼԳԲՏ ներկայացուցիչներ են, կարող ենք հաշվարկել նաև ԼԳԲՏ ներկայացուցիչների արտագաղթից ՀՆԱ կորուստը: Եվ վերջում, հիմք ընդունելով այն, որ բյուջեի հարկային եկամուտները, ըստ Հայաստանի կառավարության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ծրագրի, առաջիկա 12 տարիների համար կազմելու են ՀՆԱ-ի 23.8-27.4%-ը[78] (միջինում՝ 25.35%), կարող ենք հաշվել նաև բյուջեի չստացված եկամուտները ԼԳԲՏ անձանց արտագաղթի պատճառով: Աղյուսակ 14-ում ներկայացված են այդ հաշվարկների արդյունքները:

Աղյուսակ 14. ՀՆԱ-ի և բյուջեի կորուստը ԼԳԲՏ արտագաղթողից, 2014-2025թթ.

Տարեթիվը (1)	Մեկ արտագաղթողի չստեղծած ՀՆԱ-ն, PPP, 2014-ի հունվարի 1-ի գնողունակությամբ, դոլար, տարեկան (2)	Տարեկան 1963 ԼԳԲՏ արտագաղթողի չստեղծած ՀՆԱ-ն, PPP, 2014-ի հունվարի 1-ի գնողունակությամբ, դոլար (3)	Տարեկան 1963 ԼԳԲՏ անձանց արտագաղթի պատճառով բյուջեի չստացած եկամուտները, դոլար, 2014-ի հունվարի 1-ի գնողունակությամբ (4)
2014թ	15762	30515232	3867806
2015թ	16550	32040800	4061171
2016թ	17377	33641872	4264107
2017թ	18246	35324256	4477349
2018թ	19158	37089888	4701143
2019թ	20116	38944576	4936225
2020թ	21122	40892192	5183085
2021թ	22178	42936608	5442215
2022թ	23287	45083632	5714350

[78] Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, էջ 41-42, Աղյուսակ 1
http://minfin.am/index.php?cat=242&lang=1

2023թ	24451	47337136	5999982
2024թ	25674	49704864	6300092
2025թ	26958	52190688	6615170
Միջինը՝ 2-րդ, ընդամենը՝ 3-րդ և 4-րդ սյուների համար	20907	485701744	61562696

Բոլոր 12 տարիների (2014-2025թթ.) ավելի քան 23500 ԼԳԲՏ արտագաղթողների համար ստացվում է ավելի քան 485 միլիոն դոլար կորուստ (2014-ի հունվարի մեկի գնողունակությամբ, PPP-ով ճշգրտված) ՀՆԱ-ի համար՝ արտագաղթողի արտագաղթելուց միայն մեկ տարի հետո: Բյուջեն այդ 12 տարիներին չի ստանա մոտ 61 միլիոն դոլար (2014թ. հունվարի մեկի գնողունակությամբ), դարձյալ միայն արտագաղթելուց 1 տարի հետո: Իրականում 2014-ին արտագաղթող 1963 ԼԳԲՏ ներկայացուցիչներից կորուստ կլինի ոչ միայն 2014-ին, այլև 2015-ին, 2016-ին և այդպես շարունակ: Այս հանգամանքը հաշվի առնելու դեպքում՝ 2014-ից 2025թթ. արտագաղթած բոլոր ԼԳԲՏ ներկայացուցիչների պարագայում ՀՆԱ-ի կորուստը կգնահատվի մոտ 2 միլիարդ, 916 մլն դոլար (2014-ի հունվարի մեկի գնողունակությամբ, PPP-ով ճշգրտված), իսկ բյուջեինը՝ 370 մլն դոլար (2014-ի հունվարի մեկի գնողունակությամբ):

Հիմնական եզրակացությունները: **Խտրականության պատճառով Հայաստանից հեռացող ԼԳԲՏ անձինք սովորաբար տրանսֆերտներ չեն ուղարկում, ինչը նշանակում է, որ նրանց արտագաղթից հայ հասարակությունը հիմնականում ֆինանսապես տուժում է: Այդ վնասներից դրամական արտահայտությամբ չափելի են նրանք, որոնք կապված են արտագաղթողի (ԼԳԲՏ կամ ոչ ԼԳԲՏ) մանկության տարիներին և կրթության համար պետության ծախսերի հետ, այն եկամուտների հետ, որ արտագաղթողը կապահովեր Հայաստանում աշխատելու կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դեպքում, ինչպես նաև այն եկամուտների հետ, որ բյուջեն կստանար: Այս հետազոտության հաշվարկները ցույց են տալիս, որ 2011-2013թթ. արտագաղթած միջին վիճակագրական մեկ հայաստանցու կրթության համար ծախսվել է առնվազն 3545 ԱՄՆ դոլարին համարժեք գումար:**

Մոտավոր գնահատումների համաձայն՝ խտրականության պատճառով 2011-2013թթ. Հայաստանից արտագաղթել է մոտ 5891 հայաստանցի, ինչը նշանակում է, որ ԼԳԲՏ արտագաղթողների՝ միայն կրթության գծով ներդրումների մասով հասարակությունը միանվագ կորցրել է մոտ 21 միլիոն դոլար:

Ինչ վերաբերում է ՀՆԱ-ի չստացված եկամուտներին, ապա հաշվարկների համաձայն՝ արտագաղթողի հեռանալուց մեկ տարվա ընթացքում 2011-2013թթ. Հայաստանը չի ստացել լրացուցիչ մոտ 15 հազար դոլար, ինչն այդ երեք տարիների բոլոր ԼԳԲՏ արտագաղթողների (5891) համար կազմում է 88 միլիոն, 365 հազար ԱՄՆ դոլար (5891*15000): Սա արտագաղթելուց միայն մեկ տարի անց հաշվարկվող վնասն է, սակայն իրականում այդ վնասն առկա է նաև արտագաղթողի՝ մինչև թոշակի անցնելն ընկած ժամանակահատվածի բոլոր տարիներին:

Իսկ բյուջեի եկամուտները 2011-2013 թթ. բոլոր 3 տարիներին միասին վերցրած կարող էին մոտ 20 միլիոն դոլարով մեծ լինել, եթե խտրականության պատճառով հեռացած ԼԳԲՏ անձինք մնային Հայաստանում: 2011-2013թթ. ԼԳԲՏ 5891 անձանց (այդ տարիներին ընդհանուր արտագաղթողների թվի 5%-ը) արտագաղթի արդյունքում պետական բյուջեն առաջիկա ավելի քան 36 տարիների ընթացքում (մինչև թոշակի անցնելը) կկորցնի մոտ 2 միլիարդ դոլար եկամուտ՝ 2014թ. հունվարի 1-ի գնողունակությամբ:

Առաջիկա 12 տարիներին 2014-2025թթ. (եթե ընդունենք, որ մոտակա տարիներին Հայաստանից արտագաղթի տեմպը կպահպանվի 2011-2013թթ. միջին տարեկանի չափով (39273 մարդ), ՀՆԱ աճը կլինի մոտ 5 տոկոս, իսկ PPP-ի գործակիցը կմնա անփոփոխ) ԼԳԲՏ անձանց արտագաղթի պատճառով ՀՆԱ-ն կունենա մոտ 3 միլիարդ դոլարի կորուստ՝ 2014-ի հունվարի մեկի գնողունակությամբ և PPP-ով ճշգրտված, իսկ բյուջեն՝ 370 մլն դոլար՝ հաշվարկված 2014-ի հունվարի մեկի գնողունակությամբ:

***

Աշխատաշուկայում խտրականության վերացումն այն կարևորագույն քայլն է, որը թույլ կտա պայքարել խտրականության դեմ նաև այլ ոլորտներում և դնել հասարակությանն առավել ժողովրդավար հիմքերի վրա: Երբ աշխատանքային շուկան միավորում է տարբեր հատկանիշներ

ունեցող մարդկանց՝ անկախ սեռից, ռասայից, կրոնական կամ սեռական պատկանելությունից, գենդերային ինքնությունից կամ սեռական կողմնորոշումից, նրանց մոտ առաջանում է ընդհանուր նպատակի զգացողություն:

Խտրականության մշտական առկայության պայմաններում և, որպես հետևանք՝ հասարակական բևեռացման պատճառով, հասարակությունները կարող են դառնալ ավելի աղքատ և շերտավորված, ինչը չի կարող չվնասել տնտեսական աճին, սոցիալական պայմանների բարելավմանը և հանրային առողջապահությանն ուղղված ծրագրերի հաջող իրականացմանը, ընդհակառակը՝ բազմազանությունն աշխատաշուկայում կարող է դարձնել բիզնեսն առավել եկամտաբեր ու մրցունակ, քանի որ նման բիզնեսները կարող են ավելի լավ ըմբռնել ու բավարարել տարբեր պահանջմունքներ ունեցող ամենատարբեր հաճախորդների ցանկությունները: Աշխատանքային հարաբերություններում խտրականության դեմ պայքարը կարող է նպաստել նաև մարդու իրավունքների ոտնահարումների դեպքերի նվազեցմանը, հասարակության տարբեր շերտերի միջև երկխոսության ծավալմանը՝ խոչընդոտելով սոցիալական լարվածության և տարբեր շերտերի միջև հակամարտության առաջացմանը և, ի վերջո, թույլ կտա պայքարել խտրականության բացասական հետևանքների դեմ և կնվազեցնի արտագաղթի տեմպերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

«Պետք է վստահ լինենք, որ ունենք չեզոք կամ լոյալ իշխանություն...

... որովհետև արդեն հնարավոր կլինի լինել գեյ, լեսբի,

տրանսգենդեր կամ բիսեքսուալ, և լինել հայ,

ՀՀ քաղաքացի ու ապրել Հայաստանում», – փորձագետ:

Հայաստանի հասարակության մեջ տարածված էմիգրացիոն վարքի բացատրությունները տարբեր են, սակայն դրանք հիմնականում ունեն մեկ ընդհանուր հիմք. էմիգրացիան անպաշտպանության հանդեպ քաղաքացիների վարքային արձագանքն է, ինչպես նաև հանդիսանում է երկրի խնդիրների հանդեպ բողոքի ձև: Ինչպես տեսանք վերլուծության մեջ, տնտեսական, և սոցիալ–հոգեբանական գործոններն ունեն առանձին կշիռներ և ենթակա են դրանց հաղթահարման թեև զուգակցված, սակայն առանձին գործողություններ՝ ինչպես պետական (որպես դոմինանտ քաղաքական կուրսի պատասխանատու), այնպես էլ ոչ պետական դերակատարների կողմից:

Հասկանալի է, որ տնտեսական դրության բարելավումը շատ ավելի բարդ և երկարատև գործընթաց է՝ հաշվի առնելով այս նպատակով ոչ միայն ներքին, այլև արտաքին խնդիրների հաղթահարման կարիքները (ասվածից չի հետևում, որ տնտեսական զարգացման քաղաքակա-նությունը երկրորդական է կամ անհնար է իրագործել): Այնինչ, արտագաղթի խթանիչ սոցիալ-հոգեբանական գործոնները շատ ավելի դյուրակառավարելի են պետական հաստատությունների համար՝ անհրաժեշտ նպատակադրման և պատասխանատու մոտեցման պայմաններում: Ուրեմն, հետևողական պետական քաղաքականության դեպքում մենք հնարավոր ենք համարում մարդկանց սոցիալ–հոգեբանական ճնշվածությունների հաղթահարումն ու Հայաստանից արտագաղթողների և արտագաղթի տրամադրությունների զգալի նվազեցումը կարճ ժամանակահատվածում, հատկապես ԼԳԲՏ մարդկանց շրջանում, որոնց համար առաջնահերթ էմիգրացիոն խթանիչները հենց սոցիալ-հոգեբանականի շարքում են:

Ինչպես վերևում տեսանք, ԼԳԲՏ մարդկանց արտագաղթի առանձնա-հատկություններից է նաև այն, որ դրա հետևանքով տնտեսական օգուտները տրանսֆերտային տեսքով խիստ սակավածավալ են և կարճաժամկետ: Հետևաբար սա այն սոցիալական խումբն է, որի արտա-գաղթն ի սկզբանե տնտեսական վնասներ է հասցնում հասարակությանը, որը կայուն տրանսֆերտային հոսքերով չի փոխհատուցվում[79]: Արտա-գաղթը ԼԳԲՏ մարդկանց համար հանդիսանում է փախուստի միջոց Հայաստանում առկա հոմոֆոբ մշակույթի հետևանք հանդիսացող բազմաթիվ խնդիրներից, որոնց լուծումը նրանք ի զորու չեն գտնել

[79] ԼԳԲՏ մարդկանց արտագաղթի պատճառով տնտեսական կորուստների քանակական ցուցանիշները մանրամասն տե՛ս Մաս 2, էջ 47

միայնակ: Որոշ ՀԿ–ներ, որ արդեն կայացած են և կանոնակարգված գործունեություն են վարում, աջակցում են ԼԳԲՏ մարդկանց իրավունքների և շահերի պաշտպանությանը, ապահովում են համայնքային կապեր, ինչը կրկին կարևոր է փոխաջակցության մեխանիզմների իրացման համար: Սակայն առանց պետական հաստատությունների նպատակադրված քաղաքականության և աջակցության՝ խնդիրները վերջնական լուծմանը մոտենալ չեն կարող:

ԼԳԲՏ ՄԱՐԴԿԱՆՑ ԷՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հիմնվելով մեր հետազոտության շրջանակներում հարցված փորձագետների դիտարկումների վրա՝ ստորև կներկայացնենք ԼԳԲՏ մարդկանց արտագաղթի ծավալները և տեմպերը նվազեցնելուն միտված պայմանները, որոնք անհրաժեշտ է ձևավորել և իրականացնել ինչպես պետական, հասարակական կազմակերպությունների, այնպես էլ ԼԳԲՏ մարդկանց համայնքային ու անձնական ուժերով:

Հոմոֆոբիայի նվազեցում

ԼԳԲՏ մարդկանց արտագաղթի նվազեցման համար հիմնարար մշակութային փոփոխության անհրաժեշտ պայման է հոմոֆոբիայի նվազեցումը: Սա մի խնդիր է, որ առկա է գրեթե բոլոր հասարակություններում, որտեղ գերակայում են հայրիշխանական մշակութային կառուցվածքները: Հայաստանի և մեր նման երկրների (մասնավորապես հետխորհրդային) դեպքում հոմոֆոբիայի տարածումն այն աստիճանի է, որ ընդգրկում է նույնիսկ քաղաքացիական գիտակցությամբ, իրավապաշտպան դիրքորոշումներ ունեցող շերտերին: Հետևաբար, սա խորապես և մշտապես աշխատելու ոլորտ է, որտեղ բոլոր հասարակական ինստիտուտները՝ թե՛ պետական, թե՛ ոչ պետական, անելիքներ ունեն:

«*Եթե ցանկանում ենք, որ ԼԳԲՏ անձիք չուզենան գնալ Հայաստանից, դրա համար պետք է մտածելակերպը փոխվի, հոմոֆոբիայի մակարդակը նվազի: Սակայն դա դժվար կլինի իջեցնել, քանի որ այն կաթի հետ են ծծում երեխեքը ու նման մարդ դառնում: Նույնիսկ այն մարդը, որ գնում, ցույց է անում գազի գնի թանկացման կամ այլ բանի դեմ, որ թույլ տաս, կսպանի ԼԳԲՏ ներկայացուցչին կամ կհայհոյի... Նրան պաշտպանողին էլ կհայհոյի*»:

«*Ի՞նչ գործոններ պետք է լինեն, որ ԼԳԲՏ մարդկանց ստիպեն Հայաստան վերադառնալ: Կամ այստեղ պետք է ավելի լավ աշխատանք, ավելի լավ վարձատրվող գործ գտնեն, որ գան, կամ պետք է բոլոր մյուս հավասար պայմանների դեպքում, գոնե չստորացվեն և չամաչեն իրենց ինքնությունից, ինչն այսօր բացակայում է*»:

«*DIY-ի դեպքը ցույց տվեց, որ մեր ժողովուրդը պատրաստ է երեխա սպանել, եթե հանկարծ այդ երեխան ասի, թե ինքը գեյ է: Եթե դա հնարավոր լինի կոտրել, գուցե և ինչ-որ բան փոխվի*»:

Անվտանգության երաշխիք պետության կողմից, արդար դատական համակարգ

Ամենից նշանակալի գործոնը, որ կապահովի հոմոֆոբիայի նվազեցումը և ԼԳԲՏ անձանց պաշտպանվածության զգացումը, պետական օրենսդրա-իրավական ոլորտի բարեփոխումները և դրանց պրակտիկ կիրառումները կարող են լինել: Մեր կողմից հարցված փորձագետների կարծիքով. «*Մարդու իրավունքների կարևորումը, ատելության քարոզի և բռնության դեպքերի, հետապնդումների իրավական պատժամիջոցներն իրական փոփոխություններ կբերեն*»:

Բացի այդ, չափազանց կարևոր են օրենսդրական դաշտի բացերի լրացումները, նոր օրենքների մշակումն ու ընդունումը, որոնք, օրինակ, կապահովեն խտրականության կանխարգելման և հաղթահարման մեխա-նիզմները և դրանց իրավական վիճարկման հնարավորությունները. *«Ունեցել ենք խտրականության դեպքեր, երբ դիմումատուն պնդել է, որ խտրականության հետևանքով նրան սահմանափակել են՝ լինի դա աշխատանքի վայրում, աշխատանքի ընդունման, թե աշխատանքից ազատման ժամանակ, գույքի հետ կապված վեճեր են եղել, ոստիկանությունում խնդիրներ, սակայն քանի դեռ մենք չունենք խտրականության կանխարգելման և հաղթահարման մեխանիզմներ, նույնիսկ չունենք խտրականության սահմանումներ մեր սահմանա-դրությունում, շատ դժվար է վիճարկել այդ գործողությունները»*:

ԼԳԲՏ մարդկանց իրավական պաշտպանվածությունը հնարավոր է պետության կողմից նպատակային քաղաքականության արդյունքում և պետահիրավական հաստատությունների՝ ոստիկանության և դատարան-ների նկատմամբ ԼԳԲՏ մարդկանց վստահության կառուցման պայմաններում:

«*Իսկ եթե ընդունվեն այնպիսի օրենքներ, որոնցով մարդիկ ավելի պաշտպանված կլինեն, որոնք կնպաստեն իրավունքների պաշտպա-նությանը, կոռուպցիայի վերացմանը, երբ երկիրն ավելի ժողովրդավար դառնա, միգուցե արտագաղթը նվազի: Բայց հիմա ամեն դեպքում գնալով շատանում է*»:

«Իրավիճակը կարող է փոխվել այն դեպքում, երբ ԼԳԲՏ անձինք իրենց ավելի ապահով և պաշտպանված զգան Հայաստանում: Նույնիսկ ամենազարգացած, ազատական երկրներում, որտեղ արդեն իսկ օրինականացված է նույնասեռականների ամուսնության ինստիտուտը, կա ատելություն, կան ատելության կոչեր, կան ֆաշիստական, նեո-ֆաշիստական խմբեր, ովքեր նրանց անընդհատ փորձում են հալածել, բայց ամենակարևորը՝ կա ադեկվատ, պատշաճ արձագանք պետության կողմից, իրավապահ մարմինների կողմից: Ապահով կյանքի ամբողջ գաղտնիքը, բանալին, ոչ միայն ԼԳԲՏ անձանց համար՝ ցանկացած անձի համար, պետական մարմնի անգործության բացառումն է: Եվ քանի դեռ մարդիկ չեն կարող ոստիկանությանը վստահել, գնալ ոստիկանություն հաղորդում ներկայացնել հանցագործության մասին, քանի դեռ նրանք դատարան չեն կարող գնալ, քանի դեռ նրանք չեն կարող դրա մասին հոդված տպագրել և հրապարակային ամոթանք տալ իրենց վիրավորողին կամ իրավունքը խախտողին, իրենք իրենց այստեղ ապահով չեն զգա: Ու հենց այդ անապահովությունն է մեծամասամբ պայմանավորում արտագաղթը: Դրա համար պետք է ուժեղացնենք հնարավորինս իրենց պաշտպանվածությունը Հայաստանում»:

«Պետք է վստահ լինենք, որ ունենք չեզոք կամ լոյալ իշխանություն, որը հասարակության այդ երկու՝ ավանդական կամ պահպանողական և մի քիչ ավելի առաջադեմ հատվածների մեջ կկանգնի՝ որպես իսկապես պահապան, կամ պաշտպան, կամ բացահայտ բախում չթույլատրող կողմ, ոչ թե կողմնակալ կողմ, որն իր հարցերն է լուծում: Այստեղ կարևորն այդ չեզոքությունն ունենալն է, որ թույլ չտանք, որ լարումն արյունահեղության վերածվի: Այս պարագայում, իհարկե, արտագաղթը որոշակիորեն կկանգնի, որովհետև արդեն հնարավոր կլինի լինել գեյ, լեսբի, տրանսգենդեր կամ բիսեքսուալ, և լինել հայ, ՀՀ քաղաքացի ու ապրել Հայաստանում»:

«Դրական առումով փոփոխություն տեսականորեն հնարավոր կլիներ, եթե Հայաստանում ստեղծվեին իշխանություններ, որոնք կհռչակեին մարդու իրավունքները և դրանց պաշտպանությունը գերիշխող արժեք: Եվ դա կլիներ ոչ թե ձևական, իմիտացիոն ժողովրդավարություն, այլ իսկական: Այդ դեպքում գուցե ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների արտահոսքը կնվազեր»:

«Կան երկրներ, որտեղ նմանատիպ վիճակ եղել է, բայց փոխվել է հակախտրական օրենքներ ընդունելով, արդար դատական համակարգ

ստեղծելով: Օրինակ, եթե ինչ-որ մեկին աշխատանքից հեռացնում էին այն պատճառով, որ ինքը գեյ է, դա հեռարձակվում էր ամբողջ հեռուստատեսությամբ, ցույց էին տալիս և դատավորը վճիռ էր կայացնում, որ գործատուն պարտավոր էր վճարել այդ գեյին, ասենք, 100.000 եվրո գումար: Հաջորդ գործատուն, մինչև նման բան անելը, կմտածի, արդյո՞ք ինքն ունի այդքան գումար»:

«*Եթե ԼԳԲՏ մարդը համոզված լինի իր անվտանգության մեջ այս երկրում, ապա չի գնա: Ընդհանուր առմամբ, եթե փոխվեն սոցիալ-տնտեսական պայմանները, մարդիկ զգան, որ կարող են իրենց դրսևորել, աճել, զարգանալ, առաջ գնալ, առողջ մրցակցային դաշտ լինի, կրթական և այլ համակարգերի փոփոխություն կլինի, այդ դեպքում կվերադառնան, եթե ոչ՝ ոչ: Եթե լինի ժողովրդավարություն, արդար դատական համակարգ, բարեփոխումներ, ապա՝ այո, կվերադառնան*»:

Տեղեկատվական քաղաքականություն, աշխատանք մեդիայի հետ

Տեղեկատվական քաղաքականության կառավարումը քիչ ծախսատար, արագ ազդեցության և արդյունավետ միջոցներից մեկն է հատկապես պետական հաստատությունների համար, քանի որ երբեմն պարզապես անհրաժեշտ է ոչ թե որևէ բան անել, այլ «չանել» ԼԳԲՏ մարդկանց հանդեպ: Խոսքը պետական պաշտոնյաների կողմից ԼԳԲՏ ատելության կոչերի կամ դրանց աջակցող հայտարարությունների բացառման և ՀՀ Սահմանադրության նկատմամբ հարգանքի մասին է: Միաժամանակ կարևոր է, որպեսզի պետական կամ հանրային միջոցներից ֆինանսավորում չստանան մեդիա նախագծեր, որոնք ԼԳԲՏ ատելության քարոզ են պարունակում կամ շրջանառում:

Իհարկե, ԼԳԲՏ ատելությանն աջակցություն կամ քարոզ «չանելուն» հասնելու համար, այնուամենայնիվ, հարկավոր են սիստեմատիկ քաղաքականությունների իրագործում: Այս հարցում պետական հաստատությունների և հասարակական սեկտորի համագործակցությունը կարող է բավարար արդյունավետ լինել՝ պետական հաստատությունների մեդիա պատասխանատուների և մեդիա հաստատությունների հետ աշխատանքներ տանելու առումով: «Սոցիոսկոպ» ՀԿ կողմից կատարված հետազոտության համաձայն իրավապաշտպանական թեմաները չնչին

կշիռ ունեն Հայաստանի մեդիադիսկուրսում[80]: Մեր կարծիքով անհրաժեշտ են լրագրողական դասընթացներ մարդու իրավունքների, մասնավորապես ԼԳԲՏ իրավունքների և իրավապաշտպանության տեսանկյունով լրագրության բացը լրացնելու համար: Միաժամանակ կարևոր է ԼԳԲՏ հարցերով գրագետ և բազմակողմանի մեդիաքննարկումների խրախուսումը և կազմակերպումը:

«Այդ փոփոխության համար շատ կարևոր է տեսանելիությունն ու տեղեկատվական հոսք ապահովելը: Այնպես, ինչպես հեռուստատեսությամբ, ինտերնետով, ռադիոյով անընդհատ խոսում են ցանկացած ինչ-որ թեմայի մասին տարբեր տեսանկյուններից, այնպես էլ այս պարագայում լինեն դեբատներ, լինի ինչ-որ հետաքրքիր պատմություն ինչ-որ մեկի կյանքից, լինի սերիալ, լինեն վիդեոներ, անընդհատ տեղեկատվական նյութ արտադրեն տարբեր մարդիկ տարբեր տեսանկյուններից ու մարդիկ ավելի շատ խոսեն, ավելի շատ հասկանան ու ավելի հստակ տեսնեն, թե ովքեր են գեյերը, ովքեր են լեսբիները, ինչ է իրենց ուզածը, ինչու նրանք չեն լռում, այլ շարունակում են խոսել»:

<u>*Այլընտրանքային ընտանիքի գաղափարի հանրայնացում*</u>

Հասարակական գիտակցության մեջ ԼԳԲՏ զույգերի լեգիտիմացման համար պայման կարող է լինել այլընտրանքային ընտանիքի ինստիտուտի շուրջ հանրային քննարկումների կազմակերպումը: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ օրենսդրորեն այլընտրանքային ընտանիքի ինստիտուտի հիմնումը դեռևս չի ապահովի հանրային ընդունելություն և, ընդհակառակը, կարող է ռեակցիոն և դիմադրող էֆեկտներ առաջացնել: Հետևաբար այս հարցում, կարծում ենք, մինչ օրենսդրական նորամուծություններ անելը, առաջին հերթին անհրաժեշտ է տեղեկատվական քաղաքականության իրագործումը, ինչպես նաև հասարակական, քաղաքացիական շրջանակների կողմից ԼԳԲՏ զույգերի լեգիտիմացման մեխանիզմների մշակումը և գործադրումը (ասենք, օրինակ, ԼԳԲՏ զույգերի ամուսնության քաղաքացիական ծեսի մշակում և ներմուծում):

«*Եթե իրավիճակը փոխվի, ավելի շատ մարդիկ խոսեն, այս հարցերը բարձրացնեն, մեդիայի հետ աշխատանք տարվի, ինչ-որ ալտերնատիվ ընտանիքներ հայտնվեն, մարդիկ, ովքեր ուրիշ ձևով են ապրում, այդ դեպքում ԼԳԲՏ մարդիկ չեն գնա երկրից*»:

---

[80] ԶԼՄ-ների հոդվածներում մարդու իրավունքների հիմնական խախտողը ոստիկանությունն է. զեկույց http://goo.gl/pp7mwx

«Նաև առանձնահատուկ խնդիր է, երբ, օրինակ, նույնասեռ զույգը միասին է ապրում: Նրանք լուրջ հոգեբանական խնդիրներ կարող են ունենալ, քանի որ հայտնվում են երկու քարի արանքում՝ իրենց նորաստեղծ նույնասեռ ընտանիքի և իրենց ծնողական ընտանիքի: Որովհետև կա մի նեղ միջավայր, որտեղ նրանք կարող են հանդես գալ որպես նույնասեռ զույգ, բայց իրենց ծնողական ընտանիքներում, ուրիշ ընկերական շրջապատում, հասարակական վայրերում ստիպված են լինում թաքցնել դա: Այդ հարցը գուցե կլուծվի, եթե միասեռ ամուսնությունների ինստիտուտը ներդրվի մեզ մոտ»:

Տեսանելիության մեծացում, սեփական շահերի քաղաքականացում և իրավունքների հետևողական պահանջատիրություն

ԼԳԲՏ մարդկանց արտագաղթը, ինչպես տեսանք, առկա բարդ խնդիրներից փախուստի միջոց է, այնինչ դրանով խնդիրների լուծումը տեղի է ունենում միայն մասնավոր մակարդակում: Հետևաբար երկրում համակարգային լուծումների համար անհրաժեշտ է նաև ԼԳԲՏ մարդկանց ակտիվ մասնակցություն՝ սեփական շահերի պաշտպանության և իրենց իրավունքների հետևողական ձեռքբերման գործում: Այս նպատակով որոշ փորձագետներ շատ կոնկրետ ձևակերպումներ են տալիս՝ ԼԳԲՏ մարդ-կանցից ակնկալելով սեփական քաղաքացիական և քաղաքական ուժի և կշիռի գիտակցում և դրանց գործադրում:

«Եթե դու չես փորձում ինչ-որ խնդիրներ լուծել, առերեսել կամ քեզ՝ որպես համայնք քաղաքականացնել, դու ընտրում ես փախուստի ճանապարհը»:

«Դե եթե չարտագաղթեն ու մնան պասիվ, դա ոչ մի փոփոխություն չի բերի, բայց եթե մնան ու լինեն ակտիվ, քաղաքականացնեն իրենց լինելիությունը, հասկանան, որ իրենց անձնականը քաղաքական է, ոչ թե դա իրենց նեղ անհատական խնդիրն է, ուրեմն այստեղ՝ Հայաստանում, իրենք կարող են հարցեր լուծել: Այստեղ մնացողը պետք է հասկանա, որ իրեն ինչ-որ ճանապարհ է սպասվում, դա իհարկե անհատական է, իրենք են որոշում, բայց պետք է հասկանան, որ այդ հարցերը չեն լուծվի, քանի դեռ հենց իրենք՝ այդ մարդիկ, իրենց խնդիրները չբարձրաձայնեն, չխոսեն դրա մասին»:

«Ինչքան խոցելի ես, ինչքան խնդիրներ ունես, այնքան քո շահն է այդ խնդիրները լուծելը, ինչ-որ բան փոխելը: ԼԳԲՏ համայնքի ճակատագրի վրա ազդելու է միայն ԼԳԲՏ համայնքի գործողությունները: Եթե դու

հեռանկարային ռազմավարական պլանավորում չունես քո համայնքի համար, ոչ մի բան էլ չի փոխվի»:

«*Այսօրվա Հայաստանում անգամ այն մարդիկ կամ կազմակերպությունները, որ իրենց մասին ասում են, թե հանդուրժողականության կողմից են կամ ԼԳԲՏ կազմակերպություն են, նախընտրում են ավելի փակ լինել, իրենք իրենց ներսում իրենց համար ու մյուս փոքր խմբերի հետ: Դա անվտանգության հարց է և այլն, բայց պետք է կամաց-կամաց այդ խխունջից դուրս գալ, տարբեր ուղղություններով քայլեր ձեռնարկել, որ փոփոխություններ լինեն*»:

Այս առումով, ըստ փորձագետների, առանձին անելիք ունեն ԼԳԲՏ հանդիսացող և հանրային ճանաչում ունեցող մարդիկ: Նրանց կողմից սեփական սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հանրային բացահայտումը կարող է մեծ դեր խաղալ հասարակական գիտակցության մեջ ԼԳԲՏ հանդեպ վերաբերմունքի փոփոխության հարցում: Սա, չափազանց ռիսկային իրադարձություն լինելով հանդերձ, Հայաստանի համար դեռևս սպասվող քայլ է, քանի որ մինչ այժմ ոչ մի ԼԳԲՏ հասարակական գործիչ, հայտնի կամ հանրային ճանաչում ունեցող անձ հրապարակավ չի բարձրաձայնել իր սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին:

«*Ինձ թվում է, որ հնարավոր է միտումը փոխվի 100%-ով ու կփոխվի այն դեպքում, երբ օրինակ, ինչ-որ մեկը գնա X-Factor հեռուստաշոու ու ասի, որ այսօր հոմոֆոբիայի ու տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրն է* (ժպտում է, խմբ.): *Կամ ինչ-որ մեկը, օրինակ, եթե բժիշկ է աշխատում 10 տարի, երբ արդեն փողի հետ կապված խնդիր չունի, իր այդ լավ բժշկի համբավով սկսում է բացահայտվել իր ընտանիքի անդամներին, իր ծանոթներին, ազգականներին: Ուրեմն, ամենամեծ պատասխանը տեսանելիությունն է: Եթե ես անտեսանելի եմ, դա նշանակում է ես գոյություն չունեմ: Ու եթե ես գոյություն չունեմ, ես պահանջելու իրավունք էլ չունեմ: Ու դրա համար է կարևոր, որ քո ազգականն իմանա քո մասին, որ կառավարությունը վերևից տեսնի, որ երկրի քաղաքացիների մեջ կա նաև այս խումբը, նման խնդիրներ ունեն ու պահանջներ են դնում: Իրադրությունը կփոխվի հատկապես այն դեպքում, երբ որ ավելի շատ բացահայտումներ լինեն, հոմոսեքսուալության մասին ավելի շատ խոսվի ու լինեն լավ կազմակերպված փոքր խմբեր, որ կաշխատեն, ավելի մեծ փոփոխություններ կբերեն՝ արվեստի միջոցով, գիտության միջոցով, ակտիվիզմի միջոցով, ամեն միջոցով*»:

«Շատ կան գրողներ, նկարիչներ, արվեստագետներ, որ հաստատ գիտեմ, որ գեյ են, բայց մինչև հիմա իրենք բացահայտ չեն խոսում այդ մասին: Ընդհանրապես այդ բացահայտման մշակույթը մեզ մոտ չկա ու դեռ երկար չի լինի, որովհետև եթե մեկը կանգնի բաց ասի, որ ինքը գեյ է, այնքան բանբասանքներ կսկսեն իր շուրջ հյուսել, այնքան կքարկոծեն, իսկ այն փոքր զանգվածը, որ լոյալ է, միևնույն է, ոչինչ չի ասի: Այսօրվա հասարակությունը բոլոր մարդկանց շատ խոցելի է դարձնում»:

«Մենք դեռևս չունենք նախադեպ, երբ մի հանրահայտ դեմք, հանրային հեռուստատեսությամբ բացահայտել է իր սեռական կողմնորոշումը... Չենք լսել, այսինքն՝ դա մի բան է, որ մեր հասարակությանը դեռ սպասվում է»:

ԼԳԲՏ ՄԱՐԴԿԱՆՑ ԷՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՆՎԱՔԵՑՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՔԱՅԼԵՐ

Ելնելով վերոնշյալ պայմանների ձևավորման անհրաժեշտությունից՝ տարբեր դերակատարներին առաջարկում ենք՝

Պետությանը (ՀՀ պետական մարմիններ, Կառավարություն, ԱԺ).

- Իրականացնել միասնական պետական քաղաքականություն՝ հիմք ընդունելով հասարակության կյանքի բոլոր ոլորտներում խտրականության բացառման սկզբունքը:
- Իրականացնել ՀՀ Կառավարության 2012-2017թթ. ծրագրով նախատեսված սոցիալական քաղաքականությունն ու մարդկային կապիտալի զարգացումը՝ հիմք ընդունելով հասարակության խոցելի խմբերի, տվյալ դեպքում ԼԳԲՏ անձանց նկատմամբ տարբեր ոլորտներում խտրականության բացառման սկզբունքը:
- Ընդունել խտրականության արգելման մասին առանձին օրենսդրություն, որը կբացառի այս կամ այն հատկանիշով պայմանավորված խտրականությունն աշխատաշուկայում և կյանքի այլ ոլորտներում, կապահովի հավասար իրավունքներ և հնարավորություններ բոլորի համար:
- Ընդունել օրենքի կիրարկման գործուն մեխանիզմներ: Հակախտրական օրենսդրությունն, իհարկե, անհրաժեշտ է, սակայն բավարար չէ և առանց գործուն մեխանիզմների խտրականությունը հենց այնպես չի վերանա:
- Օրենքներ և այլ իրավական ակտեր ընդունելիս հիմք ընդունել խտրականության բացառման սկզբունքը՝ որպես մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման հիմնարար կանոն:

Տեղական և միջազգային ձեռնարկություններին.

- Ձեռնարկությունների ներքին կանոնակարգերում հստակ ամրագրել այս կամ այն հատկանիշով խտրականության բացառումը, աշխա-

տողների նկատմամբ խտրական վերաբերմունքի հետևանքները և ղեկավարների պաշտոնական լիազորությունների չարաշահման դեպքում ձեռնարկել համապատասխան քայլեր:

- Աշխատակիցների շրջանում տանել խտրականության հետևանքների վերաբերյալ բացատրական աշխատանքներ, կազմակերպել փոխ-օգնության խմբեր, խրախուսել թիմային աշխատանքները:

Հասարակական կազմակերպություններին և քաղաքացիական նախաձեռնություններին.

- Ձատագովել և խթանել ՀՀ-ում հակախտրական օրենսդրության ընդունումը:
- Բարձրացնել հանրության իրազեկվածությունը խտրականության, դրանից բխող բացասական հետևանքների և խտրականության բացառման և հավասարության սկզբունքների կարևորության մասին:
- Ապահովել այլընտրանքային հարթակ՝ տեղեկացնելու, քննարկելու մարդու իրավունքերի, խտրականության, հանդուրժողականության թեմաները:
- Քաղաքացիական նախաձեռնություններին՝ կազմել արհմիություններ՝ աշխատողների իրավունքների պաշտպանության և աշխատա-վայրում տարատեսակ խտրականության դեմ պայքարելու համար:

Մեդիային.

- Բարձրացնել հանրային իրազեկվածությունը ԼԳԲՏ հիմնահարցերի, նրանց նկատմամբ առկա խտրականության վերաբերյալ:
- ԼԳԲՏ անձանց կամ նրանց խնդիրների մասին բարձրաձայնելիս ձայն տալ նաև համայնքի անդամներին և թույլ տալ նրանց արտահայտվել:
- Խուսափել պիտակավորող, խարանող և խտրական արտահայտու-թյուններից և որակումներից:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ

Խտրականության առաջնային իմաստը իրավահավասարությունից զրկում, իրավունքների սահմանափակում, տարբերակում, տարանջատումն է:

Խտրականություն (դիսկրիմինացիա) բառն առաջացել է լատիներեն **discernere** բառից (տարանջատել, ընդգծել). **dis**՝ առանձին, մասնատ, **cernere**՝ մաքրազերծել:

Խտրականություն: Տարբերակման, բացառման, սահմանափակման կամ նախապատվության դրսևորում, որը նպատակ է հետապնդում կամ հանգեցնում է անձի և/կամ մի խումբ անձանց համար նվազ բարենպաստ իրավիճակի ստեղծմանը՝ կախված անձի սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից, սեռական կողմնորոշումից կամ գենդերային ինքնությունից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

Խտրականության տեսակներ: Միջազգային իրավունքով ճանաչված խտրականության հիմնական տեսակներն են՝ ուղղակի խտրականություն, անուղղակի խտրականություն, խտրականության հրահրում, ասոցացված խտրականություն, վիկտիմիզացիա, հետապնդում:

Ուղղակի խտրականություն: Խտրականության արգելքի հիմքերից մեկով անձի և/կամ անձանց նկատմամբ տարբերակված մոտեցում նույնանման իրավիճակում գտնվող այլ անձի համեմատ՝ անկախ դիտավորության առկայությունից:

Անուղղակի խտրականություն: Առերևույթ չեզոք գործողություն կամ անգործություն, իրավական նորմ, չափանիշ կամ պրակտիկա, որի իրականացման կամ կիրառման դեպքում առաջանում է կամ կարող է առաջանալ նվազ բարենպաստ իրավիճակ անձի և/կամ մի խումբ անձանց համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի գործողությունը կամ անգործությունը, իրավական նորմը, չափանիշը կամ պրակտիկան օբյեկտիվորեն արդարացված է, հետապնդում է իրավաչափ նպատակ, և

այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցները համաչափ են, նպատակահարմար և անհրաժեշտ:

Խտրականության հրահրում: Որոշակի հատկանիշներով անձի և/կամ մի խումբ անձանց նկատմամբ խտրականության դրսևորման հրահանգներ, ցուցումներ կամ կոչեր:

Ասոցացված խտրականություն: Անձի նկատմամբ խտրական դրսևորում, որը պայմանավորված է նրան մեկ այլ անձի հետ ասոցացնելու հետ՝ կախված վերջինիս սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից, սեռական կողմնորոշումից կամ գենդերային ինքնությունից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

Վիկտիմիզացիա: Ցանկացած գործողություն կամ անգործություն անձի նկատմամբ, որն ունի բացասական հետևանք նրա վրա և որը պայմանավորված է այն հանգամանքով, որ անձը բողոքել է խտրականության դեմ, հայցել իրավական պաշտպանության միջոց կամ տրամադրել է տեղեկատվություն իր կամ այլ անձի նկատմամբ խտրականության վերաբերյալ:

Հետապնդում: Անձի և/կամ մի խումբ անձանց համար ցանկացած անցանկալի վարքագիծ, որը նպատակ է հետապնդում կամ հանգեցնում է անձի և/կամ մի խումբ անձանց արժանապատվությունը վիրավորելուն, ահաբեկող, թշնամական, վիրավորական կամ մերժողական միջավայր ստեղծելուն:[81]

---

[81] Հասկացությունների սահմանումները վերցված են Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) մարմինների, մասնավորապես *ՄԱԿ-ի Փախստականների* հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի պաշտոնական փաստաթղթերից, Միգրացիայի միջազգային կազմակերպության, Եվրոպայի Խորհրդի պաշտոնական փաստաթղթերից, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից:

Ժամանակակից շուկայական տնտեսությունում առանձնացվում են աշխատանքային խտրականության հետևյալ տեսակները.

- **Աշխատավարձի չափով պայմանավորված խտրականություն:** Գրեթե բոլոր երկրներում նույն մասնագիտական ու աշխատանքային հնարավորություններ ունեցող ու նույն աշխատանքային ստաժով երկու աշխատողներ նույն ոլորտում, կամ, նույնիսկ, նույն կազմակերպության մեջ հաճախ կարող են ստանալ տարբեր չափի աշխատավարձ նույն աշխատանքի կատարման համար: Առավել հաճախ խտրականության ենթարկվող խմբերն են՝ կանայք՝ տղամարդկանց համեմատությամբ, սևամորթ անձինք՝ սպիտակամորթների համեմատությամբ, տեղացիները՝ եկվորների համեմատությամբ:
- **Աշխատանքի ընդունման և ազատման ժամանակ խտրականություն:** Նմանատիպ խտրականության հիմնականում ենթարկվում են որոշակի դատվածություն ունեցող անձինք, հաշմանդամություն ունեցող անձինք, թերի մասնագիտական որակավորում ունեցող կամ աշխատանքային փորձ չունեցող երիտասարդությունը. նրանց վերջինն են ընդունում աշխատանքի և առաջինը՝ ազատում:
- **Աշխատանքային զարգացման խոչընդոտում:** Խտրականության ենթարկվող աշխատողներն առավել դժվար են կառուցում իրենց աշխատանքային կարիերան, նրանց չափազանց դժվարությամբ են նշանակում նոր պաշտոնների կամ խրախուսում՝ լավ աշխատանք կատարելու համար: Նմանատիպ խտրականության հաճախ ենթարկվում են կանայք, ներգաղթյալները, ազգային, կրոնական ու սեռական փոքրամասնությունները, բայց այս կարգավիճակում կարող են հայտնվել նաև այլ խմբեր:
- **Մասնագիտական սեգրեգացիա:** Այսպես, կան տիպիկ «տղամարդկային» և «կանացի» մասնագիտություններ:
- **Կրթությամբ և մասնագիտական պատրաստվածությամբ պայմանավորված խտրականություն:** Հաճախ նույնիսկ զարգացած երկրներում որոշակի խմբեր հանդիպում են տարատեսակ խոչընդոտների կրթություն ստանալու և մասնագիտական հմտություններ ձեռք բերելու ճանապարհին. նրանք կարող են գումար չունենալ վճարելու համար կրթության հետ կապված ծախսերը, ավելի քիչ են վարձատրվում: Բազմաթիվ երկրներում կանանց կրթվածության մակարդակն ավելի ցածր է, քան քան տղամարդկանց կրթվածության մակարդակը:

Սույն զեկույցը պատրաստվել է «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» և ««Սոցիոսկոպ» հասարակագիտական հետազոտություն-ների և խորհրդատվության կենտրոն» ՀԿ-ների կողմից:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր անհատներին և կազմակերպություններին, ովքեր աջակցել են նախագծի իրականացմանը, հարցմանը մասնակից 15 փորձագետներին, ովքեր համագործակցեցին մեզ հետ՝ տրամադրելով իրենց ժամանակը, փորձը և գիտելիքները: Շնորհակալ ենք նաև անկախ հետազոտողներին՝ զեկույցը վերանայելու և մասնագիտական առաջարկություններ անելու համար:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում կացարանի, ապաստարանի և միգրացիայի հարցերով զբաղվող ORAM կազմակերպությանը՝ տեղեկատվական աջակցության համար:

Սույն զեկույցը պատրաստվել և հրապարակվել է Նորվեգիայի Արտաքին գործերի նախարարության և «Զիգրիդ Ռաուզինգ Թրասթ» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

www.pinkarmenia.org

Հանրային տեղեկատվություն
և գիտելիքի կարիք ՀԿ
Երևան, 2015թ.